

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

---

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵՂՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА  
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

**ԼԵՂՈՒ**

**ԵՎ**

**ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

•

**ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ**

**LANGUAGE AND LINGUISTICS**

1(28)

2023



**ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN**

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:  
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

### **Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.**

#### **Խմբագրական խորհուրդ**

Ավետիսյան Յու. Ս., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Գալստյան Ա. Վ., Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Գ. Կ., Կատվալյան Վ. Լ., Հովհաննիսյան Գ. Ռ., Հովհաննիսյան Լ. Շ., Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Մոլոդնիչենկո Ե. (ՌԴ), Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սիմոնյան Ն.Մ.(գլխավոր խմբագրի տեղակալ), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա)

### **Главный редактор Амбарцумян В. Г.**

#### **Редакционная коллегия**

Аветисян Ю. С., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора), Галстян А. В., Катвалян В. Л., Молодниченко Е. (РФ), Мохаммади М. М. (ИРИ), Оанисян Г. Р., Оганесян Л. Ш., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного редактора), Тонапетян-Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К.

### **Chief Editor Hambarzumyan V. G.**

#### **Editorial Board**

Avetisyan Yu. S., Brutyan L. G., Donabédian-Demopoulos A. (France), Galstyan A. S. (deputy chiefeditor), Galstyan A. V., Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L., Khachatryan G. K., Mohammadi M. M. (Iran), Sargsyan M. A. (editorial secretary), Simonyan N. M. (deputy chiefeditor), Tragut J. (Austria).

ISSN 1829-0183

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն 2023

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԸ ԱՐԴԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼ  
ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Ավագ գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ

meri.sargsyan@isec.am

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-3

**Համառոտագիր**

Սույն հոդվածում ներկայացվում են հայ լեզվաբանության նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Էդուարդ Աղայանի գիտական գործունեության առանցքային ուղղությունները՝ զուգակցված կենսագրական իրադարձություններով: Է. Աղայանը թողել է գիտական հարուստ ժառանգություն, անդրադարձել է լեզվաբանության գրեթե բոլոր ոլորտների քննությանը՝ ընդհանուր լեզվաբանություն, հայ լեզվաբանության պատմություն, հայոց լեզվի պատմություն, համեմատական քերականություն, բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզու, Արևելքի գրականության պատմություն և այլն: Նա, իսկապես, հայ լեզվաբանության մեծ երախտավորներ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գր. Ղափանցյանի, Ստ. Մալխասյանցի գործի արժանավոր ու հետևողական շարունակողներից է, հայագիտության հայրենանվեր ավանդների անընդհատությունը սրբությամբ պահպանողներից մեկը: Աղայանի գիտական ժառանգությունը հավերժ լինելու է տարբեր սերունդների ուսումնասիրության և հետազոտության նյութ, լեզվաբանական նյութի աղայանական մատուցմամբ սկսնակ լեզվաբանները մուտք են գործելու լեզվաբանության մեծ աշխարհ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ՝** Էդուարդ Աղայան, հայ լեզվաբան, գիտական ժառանգություն, լեզվաբանություն, հայագիտություն:

**EDUARD AGHAYAN: A DISTINGUISHED ALTRUIST IN THE  
FIELD OF ARMENIAN STUDIES**

**MERI SARGSYAN**

RA NAS Language Institute

Senior Researcher, Ph.D., Associate Professor

meri.sargsyan@isec.am

**Abstract**

This article delineates the principal thematic domains of Eduard Aghayan's scientific pursuits, casting a comprehensive light on the career and biographical trajectory of this

eminent figure in the field of Armenian linguistics. E. Aghayan left a rich scientific legacy, that encompasses a broad spectrum of linguistic subdisciplines, inclusive of general linguistics, the historical evolution of Armenian linguistics, the diachronic development of the Armenian language, comparative grammar, dialectology, modern Armenian language, and the historical trajectory of Eastern literature. In the annals of Armenian linguistics, Eduard Aghayan emerges as a steadfast and commendable inheritor of the profound contributions of notable luminaries such as H. Acharyan, M. Abeghyan, Gr. Ghapantsyan, and Malkhasyants, thereby exemplifying a reverent perpetuation of the hallowed tradition of Armenian scholarship. The scholarly opus left behind by Aghayan shall eternally remain a subject of scholarly inquiry and exploration across successive generations. Through his meticulous elucidation of linguistic materials, Eduard Aghayan opens the gateway for burgeoning linguists to embark upon the expansive realm of linguistics.

**Keywords and phrases:** Eduard Aghayan, Armenian linguist, scientific heritage, linguistics, Armenian studies.

**ЭДУАРД АГАЯН: ВЫДАЮЩИЙСЯ СОЗИДАТЕЛЬ В ОБЛАСТИ  
АРМЕНОВЕДЕНИЯ  
МЕРИ САРГСЯН**

Институт языка НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н., доцент

meri.sargsyan@isec.am

**Аннотация**

В данной статье рассматриваются основные тематические направления научной деятельности Эдуарда Агаяна, что позволяет всесторонне осветить карьерную и биографическую траекторию этого выдающегося деятеля армянского языкознания. Э. Агаян оставил богатое научное наследие, охватывающее широкий спектр лингвистических субдисциплин, в том числе общее языкознание, историческую эволюцию армянского языкознания, диахроническое развитие армянского языка, сравнительную грамматику, диалектологию, современный армянский язык, историческую траекторию развития восточных литератур. В анналах армянского языкознания Эдуард Агаян предстает как последовательный и достойный наследования глубокий вклад таких выдающихся деятелей, как Г. Ачарян, М. Абемян, Г. Капанцян, С. Малхасянц, являя собой пример благоговейного увековечивания священных традиций армянской науки. Оставленный Агаяном научный опус навечно останется предметом научных поисков и исследований последующих поколений. Своим скрупулезным изложением лингвистических материалов Эдуард Агаян открывает дорогу начинающим лингвистам в обширную сферу языкознания.

**Ключевые слова и словосочетания:** Эдуард Агаян, армянский лингвист, научное наследие, лингвистика, арменоведение.

«Կար մի տղա՝ մազափունջը ճակատին ընկած, ինձ միշտ հարց էր տալիս. «Պրոֆեսոր, ֆրանսերեն այս բառը ինչպե՞ս է»: Բարկանում էի՝ մտածելով, որ սա մյուս տղայի նման իմ գիտելիքը կասկածի տակ է վերցրել: Բարկանում էի, բայց հարցին պատասխանում էի: Ու մի օր էլ տղան եկավ ինձ մոտ՝ ասելով, որ ինքը ֆրանսերեն է սովորել ու թարգմանել մի տեքստ, խնդրեց, որ ինքը կարդա, ես ստուգեմ, կարդաց ու թարգմանեց: Երբ հարցրի, թե ֆրանսերեն ումից և երբ է սովորել, ասաց. «Պրոֆեսոր, այդ Դուք ինձ սովորեցրիք, շնորհակալություն, կներեք, որ Ձեզ հաճախ անհանգստացնում էի»: Այս ժամանակ վեր կացա, ձեռքս դրի սրտիս ու ասացի. «Այդ ես պետք է ներողություն խնդրեմ, որ քո մասին վատ բան եմ մտածել և դժկամորեն եմ պատասխանել», - այսպես է արտահայտվել լեզվաբանության և հայագիտության հսկաներից մեկը՝ Հրաչյա Աճառյանը, մեկ այլ հսկայի մասին: Բանիմաց ու խելացի երիտասարդն անմիջապես վայելում է Աճառյանի վստահությունն ու համակրանքը, և հենց այս հանգամանքը դառնում է ճակատագրական ապագա լեզվաբանի համար: Հենց Աղայանին է վստահում իր ձեռագրերի խմբագրման աշխատանքները Աճառյանը. և հենց այդ ժամանակից ի վեր է. Աղայանը հաղորդակից է դառնում հայագիտական պայծառ գաղափարներին ու տարվում դրանցով:

Էդուարդ Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին: Ծնունդով սյունեցի է՝ Մեղրի քաղաքից: Սովորել է տեղի յոթնամյա դպրոցում, այնուհետև՝ ուսումնարանում: Հետաքրքրական է, որ անվանի լեզվաբանն իր երիտասարդ տարիներին աշխատել է որպես հաշվապահ Մեղրու «Նոր կյանք» կոլտնտեսությունում: Մաթեմատիկական այդ մտածողությունն իր անմնացորդ հետքն է թողել լեզվաբանի հայացքներում՝ դրսևորվելով լեզվի կառուցվածքային քննության մեջ: Դեռ վաղ տարիներից Աղայանին գրավել է նաև կրթական գործունեությունը: Իր մանկավարժական գործունեությունը սկսել է Լիճք գյուղի յոթնամյա դպրոցում, որն էլ հետագայում անվանակոչվել է մեծ գիտնականի անունով: Կրթության և գիտության նկատմամբ մեծ սերն Աղայանին ուղղորդում է դեպի Երևանի պետական համալսարան, և 1933 թվականին նա դառնում է պատմագրական ֆակուլտետի ուսանող: Աղայանն առանձնանում է որպես փայլուն և պարտաճանաչ ուսանող, լեզուների մեծ սիրահար: 1941 թ. պաշտպանում է թեկնածուականատենախոսություն՝ իր մայրենի բարբառի

թեմայով, իսկ ընդամենը 4 տարի անց՝ դոկտորական ատենախոսություն («Հայ լեզվաբանության պատմություն» թեմայով):

Իր կյանքի 78 տարիների ընթացքում է. Աղայանը հասցրել է զուգակցել գիտական, կրթական, վարչական, հասարակական աշխատանքները՝ միևնույն ժամանակ իրեն չզրկելով աշխարհիկ կյանքի վայելքներից: Աղայանի գիտական ու կրթական գործունեությունը մինչև կյանքի վերջը կապված է եղել Երևանի պետական համալսարանի և ՀՀ Գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հետ: Եղել է ԵՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագիր, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱ Հրայր Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փոխտնօրեն, այնուհետև՝ Ընդհանուր լեզվաբանության բաժնի վարիչ, 3 տասնամյակ ղեկավարել է ԵՊՀ ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնը:

Զբաղեցրել է վարչական բարձր պաշտոններ՝ ՀԽՍՀ լուսավորության նախարարության բուհերի բաժնի վարիչ, ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի գծով գիտական աստիճաններ շնորհող գիտական խորհրդի նախագահ, ՀՀ Գերագույն խորհրդի 1980 և 1985 թթ. գումարումների պատգամավոր:

Է. Աղայանը թողել է գիտական հարուստ ժառանգություն: Իր գիտական գործունեության ընթացքում անդրադարձել է լեզվաբանության գրեթե բոլոր ոլորտների քննությանը՝ ընդհանուր լեզվաբանություն, հայ լեզվաբանության պատմություն, հայոց լեզվի պատմություն, համեմատական քերականություն, բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզու, Արևելքի գրականության պատմություն և այլն:

Ինչպես իր կյանքի վաղ տարիներին, այնպես էլ տարիների հեռվից ակադեմիկոս Աղայանը բարձր է գնահատել կրթության դերը անձի կայացման գործում և իր անմնացորդ ներդրումն է ունեցել ոչ միայն որպես մեծ ուսուցիչ ու դասախոս, այլև որպես դասագրքաստեղծ մասնագետ: Աղայանի թե՛ դպրոցական, թե՛ բուհական դասագրքերը ցայսօր չեն կորցրել իրենց արդիականությունը և սեղանի գիրք են մասնագետ-ուսուցիչների և ուսանողության համար: Լեզվաբանական կրթություն ստացած և ստացող ցանկացած ուսանող կփաստի, որ լեզվաբանության անձայրածիր ոլորտը բացահայտել, տարբեր լեզուների փոխառնչություններին առաջին անգամ հաղորդակից է դարձել հենց Աղայանի «Լեզվա-

բանության ներածություն» և «Լեզվաբանության հիմունքներ» դասագրքերի միջոցով: Այս ձեռնարկներով է բուհական միջավայրում առաջին կուրսեցին ստանում լեզվաճանաչողության առաջին դասերը: Տարիների ընթացքում հեղինակը վերահրատարակել է այս դասագրքերը, ավելին՝ խորհրդային տարիներին այն ռուսերեն թարգմանությամբ կիրառվել է նաև Խորհրդային Միության տարածքում՝ ԽՍՀՄ բարձրագույն կրթության նախարարության կողմից երաշխավորվելով որպես միութենական բուհական դասագիրք: «Լեզվաբանության հիմունքներ» դասագիրքը կարծես լրացնում է «Լեզվաբանության ներածություն» դասագրքում եղած նյութը, հանրամատչելի ձևով ուսանողին է ներկայացնում լեզվաբանության խրթին դրույթները, բացահայտում տարբեր լեզուների ցեղակցական կապերը, գրի ստեղծման և զարգացման փուլերը, լեզվաբանության ուսումնասիրության առարկայի համակողմանի, բայց միևնույն ժամանակ հանրամատչելի նկարագրությունը, ներկայացնում լեզվի ծագման և կառուցվածքի հարցերը և այլն [4; 10]: Նույնպիսի ոճով են գրված նաև Աղայանի դպրոցական դասագրքերը: Այժմ այդ դասագրքերին փոխարինելու են եկել նորերը, ժամանակակիցները, բայց պետք է նշել, որ ցայսօր տարբեր դպրոցների ուսուցիչներ օգտվում են քերականական նյութը ներկայացնելու աղայանական մեթոդից, նրա կազմած վարժություններն ընդգրկում թեստային բազմապիսի առաջադրանքների մեջ:

Դեռևս պատանեկության տարիներից մաթեմատիկական փայլուն մտածողությամբ երիտասարդը չէր կարող սահմանափակվել մեկ լեզվի ուսումնասիրությամբ: Տրամաբանական և դատողական միտքը գիտնականին մղեց դեպի ընդհանուր լեզվաբանության հարցերի քննության ոլորտ: Այս ոլորտի հետազոտական և դասախոսական աշխատանքի արդյունքը դարձան մի շարք աշխատություններ, ինչպես, օրինակ, «Ընդհանուր լեզվաբանության դասընթաց» [3], իսկ հետագայում, նյութը համալրելով նոր փաստերով ու ճշգրտումներով, հեղինակը ներկայացրեց նոր աշխատություններ՝ «Լեզվաբանության ներածություն» [4], «Լեզվի ծագումը և զարգացումը» [6], «Որակական անցումները լեզվի մեջ» [8], «Լեզվական կառուցվածքի մակարդակը» [5]: Այս աշխատություններում անցյալի ձեռքբերումների կողքին երևում է Աղայան հետազոտողի դիմագիծը: Լեզվաբանական ինքնատիպ դիտարկումներ է ներկայացնում հեղինակը հատկապես լեզվի էության վերաբերյալ: Է. Աղայանի բոլոր աշխատություններում լեզուն առաջին հերթին ներկայացվում է որպես

հասարակական երևույթ, և ըստ այդմ էլ՝ լեզվաբանությունը որպես հասարակական գիտություն [10]: *Լեզվի կառուցվածքային մակարդակներին* անդրադառնալիս հեղինակը լեզվաբանությունը ներկայացնում է որպես առանձին, մասնավոր գիտակարգերի միասնություն, որն էլ հանդես է գալիս իր բաժիններով [5]: Որպես հասարակական երևույթ՝ հեղինակի գնահատմամբ լեզվի ամենակարևոր և էական գործառույթը հաղորդակցականն է, ավելին՝ հաղորդակցման բոլոր միջոցներից վեր է դասում լեզվի միջոցով հաղորդակցումը՝ հաղորդակցման միջոցների մեջ ամենակարևորը: Դժվար չէ նկատել, որ հաղորդակցական գործառույթի նման շեշտադրմամբ հեղինակը լեզուն պետք է համարեր մարդկային ձեռքբերում, որը ձևավորում է մտածողությունը, ծառայում է հասարակության բոլոր շերտերին, և դրանով իսկ ստանում համաժողովրդական բնույթ:

*Լեզուն որպես կառուցվածք և համակարգ* ներկայացնելիս Աղայանը հակված է այն համարել համակարգված կառուցվածք, քանի որ ունի նշանային բնույթ, բացի այդ որպես համակարգ ունի իր տարբերակները՝ տարածական, սոցիալական և ոճական-գործառական: Յուրաքանչյուր տարբերակի համար հեղինակն առանձնացնում է ենթատարբերակներ, ինչպես, օրինակ՝ տարածականի մեջ՝ բարբառներ, ենթաբարբառներ, խոսվածքներ, սոցիալականի մեջ՝ ժարգոններ, ծածկալեզուներ, պաշտամունքային լեզուներ, հասակի ու սեռի հետ կապված տարբերակներ, ոճական-գործառականի մեջ՝ գրական-գեղարվեստական, գիտական, մասնագիտական, պաշտոնական և խոսակցական՝ գրական խոսակցական և ժողովրդախոսակցական: Լեզվական տարբերակների այս դասակարգումը լայնորեն կիրառվում է ցայսօր [10]:

Աղայանը, քաջածանոթ լինելով համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացմանը և պատմությանը, չէր կարող չանդրադառնալ ընդհանուր լեզվաբանական կարևոր թեմաներից մեկին՝ *լեզվական մակարդակների քննությանը*: Աղայանն ընդունում է լեզվական հետևյալ մակարդակները՝ տարրության, հնչույթային, բառային, ձևաբանական, շարահյուսական, ստորոգային:

*«Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը»*, *«Գրաբարի քերականությունը»*, *«Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում»* աշխատություններում ներկայացվում է հայերենի զարգացման տարբեր փուլերի կառուցվածքային քննությունը՝ հնչյունականից



մինչև քերականական: «*Ընդհանուր և հայկական բառագիտություն*» աշխատության մեջ հեղինակն անդրադառնում է բառագիտական զանազան հարցերի քննությանը՝ թե՛ զուտ բառագիտական, թե՛ իմաստաբանական, թե՛ դարձվածաբանական: Աղայանի բառապաշարային դասակարգումները մինչ օրս կիրառվում են ուսումնական ձեռնարկներում [2]:

Աղայանի գիտական գործունեության անքակտելի մասն են կազմում տերմինաբանական հետազոտությունները: «*Տերմինագիտություն*» աշխատության մեջ ներկայացնում է տերմինագիտական իր դիտարկումները, կատարում դասակարգումներ, քննում տերմինների կազմության հարցեր [9]:

Աղայանի գործունեությունը կարելի էր լիարժեք ու համապարփակ համարել, եթե նույնիսկ նա զբաղվեր միայն բառարանագրական գործունեությամբ, որն ահռելի ջանք, եռանդ ու հետևողական աշխատանք պահանջող, ժամանակատար գործ է: Նրա «*Արդի հայերենի բացատրական բառարանը*», որ պարունակում է 135 հազար բառային միավոր, մինչ օրս ամենակիրառական բառարաններից է հայ լեզվաբանի համար [1]:

«*Հայերենի հնչույթային համակարգի պատմությունից*», «*Հայոց լեզվի պատմության հարցերը նորագուն ուսումնասիրությունների մեջ*», «*Ժամանակակից հայերենի բառապաշարի կարարելագործումը*», «*Գրաբարի պատմության շրջանաբաժանումը*» աշխատություններում Աղայանն ընդգծվում է որպես հայոց լեզվի պատմության փայլուն գիտակ: Այստեղ քննում է հայերենի ծագման, զարգացման հարցեր, հասնում մինչև զարգացման նոր փուլեր:

«*Հայ լեզվաբանության պատմություն*» երկհատոր ուսումնասիրությունն Աղայանի այն աշխատություններից է, որոնք երիտասարդ լեզվաբանի սիրելի գրքերի շարքում են: Հայ լեզվաբանական միտքը ներկայացվում է իր զարգացման ակունքներից մինչև Աղայանի օրերը [7]:

Աղայան-գիտնականի գործունեությունը չի սահմանափակվել միայն լեզվաբանության սահմաններով: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել նաև հայ գրականության և հայ ժողովրդի պատմության հարցերը: Հետաքրքրական են հատկապես նրա դիտարկումները Արևելքի ժողովուրդների գրականության վերաբերյալ:

Նա, իսկապես, հայ լեզվաբանության մեծ երախտավորներ Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գր. Ղափանցյանի, Ստ. Մալխասյանցի գործի

արժանավոր ու հետևողական շարունակողներից է, հայագիտության հայրենանվեր ավանդների անընդհատությունը սրբությամբ պահպանողներից մեկը:

Անկասկած կարող ենք փաստել, որ Է. Աղայանն իր մեծ ուսուցչի արժանի աշակերտն է, նրա գիտական և մասնագիտական որակների լիարժեք ժառանգը: Աղայանի գիտական ժառանգությունը հավերժ լինելու է տարբեր սերունդների ուսումնասիրության և հետազոտության նյութ, լեզվաբանական նյութի աղայանական մատուցմամբ սկսնակ լեզվաբանները մուտք են գործելու լեզվաբանության մեծ աշխարհ:

### **Գրականության ցանկ**

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:
2. Աղայան Է., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, 371 էջ:
3. Աղայան Է., Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 1947, 280 էջ:
4. Աղայան Է., Լեզվաբանության ներածություն, Ե., 1952, 634 էջ:
5. Աղայան Է., Լեզվական կառուցվածքի մակարդակները, «Բանբեր Երևանի համալսարանի. հաս. գիտ.», 1967, № 1, էջ 73-95:
6. Աղայան Է., Լեզվի ծագումը և զարգացումը ,Ե., 1948, 59 էջ:
7. Աղայան Է., Հայ լեզվաբանության պատմություն (Սկզբից մինչև մեր օրերը), հ.1-2, Ե., 1958-1960, 411 էջ:
8. Աղայան Է., Որակական անցումները լեզվի մեջ: Տեղեկագիր / ՀՍՍՌ ԳԱ. հաս. գիտ., 1952, № 9, էջ 25-46:
9. Աղայան Է., Տերմինագիտություն, Ե., 1978, 52 էջ:
10. Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, 736 էջ:

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԸ ԲԱՌԱԳԵՏ, ՍՏՈՒԳԱՐԱՆ  
ՆԵԿՏԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ  
Ավագ գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ  
inslcouncil@sci.am

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-11

**Համառոտագիր:**

Հոդվածը նվիրված է հայ մեծանուն լեզվաբան Է. Աղայանի բառագիտական-բառաքննական և ստուգաբանական ուսումնասիրություններին, որոնք ամփոփված են «Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ» ժողովածուում (1974) և «Ընդհանուր և հայկական բառագիտություն» (1984) աշխատության մեջ: Հեղինակն առաջարկում է նոր ստուգաբանություններ հայերենի մի շարք արմատների համար, որոնք համարվել են կամ անհայտ ծագման, կամ փոխառություններ: Նա կատարում է նաև որոշ բնիկ հայերեն և բարբառային բառերի ստուգաբանական ճշգրտումներ:

**Բանալի բառեր և բառակապակցություններ՝** Հնդեվրոպական լեզուներ, նախալեզու, նախածև, բառագիտություն, ստուգաբանություն, արմատ, բարբառային բառեր:

**E. AGHAYAN – LEXICOLOGIST, ETYMOLOGIST  
NEKTAR SIMONYAN**

RANAS, Institute of Linguistics after H. Acharyan,  
Senior Reseacher. PHD, Associate Professor

**Abstract.**

The article is devoted to the distinguished linguist E. Aghayan’s lexicological and etymological researches, that are placed in the book “The Lexicological and Etymological Studies”(1974) and in “The General and Armenian lexicology”(1984).Heoffer Indo-European origin for number of Armenian roots, that were considered of unknown origin or borrowings. He also clarifies etymologies of some roots and dialectal words.

**Keywords and phrases:** Indo-European languages, protolanguage, prototype, lexicology, etymology, roots, dialectical words.

**Յ. ԱԳԱՅՆ - ԼԵՔՏԻԿՈԼՈԳ, ԷՏԻՄՈԼՈԳ  
ՈՒՆՏԱՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ**

Институт языка им. Р. Ачаряна НАН РА,  
Старший научный сотрудник, к.ф.н., доцент

**Անոտացիա.**

Статья посвящена лексикологическим и этимологическим изысканиям выдающегося лингвиста Э.Б.Агаяна, которые помещены в сборнике "Лексикологические и этимологические исследования" (1974) и в труде "Общая и армянская лексикология"(1984).Он предлагает индоевропейское происхождение для ряда армянских корней, которые ранее считались или неизвестного происхождения, или заимствованиями, также делает этимологические уточнения некоторых корней и диалектных слов.

**Ключевые слова и словосочетания:** Индоевропейские языки. праязык, прототип,лексикология, этимология ,диалектные слова.

Լրացավ մեծանուն լեզվաբան Է. Աղայանի ծննդյան 110-ամյակը:

Է. Աղայանը ծնվել է 1913 թ. մարտի 16-ին Մեղրիում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: 1933 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարան՝ աշակերտելով ժամանակի այնպիսի նշանավոր հայագետների, ինչպիսիք էին Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Գ. Ղափանցյանը: 1938թ. ավարտել է համալսարանը և ընդունվել ասպիրանտուրա: 1941 թ. «Մեղրու բարբառը» ատենախոսության համար նրան շնորհվում է բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1945թ. «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության համար՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1939 թվից մինչև իր երկրային կյանքի ավարտը դասախոսել է Երևանի պետական համալսարանում՝ զուգակցելով գիտնականի բեղուն գործունեությունը մանկավարժի, գիտական կադրեր պատրաստելու շնորհակալ աշխատանքի հետ:

Լայն ու բազմազան է եղել Է. Աղայանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ընդհանուր և համեմատական լեզվաբանություն, բարբառագիտություն, լեզվի պատմություն, բառագիտություն և բառարանագրություն, արևելյան բանասիրություն և գրականություն, տերմինաբանություն, տոմարագիտություն: Է.Աղայանի «Լեզվաբանության ներածությունը» (վերջին հրատարակությունը՝ «Լեզվաբանության հիմունքներ») լեզվաբանության տեսական հարցերին, լեզվաբանության հիմնախնդիրներին նվիրված անփոխարինելի ուսումնական դասագիրք-ծեռ-

նարկ է լեզվաբանների, բանասիրական ֆակուլտետների ուսանողության համար:

Է. Աղայանի գիտական ժառանգության մեջ իր ուրույն տեղն ունի «Արդի հայերենի բացատրական բառարանը», և անգնահատելի են նրա արժեքն ու կարևորությունը հայ բառարանագրության պատմության համար: Բառարանում ընդգրկված են 135600 բառ և 11000 դարձվածային միավոր: Բառարանի առաջաբանում հեղինակն անդրադառնում է իր կազմած, Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի» և Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի», Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարանի» մեջ ընդգրկված բառաքանակի տարբերությունների պատճառներին: Է. Աղայանը իր բառարանի առաջաբանում գրում է, որ «...մեր արդի գրական լեզվի բառապաշարը պատմական կամ ծագումնաբանական տեսակետից կարելի է բնութագրել բառամթերային հետևյալ շերտերով» [1, էջ IX]: Այնուհետև թվարկում է այդ շերտերը՝ համահայկական բառեր, համագրական բառեր, նոր գրական բառեր, մասնավոր գրական բառեր, հին կամ գրաբարյան բառեր, աշխարհաբարյան բառեր, բարբառային բառեր [1, էջ IX]: Նկատի ունենալով լեզվի զարգացման գործընթացի արտահայտությունն արտահայտող բառային տարբերակները՝ նա իր բառարանում ընդգրկված բառերը բաժանում է հետևյալ կարգերի՝ միջուկային բառակազմ, տարբերակային բառակազմ՝ սոցիալական, գործառական, պատմական, ներլեզվական ենթատեսակներով: Ներլեզվական տարբերակներ է համարում փոխատեղական համանունները, տարահիմք համանիշները, հոդակապային, հնչյունափոխական, ձևաբանական տարբերակները, հավելադրական բարդությունները, նորակազմությունները [1, էջ XI-XII]: Եվ պատահական չպետք է համարել, որ բառարանի կազմությունից հետո նա գրում է «Ընդհանուր և հայկական բառագիտություն» աշխատությունը: Այս աշխատության մեջ նա անդրադառնում է ընդհանուր բառագիտության տեսության այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսիք են բառի սահմանումը և բնութագրումը՝ նշելով բառի՝ որպես լեզվական միավորի առանձնացման հիմնական սկզբունքները, բառերի դասակարգումը ըստ նրանց արտահայտած իմաստների և ձևի: Ընդհանուր բառագիտության վերաբերյալ դիտարկումներից հետո հեղինակն անդրադառնում է հայերենի բառագիտության առանցքային հարցերի

քննությանը: Գրքում առանձին բաժիններ են նվիրված ժամանակակից հայերենի բառապաշարի ծագումնաբանական, համաժամանակյա դասակարգմանը, բառային կազմի զարգացման և հարստացման աղբյուրների և ուղիների, բառակազմության՝ բառերի ձևայնաբանական, ձևաբանական վերլուծության, և տերմինագիտության հարցերին:

Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում Է. Աղայանը (միակը) հայերենի համեմատական քերականություն է դասավանդել: Նրա «Պատմահամեմատական մեթոդը լեզվաբանության մեջ» (1957 թ.) գրքույկը հայ լեզվաբանության մեջ այդ մեթոդի տեսական և գործնական սկզբունքները կուռ և ամբողջական ներկայացնող միակ ձեռնարկն է: Է. Աղայանը, աշակերտելով Աճառյանին, չէր կարող ի մոտ չզբաղվել ստուգաբանության հարցերով: 1974թ. հրատարակվում է Է. Աղայանի «Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ» գիրքը: Դա ժողովածու է, որում զետեղված են նրա՝ տարբեր հանդեսներում, գիտական պարբերականներում հրատարակած ստուգաբանությունները և բառաքննական դիտարկումները: Աղայանը այդ ժողովածուի առաջաբանում շատ կարևոր և արժեքավոր մտքեր է արտահայտում բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ կատարելու վերաբերյալ: Նա գրում է, որ հայկական բառաքննության հիմնական խնդիրն է «...որոշել մեր հին մատենագրության մեջ հանդիպող այն բառերի ու բառակապակցությունների իսկությունը, իրական ձևն ու իմաստը, որոնք այս կամ այն պատճառով անստույգ կարող են համարվել» [2, էջ 6]: Իսկ ստուգաբանությունը «... զբաղվում է լեզվական միավորների ծագման, նրանց նախնական ձևի և իմաստի, լեզվական դերի ու գործառության և դրանց հետագա զարգացման ու փոփոխությունների լուսաբանությամբ» [2, էջ 7]: Ստուգաբանություն կատարելիս անհրաժեշտ է պարզել բառարմատների, ածանցների ու քերականական ձևորդների ծագումն ու զարգացման ընթացքը՝ պատմական մոտեցումով: Պատմական հայեցակետը գիտական ստուգաբանության հիմքն է: Դա նշանակում է, որ ստուգաբանությամբ զբաղվողը լեզվական յուրաքանչյուր միավորի քննության ժամանակ պետք է կատարի պատմական քննություն՝ պարզելով այդ միավորի նախնական իմաստը, ձևը, նկատի ունենա պատմական հնչունաբանության և պատմական իմաստաբանության տվյալները, համեմատի հ.-ե. այլ լեզուների համապատասխան արմատների հետ: Այս սկզբունքները, իբրև նաև խորհուրդ-ցուցումներ,

միշտ պետք հաշվի առնվեն, և դրանցով պետք է առաջնորդվեն այն բոլոր լեզվաբանները, որոնք հավակնում են զբաղվել ստուգաբանությամբ: Իսկ Աղայանն ինքը նշում է, որ «...առաջնորդվելով այս սկզբունքներով՝ տարիների ընթացքում աշխատել ենք ստուգաբանել հայերեն բազմաթիվ բառեր և հրատարակել գիտական պարբերականներում» [2, 15], որոնք ի մի է բերել այդ գրքում: Գրքում զետեղված է 101 բառահոդված, բայց մեր հաշվումներով քննված արմատների և բառերի քանակը 618 է, որովհետև մեկ բառի կամ արմատի քննության ժամանակ նա անդրադառնում է նաև դրանց ձևային և իմաստային տարբերակներին: Այդ բառահոդվածները կարելի է դասակարգել՝ առանձնացնելով անհայտ ծագման համարված, չստուգաբանված բնիկ՝ հ.-ե. ծագման արմատների ստուգաբանություններ, ստուգաբանական ճշգրտումներ, փոխառյալ բառերի, բարբառային բառերի քննություն: Է. Աղայանը նոր ստուգաբանություններ է առաջարկում առաւօտ, կոռ, շերտ, շեղբ, նկուղ, քուք, մուղ, տող, տաղ բառերի համար: Ստուգաբանական ճշգրտումներ է առաջարկում բարակ(շուն), գորտ, ստահակ, հարեւր/հարիւր և այլ բառերի համար (մեր նպատակը չէ թվարկել բոլորը): Հետաքրքիր է պարեգօտ բառի ստուգաբանությունը: Հ. Աճառյանն այն համարում է փոխառություն հին պահլավերենից (paragauða) [3:4, էջ 59]: Համանման կարծիք է հայտնում և Գ. Ջահուկյանը [4, էջ 630]: Հ. Հյուբշմանը պարեգաւտք «երկար հագուստ» բառի համար նշում է, որ Լագարդը այն կապում է gauti հայերեն գաւտի բառի հետ, իսկ ինքը ենթադրում է, որ այն անստույգ ծագման, կամ Արշակունիների ժամանակի փոխառություն է (...so ist es arsaacidisches Lehnwort, also aus dem Persischen zu erklären und dann von arm. Gauti “Gurtel” zu trennen) [5, էջ 227-228]: Է. Աղայանը, բերելով բառի պար և գաւտի բաղադրիչների իմաստները և կազմությունը, ինչպես նաև պարսկերեն d-հայերեն ը համապատասխանությունը (varagauða - վարագոյր), այն համարում է զուտ հայկական կազմություն և եզրակացնում է, որ իրանական paragauða-ն է փոխառություն հայերենից [2, էջ 132-135]: Է. Աղայանը պարսկերեն d-հայերեն ը համապատասխանության համար բերում է Է. Բենվենիստի՝ հայերեն վարագոյր բառի ստուգաբանությունը (varagauða - վարագոյր), և հավելում է, որ եթե պարեգօտ-ը պարսկական փոխառություն լիներ, հայերենում պետք է լիներ պարագոյր: Հայերենում կան պարսկերենից փոխառված այլ բառեր ևս, որոնցում պարսկերենի d-ի դիմաց հայերենն

ունի ռ.հմմտ. պարսկերեն *apeḏat* – հայերեն ապիրատ: Հարկ է նշել, որ Լ.Շ. Հովհաննիսյանը «Հայերենի իրանական փոխառությունները» աշխատության մեջ բերում է իրանական *d*-ի համապատասխանությունները տարբեր դիրքերում և նշում է, որ «*d*-ն միջձայնավորային դիրքում տալիս է –*r*...\**haḏazat* –հարազատ» [6, էջ 84]: Համանման օրինակներ կան և Հ.Հյուբշմանի «Հայագիտական ուսումնասիրություններ» գրքում [7, էջեր 371, 402]:

Շատ կարևոր են բարբառային բառերի քննությունները: Նա հնդեվրոպական ծագում է վերագրում հայերենի բարբառներում վկայված ցալքուն «ջրի ցայտ, շիթ, ջրալի ցելսի ցայտ», քառանք՝ Մեղրու բարբառում՝ քառնիլ «տաք-տաք՝ զայրացած խոսել, վիճել, խոսքով կռվել», բողջոց «վերք, պալար» բառերին՝ հնչյունական և իմաստային զուգահեռներ ներկայացնելով հնդեվրոպական այլ լեզուներից: Է.Աղայանը, նույնիսկ առօրյա խոսակցությունների ժամանակ լսելով իրեն անծանոթ որևէ բառ (մի անգամ Մեղրի այցելած ժամանակ մի տարեց կին նրան ասում է, որ ջահելները «հըրըմօշտ ըն արած մեղրեցիների լեզուն») [2, էջ 99], մտածում է դրա ծագման մասին. լեզվաբան-բառագետի պրպտումները տալիս են դրա պատասխանը. նա Նիզամիի «Խոսքով ու Շիրին» վիպերգը վերընթերցելիս մի նախադասության մեջ նկատում է, որ *farāmušt* բառը գործածվել է «մոռացավ» իմաստով: Պարսկերենի տարբեր բառարանների տվյալները հաշվի առնելով՝ նա Մեղրու բարբառի հըրըմօշտ բառը առանց տարակուսանքի համարում է իրանական փոխառություն: Է. Աղայանի բառաքննական և ստուգաբանական հետազոտությունները ցույց են տալիս, թե ինչպիսի մանրակրկիտ, բազմակողմանի հնչյունական, իմաստային, պատմական քննություն է կատարվել, և այդ սկզբունքներով ու չափանիշներով պետք է առաջնորդվել բառերի, արմատների նման քննություն կատարելիս:

### **Գրականության ցանկ**

1. Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Ե., 1976, 1615:

2. Աղայան Է.Բ., Բառաքննական և ստուգաբանական հետազոտություններ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1974, 167:

3. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, ԵՊՀ հրատարակչություն, Ե., հ.4, 1979, 674:



4. Ջահուկյան Գ.Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, «Աստղիկ» հրատարակչություն, Ե., 2010, 819:

5. Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, ԵՊՀ հրատարակչություն, Ե., 2003, 578:

6. Հովհաննիսյան Լ.Շ., Հայերենի իրանական փոխառությունները, ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Ե., 1990, 302:

7. Հյուբշման Հ., Հայագիտական ուսումնասիրություններ, ԵՊՀ հրատարակչություն, Ե., 2004, 520:

**Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր . C T A T Ե Ս . A R T I C L E S .**

**ԲԱՌԱԾԱՆՅՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱԾԱՆՑԱՎՈՐ ՄՈԴԵԼՆԵՐԻ  
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՔ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ  
ՄԵԼԱՆՅԱ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական  
համալսարան  
Մ.գ.դ., պրոֆեսոր  
astvatsatryanmelanya35@aspu.am  
**ՇՈՒՇԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
«Քոզնայզ Էնջինիրինգ» ՍՊԸ  
Տվյալների վերլուծաբան  
shushanik.petrosyan888@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-18

**Համառոտագիր**

Այս հոդվածում բացահայտվում է ժամանակակից գերմաներենում բայական բառակազմության էությունը համաժամանակյա տեսանկյունից:

Մեթոդական նպատակով իրականացվել է արևմտալեզու տարբեր մակարդակների մոդելների, ինչպես նաև կառուցվածքային և ածանցյալ միավորների իմաստաբանական մոդելների սահմանազատում:

Ուսումնասիրության առարկան գերմաներենում գործող նախածանցավոր և այսպես կոչված կիսաածանցավոր բայերն են, ինչպես նաև դրանց կառուցվածքային և կառուցվածքաիմաստային տարբերակները: Կառուցվածքային նախածանցավոր մոդելի որոշիչ գործոնը ածանցվող հիմքերի պատկանելությունն է որևէ խոսքի մասի: Կառուցվածքային նախածանցավոր մոդելների վերլուծությունը թույլ տվեց բացահայտել դրանց իմաստային համանմանությունը համաժամանակյա տեսանկյունից:

Աշխատանքում բնութագրվում են նախածանցավոր ածանցյալ միավորները և ածանցվող հիմքերը, մոդելի բաղադրիչների հարաբերություններն ու փոխազդեցությունը, ինչպես նաև սովորողների պոտենցիալ բառապաշարի ձևավորման և հավանական կանխատեսման մեխանիզմների ձևավորման հնարավորությունը:

**Բանալի բառեր և բառակապակցություններ**՝ բայական բառակազմություն, բայածանց, նախածանց, կիսաածանցավոր բայեր, ածանցվող հիմք,

կառուցվածքային մոդել, կառուցվածքաիմաստային մոդել, հավանական  
կանխատեսում:

**AFFIXATION AS A BASIS FOR THE SELECTION AND  
CLASSIFICATION OF DERIVATIONAL PATTERNS IN MODERN  
GERMAN LANGUAGE**

**MELANYA ASTVATSATRYAN**

Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

D. Phil., Professor

astvatsatryanmelanya35@aspu.am

**SHUSHANIK PETROSYAN**

Cognaize Engineering LLC

Data Analyst

shushanik.petrosyan888@gmail.com

**Abstract**

The paper reveals the essence of word formation in the modern German language in a synchronic way.

For the purpose of methodology we distinguish the models on different levels of abstraction, models of structure and models of semantics of derivational units.

The object of research is prefixal and so called semi-prefixal verbs in German as well as their structural and structural-semantic versions. Defining the structural prefix models that the derivatives belong to a concrete part of speech.

For methodological purposes we distinguish prefixal models at different levels of abstraction. prefixal derivative units and derivative bases; the relation and interaction of model components as well as possibilities for developing learners' potential vocabulary and development of probabilistic prediction mechanisms.

The analysis of structural prefixal models allowed to identify their semantic variants - structural-semantic prefixal models, which is important for understanding the models developed by one or another word-formation model.

The paper specifies types and ways of word-formation analysis, on the basis of which structural and structural-semantic prefixal models are distinguished in the lexical-grammatical class of verbs.

As a result of the study of prefixes' semantics and derivative bases the inventory of structural-semantic prefixal models of modern German should be clarified in order to model word-formation in a synchronous way.

**Keywords and phrases:** verbal word formation, prefix, verbal prefix, verbal semi-prefix, derivative base, structural model, structural-semantic model.

**АФФИКСАЦИЯ КАК ОСНОВА ДЛЯ ВЫДЕЛЕНИЯ И  
КЛАССИФИКАЦИИ ПРОИЗВОДНЫХ МОДЕЛЕЙ В СОВРЕМЕННОМ  
НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ  
МЕЛАНЬЯ АСТВАЦАТРЯН**

Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна

Д. п. н., профессор

astvatsatryanmelanya35@aspu.am

**SHUSHANIK PETROSYAN**

Cognaize Engineering LLC

Аналитик данных

shushanik.petrosyan888@gmail.com

**Аннотация**

В данной статье раскрывается сущность глагольного словообразования в современном немецком языке в синхронном плане.

В методических целях проведено разграничение моделей на разных уровнях абстракции, моделей структуры и моделей семантики деривационных единиц.

Объекта исследования выступают действующие в немецком языке префиксальные и так называемые полупрефиксальные глаголы, а также их структурные и структурно-семантические варианты. Благодаря этому оказалась возможной дифференциация различных семантических вариантов в рамках одной модели при полном совпадении словообразовательных структур. Определяющим для структурной префиксальной модели является принадлежность производящих основ к определенной части речи.

Анализ структурных префиксальных моделей позволяет выделить в синхронном плане их структурно-семантические аналоги.

В работе дана характеристика префиксальных производных единиц и производящих основ; соотношение и взаимодействие компонентов модели, а также возможности формирования потенциального словарного запаса обучающихся и развития механизмов вероятностного прогнозирования.

**Ключевые слова и словосочетания:** глагольное словообразование, префикс, префиксальные глаголы, полупрефиксальные глаголы, производящая основа, структурная модель, структурно-семантическая модель.

***Ներածություն***

Բառակազմական մոդելների վերլուծությունն ու յուրացումը առանձնակի կարևորություն է ստանում հատկապես ժամանակակից գերմաներենում: Մեծ քանակությամբ ածանցավոր և բարդ միավորների ստեղծման հնարավորությունը վկայում է վերջիններիս գործնական ուսումնասիրության անհրաժեշտության մասին:

Բայի նախաձանցման ենթահամակարգի ընտրությունը թելադրվում է բացառապես բայի կարևոր նշանակությամբ որպես նախադասության և ասույթի առանցքային կոնստիտուենտ՝ ապահովելով ամբողջ նախադասության ըմբռնումը:

Բառակազմության ուսուցումը ռացիոնալ է ռեցեպտիվ խոսքային գործունեության զարգացման, հատկապես ընթերցանության համար, քանի որ ածանցավոր միավորի իմաստի բացահայտման կարողությունը հանգեցնում է պոտենցիալ բառապաշարի ընդլայնմանն ու հարստացմանը, ինչպես նաև լեզվական կոահման մեխանիզմների զարգացմանը:

Նախաձանցները ոչ միայն փոփոխում են ածանցյալ հիմքի իմաստը, այլ նաև վերջինիս կարող են հաղորդել որոշակի քերականական իմաստ՝ առանց բովանդակությունը էապես փոփոխելու:

Այսպես, օրինակ be- նախաձանցը բառիմաստային արտահայտման հետ մեկտեղ կարող է հաղորդել բային անցողիկության քերականական կարգի նշանակություն, օրինակ՝ steigen-besteigen, treten-betreten և այլն, ինչը պետք է հաշվի առնել դասավանդման ընթացքում:

Այս երևույթը առկա է նաև հայերենում: Ինչպես նշվում է «Ժամանակակից հայոց լեզու» աշխատությունում, հետևյալ քառանդամ հակադրությունները՝ անհանգիստ, անհանգստություն, անհանգստանալ, անհանգստորեն, վերաբերելով բառակազմությանը, ունեն նաև քերականական արժեք և այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում քերականության համար [1, էջ 123]:

### ***Գերմաներենի բայական նախաձանցական բառակազմություն***

Բայական նախաձանցների գործառույթների բազմազանությունն ու բարդությունը պայմանավորված են նրանց տարասեռ կազմությամբ և տարբեր բայական և անվանական հիմքերի փոխներգործությամբ, դրանց տարբեր քերականական և բառական իմաստի դրսևորմամբ:

Գերմաներենի բառակազմության համակարգում կարևոր տեղ են գրավում բուն ածանցավոր (be-, ent-, er-, ver- etc.) և այսպես կոչված կիսաածանցավոր (auf-, aus-, bei-, über- etc.) բայերը, որոնք ըստ Մ. Դ. Ստեպանովայի, գործում են բայերի բառաքերականական կարգում:

Կիսաածանցավոր բայերի հիմքում ընկած գործոնները հետևյալն են՝

ա) դրանց երկակի բնույթը. կիսանախաձանցները որպես համար-  
ժեքներ ունեն համահունչ կոռեկտներ, որոնք գործում են որպես ինք-  
նուրույն բառեր՝ միաժամանակ իրենց գործառույթներով նմանվելով նա-  
խաձանցներին;

բ) դրանց կրկնապատկման օժտվածությունը, այսինքն իրենց սե-  
րիական բնույթը:

Այսպիսով, իմաստային արմատական ձևային հետ կիսաաձանց-  
ները ստեղծում են լայն բառակազմական կարգ [4, c. 105-106]:

### ***Նախաձանցյալ բայական մոդելներ***

Auf-տեսակի կիսանախաձանցների հակասական էությունն այն է,  
որ նրանք դառնում են ընդհանրական և ձեռք են բերում հատուկ նշա-  
նակություն, սակայն ոչ որպես ինքնուրույն բառեր, այլ որպես ձևային,  
որոնքբայերի ամբողջական խմբերին տալիս են որոշակի հատկանիշ:

Աձանցյալ բայերի տիպաբանության հիմքում ընկած առանձնա-  
հատկությունները, ընկալման և գործածության դժվարությունները բա-  
ցահայտելու նպատակով անցկացվել է բայաձանցների բառակազմական  
վերլուծություն:

Մեր առջև խնդիր էր դրված քննել այդ տիպի բայաձանցների կա-  
ռուցվածքային և կառուցվածքաիմաստային մոդելների կարգավիճակը,  
իմաստային ոլորտի փոխակերպումը, ինչպես նաև սահմանել ընկալման  
դժվարությունները:

Նախաձանցավոր բայերի ընկալման դժվարությունները բխում են  
հենց դրանց բառակազմական առանձնահատկություններից: Մի կողմից  
դրանք պայմանավորված են բայաձանցների որոշակի խմբերի կառուց-  
վածքային կազմությամբ, մյուս կողմից՝ առաջին բաղադրիչի բազմիմաս-  
տությամբ:

Հենվելով Ե. Ս. Կուբրյակովայի, Մ. Դ. Ստեպանովայի և Մ. Գ.  
Աստվածատրյանի աշխատությունների վրա՝ աձանցման հետ կապված  
գործոնների թվին մենք վերագրում ենք հետևյալը՝

ա) բառերը առանձին իմաստային բաղադրիչների մասնատելու  
կարողություն/անկարողություն (թերի մասնատվող աձանցների դեպ-  
քում),

բ) մասնատված բաղադրիչների հանդես գալը տարբեր միջավայ-  
րերում՝ թե թերի մասնատվող, թե ձևականորեն մասնատվող հիմքերում,

գ) ածանցյալ բառերի մասնատվող հատվածների կարողությունը տարբեր միջավայրերում միևնույն/ոչ միևնույն իմաստով կրկնվելն է, այլ կերպ ասած՝ ենթադրում է դերիվատիվ ամբողջ շարքին այս կամ այն բնորոշ նշանակության տալը:

Նախաձանցավոր կազմությունների վերլուծությունը ձևաբանական մասնատման և բառակազմական ածանցման տեսանկյունից թույլ է տալիս տարբերակել ձևաբանորեն և պայմանականորեն մասնատվող միավորները: Կառուցվածքային մոդելի բաղադրիչների ընտրությունը չի սահմանափակվում դերիվատիվ նախաձանցի և բառերի բառաքերականական դասի հետ համատեղելիությամբ:

Նախաձանցավոր բառակազմական ձևույթը կապ է հաստատում բառերի որոշակի իմաստային խմբերի հետ: Սա նշանակում է, որ բառակազմական մոդելի շրջանակներում ներքին դերիվատիվ ածանցման հասկացությունը կարող է կոնկրետացվել՝ հենվելով, մի կողմից ածանցվող հիմքերի բառաքերականական ցուցիչի, մյուս կողմից՝ ածանցվող հիմքի բառիմաստային կարգի վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նախաձանցի իմաստը, ինչպես նաև մոդելի՝ բաղադրիչների և դրանց համակցման միջև փոխազդեցության օրինաչափությունները [5, c. 9]:

Վերլուծության տեսանկյունից նախաձանցավոր կառուցվածքային մոդելի որոշիչ գործոնը բաղադրող հիմքի՝ խոսքի որոշակի մասի (բայերի, գոյականների, ածականների, մակբայների դասին՝ *beraten* (*be->V*), *erörtern* (*er->S*), *entwässern* (*ent->S*), *vertiefen* (*ver->Adj*), *verspäten* (*ver->Adv*)) պատկանելն է: Նախաձանցավոր կառուցվածքային մոդելների վերլուծությունը հնարավորություն է տալիս դիտարկել դրանց իմաստային տարբերակումը: Այս պարագայում միայն կառուցվածքային մոդելների ընտրությունը բավարար չէ նախաձանցավոր մոդելի իմաստի ընկալման և վերջինիս իմաստային խմբերի տարբերակման առումով (հմմտ. *abfahren*, *-reisen* և *abblühen*, *-klingen*): Ձևաբանական կառուցվածքների լիովին համընկնման դեպքում նախաձանցավոր բառակազմական ձևամասնիկը կապ է հաստատում բառերի որոշակի իմաստային խմբերի հետ: Սա նշանակում է, որ բառակազմական մոդելի շրջանակներում ներքին դերիվատիվ բառակերտման հասկացությունը կարող է ճշգրտվել՝ մի կողմից հենվելով բաղադրող հիմքի բառաքերականական ցուցիչի, մյուս կողմից՝ բառիմաստային կարգի վրա: Այս դեպքում

անհրաժեշտ է հաշվի առնել նախաձանցի իմաստը, ինչպես նաև մոդելի բաղադրիչների և դրանց համակցման փոխազդեցության օրինաչափությունները [նույն տեղում]:

Բառաձանցումների և առանձին մասերի բաժանվելու դեպքում բառազույգը բնութագրվում է ածանցման փոխհարաբերությամբ, եթե նրանց միջև հնարավոր է ստեղծել թե՛ ձևաբանական, թե՛ իմաստային կապ: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է նախաձանցի և կոռեյատի առկայությունը, որը համապատասխանում է, ըստ Ե. Ս. Կուբրյակովայի, կառուցվածքաիմաստային առումով ածանցյալ հիմքերի բառային միավորներին:

Այսպիսով, վերլուծելով գերմաներենի բայաձանցները որպես բառակազմական միջոցներ՝ անհրաժեշտ է հաշվի առնել՝

ա) տիպական նշանակության ամբողջ ածանցյալ շարքը,

բ) ածանցվող և ածանցված հիմքերի կառուցվածքային ու կառուցվածքաիմաստային հարաբերակցությունը:

Բառաձանցումների վերոնշյալ չափանիշների հիման վրա պետք է բացառել beobachten, verlieren տիպի կազմությունները՝ որպես բառակազմական համընթաց ածանցումների կազմության անհամապատասխանության հետևանք: Մնացորդը, որը առանձնացվում է be- և ver- բաժանման արդյունքում, լիովին իմաստազրկված է, որը հիմք է տալիս չդասել դրանք ածանցյալ միավորներին և բառակազմական մինիմումին:

Ինչ վերաբերում է բայերի կազմությանը, օրինակ՝ bekommen, verstehen, որոնց բաղադրող հիմքը ձևականորեն համապատասխանում է բառաձանցման ինքնուրույն բառերի իմաստին, ապա նրանք չեն համապատասխանում երկրորդ պահանջին՝ ինքնուրույն բառերի kommen, stehen իմաստային համահարաբերակցմանը: Այս դեպքում բացակայում է ածանցի և ինքնուրույն բայերի իմաստային կապը: Այդ պատճառով դրանք նույնպես բացառվում են բառակազմական նվազագույնից:

Բայաձանցավոր կառուցվածքային և կառուցվածքաիմաստային մոդելների բնույթից էապես կախված են ներմուծման և բացատրության ռազմավարությունը, ինչպես նաև նյութի ամրապնդման վարժությունների համակարգը:

Բայական նախաձանցների և բաղադրող հիմքերի իմաստային ոլորտի ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ է ճշտել ժամանա-



կակից գերմաներենի կառուցվածքաիմաստային մոդելների ցանկը՝ բա-  
նակազմության մոդելավորման նպատակով:

### **Գրականության ցանկ**

1. Աբրահամյան Ա. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., Ժամա-  
նակակից հայոց լեզու, հ. 2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, 586 էջ:
2. Кубрякова Е. С., Основы морфологического анализа (на материале  
германских языков). М.: ЛКИ, 2012. 328 с.
3. Аствацатрян М. Г. К проблеме словообразовательного моделирова-  
ния (на материале префиксальных глаголов современного немецкого языка //  
“Филологические науки. Вопросы теории и практики”, N 11 (41). Часть 2. -  
2014. - С. 37-40.
4. Степанова М. Д. Методы синхронного анализа лексики (на материале  
современного немецкого языка). МПб: МЦФРБ 2004. 208 с.
5. Пиоттух К. В. Система префиксации в современном английском  
языке [Текст]: Автореферат дис. на соискание ученой степени кандидата  
филологических наук. (663)/ Моск. гос. пед. ин-т иностр. яз. им. Мориса  
Тореза. - Москва: [б. и.], 1971. - 30 с.
6. Fleischer W., barz I. Wortbildung der deutschen Gegenwartssprache.  
Berlin-Boston. -2012. De Gruyter (Studium). - 371
7. Helbig G., Schenkel W. Wörterbuch zur Valen. und Distribution deutscher  
Verben., Gruyter (Studium) Leipzig, 2011, 454 S.
8. <https://grammis.ids-mannheim.de/fragen/3049>
9. <https://www.redalyc.org/journal/6645/664572411004/html/>
10. <https://www.dialog-wien.at/ueber-uns/blog/paefixe/>
11. <https://www.grin.com/document/73396>

**ՄԻԼՎԱ ԿԱԿՈՒՏԻԿՅԱՆԻ «ՉԵՄ ԿԱՐՈՂ ԼՈՒԷԼ»  
ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

**ԼԵՂՈՒՆ**

**ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ**

Բանասիր. գիտ. դոկտոր

ash.galstyan@mail.ru

**ԷՄԻՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ**

ՀՊՄՀ հայցորդ. Երևանի հ. 108 միջն. դպրոցի հայոց լեզվի  
և գրականության ուսուցիչ

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-26

***Համառոտագիր***

Միլվա Կապուտիկյանի «Չեմ կարող լուել» հրապարակախոսությունը հողվածների, հեռուստատելույթների և հարցազրույցների շարք է, որում հեղինակը ներկայացնում է իր մտորումները արժանավայել ներկա ու ապագա ունենալու մասին:

Մեր նպատակը, անշուշտ, բանաստեղծուհու ապրած ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական իրադրության վերլուծությունը, երևույթներին նախորդող և հաջորդող իրադարձությունների սուկ նկարագրությունը չէ: Շահեկան է համա-ժամանակյա դիտակետով վեր հանել հրապարակախոսական ոճին հատուկ կառույցների և միավորների լեզվական բնութագրիչները, իրավիճակների նկարագրության լեզվական տարրերը: Այդ առումով հետաքրքրական իրողություններ են դրսևորվում նաև բառային կազմում:

Հողվածում անդրադարձ է կատարվում հրապարակագրական նյութի կառուցվածքին, հատուկ անունների թեմատիկ դրսևորումներին, այլ ոճերի տարրերի առկայությանը: Վեր են հանվում Ս. Կապուտիկյանի հրապարակախոսության ոճի լեզվական հիմքերը, պատկերավորման և արտահայտչական միջոցները:

***Բանալի բառեր և բառակապակցություններ***՝ Միլվա Կապուտիկյան, հրապարակախոսություն, տեքստ, ոճ, բառային կազմ, բայերի կուտակում, փոխաբերություն, թևավոր խոսք:

**THE LANGUAGE OF SILVA KAPUTIKYAN'S "I CANNOT  
REMAIN SILENT" COLLECTION OF PUBLIC SPEECHES**

**ASHOT GALSTYAN**

Doctor of Philological Sciences

ash.galstyan@mail.ru

**EMIN MALKHASYAN**

Armenian Language and Literature Teacher,

Yerevan Secondary School no 108

**ABSTRACT**

Silva Kaputikyan's collection of public speeches entitled "I Cannot Remain Silent" comprises articles, TV appearances and interviews, where the author presents her reflections on having a present and a future with dignity.

Our goal is certainly neither producing an analysis of the socio-political situation of the period the poet lived nor the mere description of the events preceding and following the various developments. It is useful to highlight the linguistic characteristics of structures and units specific to the public speaking style, the linguistic elements of descriptions of situations from a contemporaneous point of view. From that perspective, interesting features and characteristics can also be distinguished in vocabulary.

The article reflects on the structure of the public speaking materials, the thematic range of proper names, the presence of elements of other forms and styles of speech. S. are taken up. The analysis explores the linguistic bases, imagery and figures of speech of Silva Kaputikyan's public speaking style.

**Keywords and phrases:** Silva Kaputikyan, public speaking, text, style, vocabulary, accretion of verbs, metaphor, catch phrases.

**ЯЗЫК ПУБЛИЦИСТИКИ СИЛЬВЫ КАПУТИКЯН "НЕ МОГУ  
МОЛЧАТЬ"**

**АШОТ ГАЛСТЯН**

Д. филол. н.

ash.galstyan@mail.ru

**ЭМИН МАЛХАСЯН**

Преподаватель армянского языка и литературы

средней школы N 108 г. Еревана

**Аннотация**

Публицистика Сильвы Капутикян "Не могу молчать" – цикл статей, телевизионных выступлений и интервью, в котором автор представляет свои размышления об имени достойного настоящего и будущего.

Нашей целью, безусловно, не является лишь анализ социально-политической ситуации в период жизни поэтессы, описание событий, предшествующих и последующих за явлениями. Полезно синхронного угла зрения выявить языковые

характеристики структур и единиц, присущих публицистическому стилю, языковые элементы описания ситуаций. В этом плане проявляются интересные явления также в словарном составе.

В статье обращено внимание на построение публицистического материала, тематические проявления собственных имен, наличие элементов других стилей. Выявляются языковые основы публицистического стиля С. Капутикян, описательные и выразительные средства.

**Ключевые слова и словосочетания:** Сильва Капутикян, публицистика, текст, стиль, словарный состав, скопление глаголов, метафора, крылатое выражение.

### **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործությունների գունապնակում զգալի կշիռ ունի հրապարակախոսությունը: 1979թ. լույս է տեսել հեղինակի «Իմ ժամանակը» հրապարակագրությունների և ուղեգրությունների ժողովածուն: 1992թ. սեղանին դրվեց «Էջեր փակ գգրոցներից» հրապարակագրությունը, իսկ 2000-ին՝ «Չեմ կարող լռել» խորագրով հոդվածներն ու ելույթները:

Ս. Կապուտիկյանի հրապարակագրությունը, որն ըստ էության ունի ներգործման գործառույթ, լրկ հեղինակի անհատականության արտահայտությունը չէ, այլ նաև ժամանակաշրջանի համապատկերի նկարագրություն է, այդ շնչահատ տարիների հասարակության ապրածն ու զգացածը, հույսերն ու հուսաբեկությունները: Հոդվածից հոդված հրապարակախոսի ձայնը դառնում էր առավել խիստ, ավելի փոթորկուն, քանզի այն կյանք էր, որ ապրում էր բանաստեղծուհին, ավելի ալեկոծ էր ու ծանր:

Այս ամենն ըստ էության ներկայացվում է հրապարակախոսական ոճի բազմազան դրսևորումներով:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Սույն հոդվածի ուսումնասիրության տեսական-մեթոդաբանական հիմքն են հանդիսացել լեզվաբանների և ոճագետների՝ թեմային առնչվող աշխատանքները:

Հիմնախնդիրը լուծելու նպատակով առաջնորդվել ենք լեզվաբանության և տրամաբանության մեջ տարածում գտած մի շարք մեթոդներով և մոտեցումներով:

## **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Հրապարակախոսական ոճը օգտագործվում է տեղեկույթը հանրային ոլորտներին իրազեկելու համար: Հրապարակախոսական ոճն առկա է հեռուստատելույթներում, տարատեսակ հանդիպումներում և հասարակական հնչեղություն ունեցող հոդվածներում: Այս դեպքում ոչ միայն տեղեկատվություն է հաղորդվում, այլև այդ ամենը ներագրում է ունկնդիրների հուզականային ոլորտների վրա, նրան որոշակի դիրքորոշման մղում:

Տեքստի կառուցվածքային հիմնաբաղադրամասերից է սկզբնամասը: Ունկնդրի ուշադրությունն անմիջապես գրավելու համար ներկայացվում են իրողություններ, փաստեր, որոնք հրապարակախոսի բանականությամբ ըմբռնված-ապրված են և կրում են հեղինակի ստեղծագործական անհատականության կնիքը: Հեղինակն անմիջապես անցնում է բուն նյութին, և ընթերցողը հայտնվում է նկարագրվող իրադարձության և թեմայի տիրույթում. «Չգիտեմ հատկապես ե՞րբ, Հայրենական պատերազմի սկզբի՞ց, թե՛ նրանից առաջ, Հովհաննես Բաղրամյանի անունն իր ողջ ուժգնությամբ ու արձագանքումներով մտել է իմ ընկալումների մեջ, դարձել իմ հոգին ջերմացնող, հպարտությամբ ու հիացմունքով ցնող անուններից մեկը» [3, 6]:

Այս դեպքում հրապարակախոսը, ներգործելով ընթերցողի հուզական ազդակների վրա, նկարագրվող անձի կամ երևույթի նկատմամբ որոշակի մտորումներ է առաջացնում:

Այսպիսի ուսումնասիրությունների դեպքում նպատակային է բառապաշարի շերտերի առանձնացումը: Ուսումնասիրվող տեքստի բառապաշարն աչքի է ընկնում հատկանունների առատությամբ: Գրողների և արվեստագետների անուններ՝ Վիլյամ Սարոյան, Մարտիրոս Սարյան, Սուրեն Քոչարյան, Հենրիկ Մայյան, Լուսինե Զաքարյան, Պարույր Սևակ, Վահագն Դավթյան, Բելա Ախմադովինա, Մուսրեպով (ղազախ գրող), գիտնականների, քաղաքական գործիչների և զորահրամանատարների անուններ՝ Վիկտոր Համբարձումյան, Վարդան Մամիկոնյան, Անաստաս Միկոյան, Հովհաննես Բաղրամյան, Համազասպ Բաբաջանյան, Մոնթե Մելքոնյան, Քլինթոն, պետությունների, քաղաքների և փողոցների անուններ՝ Իրան, Տաջիկստան, Փարիզ, Նյու Յորք, Բոստոն, Վան, Բիթլիս, Կարին, Կարս, Մոսկվա, Չարենցավան, Սիվցև-Վրաժեկ (փողոցի անուն):

Տեղանունները օժտված են հարուստ բովանդակությամբ և տեղեկատվական մեծ լիցքով: Իբրև բառային նշան՝ դրանք առաջին մակարդակում սերտ հարաբերվում են անձնանվանը, սակայն իրականում այս երկու հատկանունների միջև զգալի տարբերություն կա:

Հրապարակախոսության լեզվում թափանցել են օտար բառեր՝ կոնգրես (32) (պետությունների ղեկավարների կամ նրանց դեսպանների ժողով, որ քննում և վճռում է քաղաքական խնդիրներ, ֆրանսերեն ռուսերենի միջնորդությամբ), հոթել (հյուրանոց) (21), պրեստիժ (հեղինակություն) (21), լեդի (ամուսնացած կին Անգլիայում, անգլերեն) (29), օֆիս (36) (գրասենյակ, անգլերեն), կոլեկցիոներ (40) (կոլեկցիաներ հավաքող, ֆրանսերեն՝ ռուսերենի միջնորդությամբ), բանկետ (12) (հրապարակային հանդիսավոր ճաշ, ֆրանսերեն՝ ռուսերենի միջնորդությամբ), ղալմաղալ (20) (արաբերեն, աղմուկ-աղաղակ, շփոթություն), Պէն-կլուբ (Պէն-ը կազմված է պոեզիա, էսսե, նովել բառերի սկզնատառերից, սկզբնապես հիմնվել է Լոնդոնում մոտ հարյուր տարի առաջ) և այլն: Գործածված են նաև օտարագիր բառեր. «Շատ ավելի տպավորիչ էր այն հյուրասիրությունը, որը հանձն էր առել «VIKING LINE» ծովային ճամփորդության ֆինն-շվեդական ընկերությունը» [3, 42] և այլն:

Ակտիվ են հայ, բարձր, սուգ սկզբնաբաղադրիչով, ինչպես նաև պետ, հանդես, տուն վերջնաբաղադրիչով միավորները՝ հայապաշտ (82), հայաշխարհ (87), հայապահպան (86), բարձրաճ, բարձրամեծար (7), սգերթ (49), սեղանապետ (10) պարահանդես (24), սգահանդես (54) գրատուն (44), սգատուն (79), աղոթատուն (86) և այլն:

Հետաքրքրական զուգորդումներ կան բայերի արտահայտչական ձևերում: Ս. Կապուտիկյանը, բնութագրելով Հ. Բաղրամյանին, գործածում է բայ-բնութագրիչներ. «Հ. Բաղրամյանը մշտապես մնաց իր փառքի ալիքի վրա, մեծարվեց, սիրվեց, լիացավ, վայելեց» [3, 14]: Բայերի կուտակման ռճական այս հնարքը ռճագիտության մեջ կոչվում է համակուտակում, որը գեղարվեստական վավերագրության լեզվում կիրառվում է մտքի յուրովի թվարկման, գործողության ուժգնության ընդգծման նպատակով: Պ. Պողոսյանը նշում է, որ համակուտակումը այնպիսի գաղափարների յուրօրինակ թվարկում է, որոնք միասնաբար թողնում են շատի և ուժեղի տպավորություն [5, 7]: Համակուտակման շղթայի որոշ բայեր կարող են հոմանշային շարքեր կազմել:

Խոսքի պատկերավորությունը և արտահայտչականությունը հրապարակախոսի զենքերից են: Հրապարակախոսության լեզուն բնորոշվում է փոխաբերության՝ որպես ոճական դարձույթի գործածության յուրահատկությունների ամենաբազմազան դրսևորումներով: Դրանք հեղինակային ինքնատիպ հյուսվածքներ են, լեզվական գրավիչ կառույցներ: Փոխաբերությունը հնարավորություն է տալիս նմանությամբ, առնչակցությամբ համեմատություն կատարել, վեր հանել տարբեր առարկաների, երևույթների կապերը և դրանով իսկ խոսքը դարձնել առավել տպավորիչ [1, 8]. «Գնանք մեր ղեկավարների առաջ մոմ վառենք, որ մինչև հիմա ազատ խոսքի համար ոչ մի գրող բանտ չի ընկել» [3, 31]: «Իր ջերմությամբ, աչքերի տաք ուրախությամբ «հայի համ» տվեց մի ֆիննուի» [3, 34]:

Համեմատությունը հրապարակախոսության հատկանիշներից է: Բնագրի տարբեր կառույցներում հեղինակը հաճախ է համեմատության եզրեր գտնում. «Չարենցն էր մեծ, այնքան էր մեծ, որ կարծես չէր տեղավորվում հետզհետե շագրենակաշվի նման փոքրացած Հայաստանում» [3, 76]: «Արտաշես արքայի պես մեզ թողեց միայն ավերակների վրա թագավորելու բախտը» [3, 77]: «Կույրի պես գնում է իրեն մոլորեցնողի հետևից» [3, 32] և այլն:

Հրապարակախոսության մեջ կարող են լինել գիտական ոճի հոսքեր. «Հայաստանը պոեզիայի հինավուրց երկիր է, դեռևս X դարում մենք ունեցել ենք հանճարեղ մի ճգնավոր՝ Գրիգոր Նարեկացի: Վալերի Բոյուսովը մեր միջնադարյան պոեզիան համարում էր մարդկության ամենաբարձր նվաճումներից մեկը» [3, 29-30]:

Հրապարակախոսական ոճն իր բնույթով տարբերվում է գեղարվեստական հրապարակախոսության կամ, ինչպես ընդունված է ասել, «բաց տեքստի» գրականությունից, բայց և դրանք կարող են ունենալ ընդհանուր կողմեր [4, 49]: Ս. Կապուտիկյանի հուշագրական արձակի որոշ դրսևորումներ նկատելի են հրապարակախոսական էջերում: Աչքի են զարնում բնորդի արտաքին նկարագրությունը, լրացուցիչ մանրամասներ. «Դռների մոտ մեզ ողջունեց բարեղեմ մի տիկին, բարալիկ ու գեղանի, ճաշակավոր հագուստ-կապուստով, բայց ոտաբոբիկ: Ասացին, որ իրավաբան է, ունի իր օֆիսը և իր գործերում շատ հաջողակ է» [3, 36]:

Այս համապատկերում նկատելի է նաև *հիշել* բայի ձևաիմաստային դրսևորումը. «Հիշում եմ մի այսպիսի հանդիպում Անահիտի տանը» [3, 15]:

Այս ոճի տեքստն ունի բացատրական բառարանի գործաբանական արժեք. Մեկնաբանվում են տարբեր հասկացություններ, բառեր, տրվում են բացատրություններ. «Աշխարհում տարածված է Ֆինլանդիային վերաբերող երկու հանրահայտ հասկացություն՝ ֆիննական դանակ և ֆիննական տնակ» [3, 35]: Տեքստի տրամաբանական կամրջակը սնող այսպիսի հոսքերը ամբողջական են դարձնում հրապարակախոսական ոճի դրսևորումները:

Ս. Կապուտիկյանը երբեմն այլ գրողների մտային հոսքերով է ամբողջացնում հրապարակախոսական բնագիրը. «Ինչպես Սևակն է ասում՝ «խնդրելով պահանջեց, պահանջելով խնդրեց» [3, 18]: «Սակայն մեծ Թումանյանը ասում է. «Ուրիշի վատությունը շատ էլ վտանգավոր բան չի լավ մարդու համար» [3, 147]: «Այս հանգամանքը լավ է հասկացել իտալացի գրող Ալբերտո Մորավիան, որ գրել է, թե հայի համար կոնյակը սոսկ արտադրատեսակ չէ, այլ ազգային հպարտության առարկա, հարազատ հողի, ջրի և արևի ավյունը իր մեջ կրող էլիքսիր, ուրիշ ժողովուրդներին ներկայանալու այցետոմս» [3, 24]:

Առկա են նաև թևավոր խոսքեր հիշեցնող նախադասություններ. «Անունը կար, ամանումը չկար» [3, 42], «Մերն ուրիշ է» [3, 32], «Պատերազմը կանացի դեմք չունի» [3, 33], «Ճամփորդական նավից՝ ուղղակի պարահանդես» [3, 24], «Որտեղ հաց, այնտեղ կաց» (գրողն անվանում է արատավոր կենսափիլիսոփայություն) [3, 90]: «Թշնամին դարպասների մոտ է» [3, 98], «Ասում են՝ հանգուցյալի ետևից կամ միայն լավն են խոսում կամ լռում են» [3, 58]:

Գործածված են նաև շրջասական նոր կապակցություններ՝ դարերի երկունք ապրած նորամանուկ-Հայաստան (93), արծվաթռիչ բանաստեղծ-Չարենց (81), հայապաշտ հեղինակ-Չարենց (82), հայրենի բանաստեղծուհի-Սիլվա Կապուտիկյան (96), Չանգեզուրի զանգը-Սերո Խանգաղյան (58), աստվածատուր երգչուհի-Լուսինե Զաքարյան (50) և այլն:

Էական է տեքստի վերջաբանը, որը հայտնի ճշմարտությամբ է ամրագրված. «Այո՛, մեր միակ փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է ու նաև մեր հոգեկանության, նաև մեր արարիչ ոգու մեջ»:



Հավաքենք մեր աշխարհացրիվ ուժերը, մեր արարիչ ոգին՝ ապրելը շարունակելու համար» [3, 83]:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ս. Կապուտիկյանի հրապարակախոսությունն աչքի է ընկնում որոշակի բառափնջերի դրսևորմամբ՝ հատուկ անուններ, օտարաբանություններ, շրջասույթներ, բարդության սկզբնաբաղադրիչի և վերջնաբաղադրիչի ակտիվություն ունեցող միավորներ և այլն:

2. Հետաքրքրական զուգորդումներ կան բայերի արտահայտչաձևերում. Համակուտակումը որոշակի ոճավորում է ստեղծում:

3. Հրապարակախոսության լեզուն աչքի է ընկնում պատկերավոր և արտահայտչական ձևերի ակտիվությամբ:

4. Հրապարակախոսական արձակում առկա են միջոճային բնութագրիչների փոխանցումներ:

5. Հոդվածների որոշ հոսքեր ունեն հարցուպատասխանական կառուցվածք:

### **Գրականության ցանկ**

1. Բաբայան Օ., Փոխաբերությունը արդի հայերենում, Ե., 2004:
2. Գալստյան Ա., Երկխոսությունը ժամանակակից հայերենում, Ե., 2003:
3. Կապուտիկյան Ս., Չեմ կարող լռել (հրապարակախոսություն), Ե., 2000:
4. Շալունց Ռ., Մամուլի և հրապարակախոսության լեզուն, Ե., 1987:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2-րդ, Ե., 1991:

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՋԲԵՐՎՈՂ ԱՆՈՐՈՇ ԴԻՄԱՎՈՐ ԵՎ  
ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԴԻՄԱՎՈՐ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

**Գուրգեն ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Բանասիր. գիտ. դոկտոր  
gxachatryan@yahoo.com

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-34

**Համառոտագիր**

Լեզվական փաստերը վկայում են, որ, կախված խոսքային իրավիճակից, միջին հայերենում 2-րդ դեմքով արտահայտվում են ոչ միայն ընդհանրական դիմավոր, այլև անորոշ դիմավոր միակազմ նախադասություններ, որոնք, արտահայտության պլանում որոշ ընդհանրություններ ունենալով հանդերձ, բովանդակային պլանում որոշակիորեն տարբերվում են ոչ միայն մեկը մյուսից, այլև միևնույն բայաձևերով արտահայտված երկկազմ նախադասություններից:

Նպատակ է հետապնդվում բացահայտելու հիշյալ նախադասությունների արտահայտության և բովանդակության պլանների մի շարք ընդհանրություններ ու տարբերություններ, երևան հանելու լեզվաբանական հետազոտությունների ուղեծրից առայսօր դուրս մնացած անորոշ դիմավոր նախադասությունների այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունները:

Միջին հայերենի ուղղակիորեն մեջբերվող խոսքերում հանդիպող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններն արտահայտվում են անձ ցույց տվող առարկաների հետ կապակցման հնարավորությամբ օժտված բայերի հրամայական եղանակի եզակի կամ հոգնակի թվի 2-րդ դեմքով, սակայն, կախված տարբեր հանգամանքներից, գործածվում են խոսքային տարբեր իրադրություններում:

Դիտարկումներից եկել ենք այն եզրահանգման, որ իբրև ուղղակի խոսք գործածվող և 2-րդ դեմքով արտահայտված հաղորդակցական միավորների կազմության հարցում էական դեր կատարող հանգամանքներն են որոշակի խոսքային իրադրության և հեղինակի խոսքում հանգման խնդրի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև տվյալ նախադասության իմաստային կողմը:

**Բանալի բառեր և բառակապակցություններ**<sup>1</sup> միջին հայերեն, անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններ, ուղղակիորեն մեջբերվող խոսք, հեղինակի խոսք, խոսքային իրադրություն, հանգման խնդիր:

**ANALYSIS OF INDEFINITE-PERSONAL AND GENERALIZED-  
PERSONAL ONE-MEMBER SENTENCES IN DIRECT SPEECH OF  
MIDDLE ARMENIAN**

**G. K. KHACHATRYAN.**

Doctor of Philological Sciences  
gxachatryan@yahoo.com

**ABSTRACT**

The linguistic data testify that in the Middle Armenian language, depending upon the speech situation, not only the generalized-personal sentences are used in the second person, but also the one-member indefinite-personal ones, which, having several similarities in the aspect of expression, greatly differ in the aspect of their meaning not only from each other, but also from the two-member sentences with the same verb forms.

The given work aims to highlight the similarities and differences between the aspects of expression and content, to display the specificity of this type of indefinite-personal sentences which are yet not fully studied, thus remaining in the shadow.

In Middle Armenian, the indefinite-personal and generalized-personal one-member sentences, used in direct speech, are in the Imperative Mood of the second person singular or plural verbs, coordinated with the words naming people, thus being used in various speech situations, depending on the circumstances.

As a result of our research, we have come to the following conclusion: in the formation of the communication units expressed via second person and used in the function of the direct speech, great part is played by such circumstances as the presence or absence of indirect objects in some situations and in the author's words, as well as the semantic aspect of the given sentence.

**Keywords and phrases:** Middle Armenian, indefinite-personal and generalized-personal one-member sentences, direct speech, author's words, speech situation, indirect object.

**АНАЛИЗ НЕОПРЕДЕЛЕННО-ЛИЧНЫХ И ОБОБЩЕННО-  
ЛИЧНЫХ ОДНОСОСТАВНЫХ ПРЕДЛОЖЕНИЙ  
СРЕДНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА, ПРЕДСТАВЛЕННЫХ В ПРЯМОЙ  
РЕЧИ**

**Г. К. ХАЧАТРЯН.**

д. филол. н.  
gxachatryan@yahoo.com

**Аннотация**

Лингвистические факты доказывают, что в зависимости от речевой ситуации в среднеармянском языке во 2-м лице употребляются не только обобщенно-личные, но и неопределенно-личные односоставные предложения, которые, имея некоторые общие черты в плане выражения, в определенной степени могут различаться в

содержательном плане не только друг от друга, но и от двусоставных предложений, выраженных одинаковыми глагольными формами.

Наша цель состоит в том, чтобы выявить ряд общих черт и различий в планах выражения и содержания названных предложений, выявить характерные черты того типа неопределенно-личных предложений, которые остались за пределами лингвистических исследований.

Неопределенно-личные и обобщенно-личные сложные предложения, встречающиеся в прямой речи среднеармянского языка, выражаются во 2-м лице единственного или множественного числа повелительного наклонения глаголов, которые могут связываться с предметами, указывающими на лицо, но в зависимости от разных обстоятельств, они используются в разных речевых ситуациях.

В результате исследования мы пришли к выводу, что факторами, которые играют существенную роль в составе коммуникативных единиц, используемых в качестве прямой речи, выраженной во 2-м лице, являются наличие или отсутствие дополнения следствия в определенной речевой ситуации и в авторской речи с учетом смыслового аспекта данного предложения.

**Ключевые слова и словосочетания:** среднеармянский язык, неопределенно-личные и обобщенно-личные односоставные предложения, прямая речь, авторская речь, речевая ситуация, косвенное дополнение.

### ***Նախաբան***

Մինչև անցյալ դարի 50-ական թթ. ժամանակակից հայերենի բայական միակազմ նախադասությունները ընդհանուր կերպով համարվել են անենթակա կամ անդեմ խոսքեր և գերազանցապես ուսումնասիրվել են՝ ըստ արտահայտության պլանի և առանց որոշակի դասակարգման [1, էջ 371-373]:

Անցյալ դարի 2-րդ կեսից սկսած՝ շարահյուսագիտական աշխատություններում մեծ տեղ է հատկացվում նաև ժամանակակից հայերենի միակազմ կառույցների, այդ թվում նաև անորոշ դիմավոր նախադասությունների համակողմանի ուսումնասիրությանը [4, էջ 12-15; 2, էջ 276-279; 8, էջ 395-396; 3, էջ 478-481]: Անորոշ դիմավոր միակազմ նախադասություններն անհրաժեշտ չափով քննության են ենթարկվել նաև գրաբարի և միջին հայերենի լեզվական նյութի հիման վրա [9, էջ 134-138; 6, էջ 30-72]: Ասվածը հավաստումն է այն բանի, որ անորոշ դիմավոր նախադասությունների քերականագիտական ուսումնասիրության առումով առայսօր կատարվել է արդյունավետ աշխատանք: Սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ հայերենի միակազմ նախադասությունների շարքում առկա են լեզվական իրողություններ, որոնք առայսօր դուրս են մնացել լեզվաբանական հետազոտությունների ոլորտից: Խոս-

քը մասնավորապես միջին հայերենի՝ որպես ուղղակիորեն մեջբերվող խոսք գործածվող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների համեմատական քննության մասին է, որին էլ նվիրված է սույն հոդվածը:

Առհասարակ, որպես անորոշ դիմավոր կառույցների արտահայտության հիմնական միջոց առանձնացվում է միայն խոնարհված բայի հոգնակի թվի 3-րդ դեմքը [4, էջ 12; 5, էջ 72]: Ելնելով դրանից՝ Վ. Առաքելյանը և Ս. Գյուլբուդադյանը և ուրիշ լեզվաբաններ շեշտում են, որ ժամանակակից հայերենի անորոշ դիմավոր նախադասություններն արտահայտվում են բոլոր եղանակներով ու ժամանակներով, բացի հրամայական եղանակից [4, էջ 12; 5, էջ 72]: Պ.Վարդապետյանը, բնութագրելով միջին հայերենի անորոշ դիմավոր նախադասությունները, նշում է դրանց գերադաս անդամի ոչ միայն հոգնակի 3-րդ, այլև եզակի 2-րդ դեմքով արտահայտվելու մասին, սակայն որպես ասածի հիմնավորում բերում է միայն ըղձական եղանակի բայածներով արտահայտված նախադասությունների օրինակներ [9, էջ 135-136; 4, էջ 17; 5, էջ 82-85; 6, էջ 37]<sup>1</sup>:

Մինչդեռ լեզվական փաստերը վկայում են, որ անորոշ դիմավոր նախադասությունների գերադաս անդամը գրական հայերենի բոլոր շրջաններում կարող է արտահայտվել նաև հրամայական եղանակի եզակի և հոգնակի թվերի 2-րդ դեմքով [7, էջ 27, 32; 6, էջ 36]: Եվ քանի որ նշված դիմաթվային ձևերով կարող են արտահայտվել նաև ընդհանրական դիմավոր միակազմ, ինչպես նաև երկկազմ նախադասությունների գերադաս անդամները, ուստի անհրաժեշտություն է առաջանում քննությունը կատարել համեմատության միջոցով, որը կարող է տալ մի քանի առկախ հարցերի պատասխաններ, որն էլ քննվող թեմայի արդիականության վկայությունն է: Ուսումնասիրությունը կատարել ենք լեզվական փաստերի նկարագրության, համեմատության, հակադրման ու համադրման, ինչպես նաև արտածման մեթոդների կիրառմամբ:

Լեզվական նյութը քաղել ենք միջինհայերենյան աղբյուրներից, մասնավորապես՝ Վարդան Այգեկցու առակներից (ՎԱԱ), Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքից» (ՍՍԴ), Ամիրդովլաթ Ամասիացու

---

<sup>1</sup> Բերված կարգի նախադասությունները համարվում են ընդհանրական դիմավոր: Մենք ևս վերջին կարծիքին ենք:

«Օգուտ բժշկութեան» բժշկարանից (ԱԱՕԲ) և «Հայրեններից» (Հ), սակայն հողվածում առաջ քաշված տեսական դրույթները որոշ դեպքերում հիմնավորել ենք գրաբարյան և արդիիայերենյան լեզվական փաստերով նույնպես: Անհրաժեշտությունից ելնելով՝ որոշ բնագրային նախադասություններ բերել ենք մասնակի փոփոխություններով (այս դեպքում՝ առանց հղման)՝ չխաթարելով, սակայն, դրանց բուն կառուցվածքը և բովանդակությունը:

***Միջին հայերենի միակազմ նախադասությունների արտահայտության միջոցները***

Միջին հայերենում միակազմ նախադասության գերադաս անդամը կարող է արտահայտվել՝ ա) դիմասահմանափակ (միադիմի) բայերով, բ) անդիմասահմանափակ բայերով, գ) անդիմասահմանափակ բայերի դիմասահմանափակ կիրառությամբ և դ)այլ խոսքի մասերով՝ Յերբ լուսանայ, թող երթայ կտրէ .Խ. կաղնի ջալոտ (ՎԱԱ): Լո՛ւր ինձ. կա՛ց յոտն քո եւ առո՛ղջ կացիր եւ գնա լո՛ւծ քաշէ, որ չի զենեն գքեզ (ՎԱԱ): Եւ կուրացնել յերկու աչաց արժան է (ՍԳԴ): Եւ ասէ հաքիմն. խիստ քաջ. գնա՛ բեր դեկան մի, որ տամ սեւ մլիամի եւ սպիտակ, որ ողջանայ (ՎԱԱ) [6, էջ 29]: Նշվածներից տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են անդիմասահմանափակ բայերով արտահայտվող նախադասությունները, որոնք հայտնի են որպես բայական դիմավոր միակազմ կառույցներ՝ անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր տեսակներով: Թեև դրանց գերադաս անդամներն արտահայտվում են անդիմասահմանափակ բայերի խոնարհված ձևերով, սակայն այդպիսի նախադասություններ կարելի է կազմել՝ ա) ոչ բոլոր անդիմասահմանափակ բայերով, բ) անդիմասահմանափակ բայերի ոչ բոլոր դիմային ձևերով, գ) ոչ բոլոր խոսքային իրադրություններում:

Մասնավորապես՝ ա) հայ շարահյուսագետները նշում են, որ անորոշ դիմավոր նախադասություններում գործողության ենթադրյալ ենթակա կարող են լինել անձ ցույց տվող առարկա կամ առարկաներ [4, էջ 12, 5, էջ 72, 9, էջ 135, 10, c. 14]<sup>2</sup>:

---

<sup>2</sup> Վերջերս, սակայն, ոռու լեզվաբաններից Յիմերլինգը նկատել է, որ անորոշ դիմավոր նախադասություններում գործողության ենթադրյալ ենթակա կարող են լինել ոչ միայն անձնանիշ, այլև կենդանանիշ առարկա կամ առարկաներ: Հմտ. միջին հայերենի հետևյալ նախադասությունները. Ի՞նչ լամ, իմ հայր թագաոր, Ձագերս ի ծոցէս տարեր են

Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամները կարող են արտահայտվել միայն այն անդիմասահմանափակ բայերով, որոնք դասանշային տեսանկյունից համադրելի են անձնանիշ ենթակաների հետ, այսինքն՝ օժտված են կա՛մ միայն անձնանիշ, կա՛մ նաև անձնանիշ առարկաների հետ կապակցման հնարավորությամբ:

բ) Լեզվական փաստերը վկայում են, որ անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամները վերոնշյալ խմբերի անդիմասահմանափակ բայերի ոչ բոլոր դիմային ձևերով կարող են արտահայտվել: Չհաշված մասնակի դեպքերը՝ հիշյալ նախադասությունների գերադաս անդամները գերազանցապես արտահայտվում են՝ 1) եզ. թվի 2-րդ դեմքով՝ Եւ ի թթու իրաց պատրաստ կեցիր, որ շատ օգտէ աստուծով (ԱԱՕԲ). 2) հոգն. թվի 2-րդ դեմքով՝ Եւ ամէն իրք որ զանձն տաքցնէ՝ ի գործ արկէք (ԱԱՕԲ): 2ի Քրիստոս հրամայեաց, թէ ձրի առէք եւ ձրի տուէք (ՎԱԱ). 3) հոգնակի թվի 3-րդ դեմքով՝ Զորօրինակ կրակ ձգեն ի յարդն, որ այրի. նոյնպէս մեղաւոր մարդն առանց խոստովանութեան ի հուրն անշէջ անկանի (ՎԱԱ):

գ) Սակայն քանի որ նշված բայաձևերով արտահայտվում են ոչ միայն միակազմ, այլև երկկազմ նախադասություններ, ապա ստորև փորձենք հստակեցնել այն նախապայմանները, որոնց առկայությամբ միևնույն բայաձևը կարող է դառնալ մի դեպքում երկկազմ, մյուս դեպքում՝ անորոշ դիմավոր միակազմ, իսկ երրորդ դեպքում՝ ընդհանրական դիմավոր միակազմ նախադասության արտահայտության միջոց:

Ուղղակիորեն մեջբերվող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների համեմատական քննություն

Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամների՝ 2-րդ դեմքով արտահայտված լինելն ինքնին ենթադրում է, որ դրանցով արտահայտված բոլոր նախադասությունները պետք է տեղ գտնեն հեղինակի խոսքերի հարևանությամբ, և այդ նախադասությունների միջոցով պետք է արտահայտ-

---

(<, 611): «Ինտո՞ր չի լամ, որ ձագերս են տարած: Զագերս բուներնէն տարած, Իմ սիրտս են էրած» (<, 804):

վեն խոսակցին ուղղված և/կամ վերաբերող մեջբերվող խոսքեր, որը բնորոշ է երկխոսությունների ժամանակ ուղղակիորեն մեջբերվող կառույցներին: Սակայն լեզվական փաստերը ցույց են տալիս, որ վերը նշված բայաձևերով արտահայտված ընդհանրական դիմավոր և անորոշ դիմավոր միակազմ նախադասությունները, որոշ ընդհանրություններ ունենալով հանդերձ, բովանդակային և կառուցվածքային առանձնահատկություններով որոշակիորեն տարբերվում են ոչ միայն մեկը մյուսից, այլև միևնույն բայաձևերով արտահայտված երկկազմ նախադասություններից:

Առաջադիր խնդրի լուծման համար ստորև կդիտարկենք եզակի 2-րդ դեմքով արտահայտված «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ» (ՎԱԱ) և հոգնակի 2-րդ դեմքով արտահայտված «Բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ) նախադասությունները՝ ուշադրություն դարձնելով, թե դրանք խոսքային ինչպիսի՛ իրադրություններում են գործածվում և, վերջին հանգամանքով պայմանավորված, ի՛նչ փոփոխություններ են կրում բովանդակության պլանում:

1. Եզ.թ. 2-րդ դեմքով արտահայտված «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ» նախադասությունը դիտարկենք որոշակի խոսքային իրադրության մեջ: Բնական է, որ ուղղակիորեն մեջբերվող այդ նախադասությանը զուգորդվում է հեղինակի խոսք նույնպես, որում բառային արտահայտություն ունի նաև հաղորդման (այսուհետև հանգման) խնդիր: Վերջինս ցույց է տալիս, թե ով է ասվելիք խոսքի հասցեատերը: Օրինակ՝ Ասէ հայրն ընդ որդին. «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ»: Ակնառու է այն փաստը, որ այս բարդ կառույցի ուղղակիորեն մեջբերվող խոսքը երկկազմ նախադասություն է, որը պայմանավորված է որոշակի խոսքային իրադրությամբ և, ամենակարևորը, հեղինակի խոսքում որոշակի հասցեատեր ցույց տվող ընդ որդին հանգման խնդրի առկայությամբ: Ընդ որում, այս գործածության մեջ «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ» նախադասությունը համարվում է երկկազմ՝ անկախ այն բանից՝ նրանում առկա՛ է քերականորեն արտահայտված ենթակա (դու), թե՛ այն ենթադրվում է տվյալ նախադասության բովանդակության պլանում և անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել:

2. Միևնույն «Մի՛ գըր խորհուրդն մարդոյ այտներ» նախադասությունը դիտարկենք դարձյալ հեղինակի խոսքի զուգորդությամբ, որում,



սակայն, հանգման խնդիրը բառային արտահայտություն չունի և հնարավոր չէ վերականգնել, քանի որ այն տվյալ նախադասության բովանդակության պլանում չի ենթադրվում. Ասէ իմաստունն. «Մի՛ գքո խորհուրդն մարդոյ այտներ»: Հեղինակի խոսքում որոշակի հասցեատեր ցույց տվող անդամի բացակայության պատճառով «Մի՛ գքո խորհուրդն մարդոյ այտներ» նախադասությունը վերածվում է ընդհանրական դիմավոր միակազմ կառույցի, ինչին, անշուշտ, նպաստում են այդ նախադասությամբ արտահայտված միտքը և այն, որ խոսող-խոսակից զույգի խոսակիցը բացակայում է, ուստի չի ապահովվում որոշակի խոսքային իրադրություն, և անհնար է դառնում վերականգնել «Մի՛ գքո խորհուրդն մարդոյ այտներ» նախադասության կազմում բացակա ենթական:

Հարկ է ընդգծել, որ 1-ին և 2-րդ կետերում դիտարկված և այս կարգի նախադասությունների ընդհանրական արժեք ձեռք բերելու հարցում էական դեր ունեն նաև նրանցով արտահայտված մտքերը, որոնք կարելի է գործածել ոչ միայն որոշակի խոսքային իրադրության մեջ՝ այն ուղղելով որոշակի խոսակցի կամ խոսակիցների, այլև որոշակի խոսքային իրադրությունից դուրս՝ այն ուղղելով բոլորին: Հենց վերջին դեպքում էլ ձևավորվում է ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություն, որի գերադաս անդամը հավասարապես կարող է արտահայտվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի 2-րդ դեմքով:

Նկատենք, որ եթե դիտարկվող նախադասությունը հանդես է գալիս միայնակ՝ առանց հեղինակի խոսքի զուգորդության, ապա դարձյալ ձեռք է բերում ընդհանրական արժեք՝ վերաբերելով բոլորին և վերածվելով ընդհանրական դիմավոր միակազմ կառույցի, քանի որ այն դարձյալ գործածվում է որոշակի խոսքային իրադրությունից դուրս և խոսող-խոսակից զույգի բացակայության պայմաններում՝ «Գաղտնիքդ ոչ ոքի մի՛ խոստովանիր»: Այս դեպքում ևս անհնար է դառնում վերականգնել ենթական, քանի որ նմանատիպ կիրառություններում այն չի ենթադրվում:

3. Հոգն. թ. 2-րդ դեմքով արտահայտված «Բերէ՛ք զմար իմ» նախադասությունը դիտարկենք որոշակի խոսքային իրադրության մեջ, այն է՝ հեղինակի խոսքի զուգորդությամբ, որի կազմում բառային արտահայտություն ունի նաև հանգման խնդիրը, ինչպես՝ Եւ նա ասէ պահնորդացն, թէ բերէ՛ք զմար իմ: Կասկած չկա, որ այս կառույցում «Բերէ՛ք

զմար իմ» ուղղակի խոսքը թերի երկկազմ նախադասություն է (անհրաժեշտության դեպքում կարելի է վերականգնել այդ նախադասության դուք ենթական), և դա՝ շնորհիվ *պահնորդացն* հանգման խնդրի: Կարևորենք, որ այստեղ ևս, ինչպես 1-ին կետում, հաղորդակցական միավորի երկկազմ լինելու հարցում էական դեր ունեն երեք հանգամանք՝ տվյալ նախադասության՝ որոշակի խոսքային իրադրության մեջ գործածելը, հեղինակի խոսքում հանգման խնդրի՝ բառային արտահայտություն ունենալը և տվյալ նախադասության իմաստային կողմը [7, էջ 58; 6, էջ 54]:

4. Հոգն. թ. 2-րդ դեմքով արտահայտված «Բերէ՛ք զմար իմ» նախադասությունը դարձյալ գործածենք հեղինակի խոսքի զուգորդությամբ և որոշակի խոսքային իրադրության մեջ, սակայն առանց հիշատակելու հանգման խնդրի, այսինքն՝ առանց հստակեցնելու, թե որոշակիորեն ո՛ւմ է ուղղված խոսքը՝ Եւ նա ասէ, թէ բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ): Հանգման խնդրի բացակայության պատճառով խոսքի հեղինակի գործողությունն այստեղ որոշակի հասցեատեր չունի: Սակայն հետաքրքրականն այն է, որ, պայմանավորված խոսքային իրադրությամբ, այս դեպքում հասցեատեր են ենթադրվում ոչ թե բոլորը, ինչպես 2-րդ կետում դիտարկված նախադասության մեջ, այլ անորոշ անձինք, որոնց էլ ենթադրաբար կարելի է հասցեագրել խոսքը:

Որոշակի խոսակից կամ խոսակիցներ նշող հանգման խնդրի բացակայությամբ պայմանավորված՝ այս կարգի ուղղակիորեն մեջբերվող խոսքերը, որպես կանոն, պատասխան չեն ենթադրում: Բանն այն է, որ պատասխան խոսքի դեպքում անհրաժեշտություն կառաջանար հեղինակի խոսքում անպայման հիշատակելու կամ ենթադրելու և վերականգնելու ենթական, ինչը, սակայն, հնարավոր չէ՝ պայմանավորված պատասխան խոսքին նախորդած կառույցի հեղինակի խոսքում հանգման խնդրի բացակայությամբ: Այլ կերպ ասած՝ 2-րդ դեմքով արտահայտված և ուղղակիորեն մեջբերվող այս կարգի նախադասությունները երկխոսության միավոր չեն դառնում, հակառակ դեպքում պատասխանողների դերում չեն կարող լինել նրանք, ում ենթադրաբար ուղղված է անորոշ դիմավոր միակազմ նախադասությամբ արտահայտված մեջբերվող խոսքը: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ «Եւ նա ասէ, թէ բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ) կառույցի ընդգծված և նման կարգի նախադասություն-

ները ոչ թե թերի են (զեղչված ենթակայով երկկազմ), այլ անորոշ դիմավոր միակազմ, քանի որ նրանցում ենթական բացակայում է, և այն հնարավոր չէ վերականգնել:

Անկասկած է, որ «Բերէ՛ք զմար իմ» կարգի նախադասութան՝ անորոշ դիմավոր միակազմի վերածվելուն նպաստում է նաև նրանով արտահայտված միտքը, որը ոչ բոլոր խոսքային իրադրություններում կարելի է գործածել: Լինելով առօրեական, իրավիճակային խոսք և ոչ թե առածական բնույթի խորհուրդ, պատգամ և այլն՝ այն կարելի է ուղղել կա՛մ որոշակի, կա՛մ անորոշ անձանց՝ արդյունքում ստանալով, համապատասխանաբար, երկկազմ (ինչպես 3-րդ կետում) կամ անորոշ դիմավոր միակազմ (ինչպես այս դեպքում) նախադասություն:

2-րդ դեմքով արտահայտված անորոշ դիմավոր միակազմ նախադասությունները կարող են հանդես գալ միայն հեղինակի խոսքի զուգորդությամբ, այսինքն՝ խոսքի մեջ նրանք չեն կարող գործածվել որպես շարահյուսական ինքնուրույն միավոր, ինչն անմիջականորեն կապ ունի նրանցում արտահայտվող գործողության բովանդակության հետ: Բանն այն է՝ 2-րդ դեմքով անորոշ դիմավոր միակազմ նախադասություններում որոշակիորեն նշվում կամ խոսքային իրադրությունից ենթադրվում է նրանցով արտահայտված գործողության կատարման ժամանակը: Ավելին՝ այդ գործողությունը կատարելու կամ չկատարելու մասին սովորաբար հիշատակվում է տվյալ խոսքային հատվածին հաջորդող նախադասության մեջ, որը նույնպես անորոշ դիմավոր միակազմ կառույց է: Օր.՝ «Եւ նա ասէ. թէ բերէ՛ք զմար իմ» (ՎԱԱ) բարդ կառույցին հաջորդում է նրա հետ տրամաբանական, պատճառահետևանքային կապ արտահայտող միակազմ նախադասություն՝ «Եւ իբրև բերին .... », որը ևս հիմնավոր փաստարկ է 2-րդ դեմքով արտահայտված «բերէ՛ք զմար իմ» նախադասության անորոշ դիմավոր միակազմ լինելու մասին: Ահա այդ խոսքային հատվածն ամբողջությամբ՝ Եւ նա ասէ. թէ բերէ՛ք զմար իմ՝ զի համբուրեցից զնա: Եւ իբրև բերին, և նա խածեալ եհատ զքիթ մօրն (ՎԱԱ), որում ընդգծված և՛ առաջին, և՛ երկրորդ նախադասություններով արտահայտված գործողությունները ենթադրաբար վերագրվում են անորոշ անձանց կամ անձի<sup>3</sup>: Կարևորենք, որ նմանատիպ խոսքային հատ-

<sup>3</sup> Ի դեպ՝ այս հատվածում 3-րդ դեմքով արտահայտված գործողությունը ենթադրաբար կարելի է վերագրել ոչ միայն մի քանի, այլև մեկ անձի:

վածներում 2-րդ դեմքով անորոշ դիմավոր միակազմ նախադասություններին սովորաբար հաջորդում են հոգնակի թվի 3-րդ դեմքով արտահայտվող անորոշ դիմավոր միակազմ կառույցներ:

«Եւ նա ասէ. թէ բերէ՛ք զմար իմ» կառույցի ուղղակի խոսքի միակազմ լինելու մասին լավագույն փաստարկներից մեկն էլ նրա՝ անուղղակի փոխակերպված տարբերակն է և նույնպես անորոշ դիմավոր միակազմ կառույց (շարահյուսական համանշտություն), սակայն, բնական է՝ արտահայտված հոգնակի թվի 3-րդ դեմքով՝ Եւ նա ասէ, զի բերեն զմար իւր:

Ուղղակի խոսքով արտահայտված անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամը հաճախակի հանդես է գալիս դիմավոր բայի հոգնակի թվի 2-րդ դեմքով, սակայն երբեմն այն կարող է հանդես գալ եզակի թվի 2-րդ դեմքով: Միջինհայերենյան աղբյուրներում նմանատիպ նախադասություն մեզ չի հանդիպել, ուստի բերենք գրաբարյան օրինակ՝ միաժամանակ նշելու, որ նմանատիպ կառույցները բնորոշ են գրական հայերենի այլ շրջաններին նույնպես: Խոսքը աստվածաշնչյան «Եւ ասէ Յովրամ. լծեա՛»<sup>4</sup> նախադասության մասին է, որի կազմում չի հիշատակվում, թե ում է ուղղված խոսքը: Նրանում հանգման խնդիրը բացակայում է, սակայն խոսքային իրադրությունից ենթադրվում է, որ Հովրամի հրամանը (լծեա՛) ո՛չ որոշակի անձի է ուղղված, ո՛չ էլ ընդհանրական բնույթ ունի. այն ուղղված է անորոշ անձի (կամ անձանց): Ասվածի վկայությունը հենց նրան հաջորդող նախադասությունն է՝ «Եւ լծեցին կառս», որը նույնպես, ինչպես նրան նախորդող կառույցը, անորոշ դիմավոր է, քանի որ արտահայտված գործողությունը նրանում ևս կարելի է ենթադրաբար վերագրել անորոշ անձի կամ անձանց, բայց ոչ որոշակի անձանց (ինչպես երկկազմ նախադասություններում) կամ ընդհանրապես բոլորին (ինչպես ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններում): Հմմտ. նաև հետևյալ կառույցը՝ Թումանյանի «Անուշից».<sup>4</sup>Գյուղը բաժանվեց երկու բանակի .../Հարա՛յ են տալիքաշի՛ հա, քաշի՛...»./ Ու դուրս քաշեցին զոռով երկուսին [11]:

#### ***Եզրակացություններ***

Որպես ուղղակի խոսք գործածված հաղորդակցական միավորի միակազմ կամ երկկազմ լինելու հարցում էական դեր ունի երեք հան-

---

<sup>4</sup> Դ Թագ., Թ, 9:

գամանք՝ ա) տվյալ նախադասության՝ որոշակի խոսքային իրադրության մեջ կամ նրանից դուրս գործածվելը, բ) հեղինակի խոսքում հանգման խնդրի՝ բառային արտահայտություն ունենալը կամ բացակայությունը և գ) տվյալ նախադասությամբ արտահայտված միտքը:

Վերոբերյալ դիտարկումներից պարզ է դառնում, որ անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների գործածության ոլորտներից մեկը ուղղակիորեն մեջբերվող խոսքն է: Որպես ուղղակիորեն մեջբերվող խոսք հանդես են գալիս 2-րդ դեմքով արտահայտված գերադաս անդամով անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունները, որոնք ունեն որոշ ընդհանրություններ, սակայն միմյանցից առանձնանում են նաև մի շարք տարբերություններով:

1. Ուղղակիորեն մեջբերվող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների միջև հիմնականում նկատելի են հետևյալ ընդհանրությունները.

ա) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է այն անդիմասահմանափակ բայերով, որոնք դասանշային տեսանկյունից համադրելի են կա՛մ միայն անձնանիշ, կա՛մ նաև անձնանիշ ենթականների հետ: Գերադաս անդամի արտահայտության միջոցը հիշյալ բայերի 2-րդ դեմքն է<sup>5</sup>:

բ) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների զուգորդությամբ հանդես եկող հեղինակի խոսքում հանգման խնդիրը, որպես կանոն, բառային արտահայտություն չունի և չի ենթադրվում, ինչն էլ հիմք է ծառայում, որ ուղղակիորեն մեջբերվող խոսքերը ձեռք բերեն ոչ թե երկկազմ, այլ միակազմ նախադասության արժեք:

գ) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններից հետո չի ենթադրվում պատասխան խոսք, ասել է՝ այդ նախադասությունների մասնակցությամբ երկխոսություններ չեն ձևավորվում, հակառակ դեպքում դրանք չեն լինի հիշյալ միակազմ նախադասություններով արտահայտված գործողություններին վերաբերող համարժեք պատասխաններ:

---

<sup>5</sup> Այս և հայտնի այլ դրույթներին (օր.՝ 2.4. ենթակետ) հղում չենք կատարում:

դ) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունները խոսքային այլ իրադրություններում և այլ կազմությամբ նախադասությունների զուգորդությամբ կարող են հանդես գալ որպես երկկազմ նախադասություններ:

2. Ուղղակիորեն մեջբերվող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունները, որոնք արտահայտվում են 2-րդ դեմքի գերադաս անդամով, միմյանցից հիմնականում տարբերվում են հետևյալ հատկանիշներով.

ա) Անորոշ դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամը կարող է արտահայտվել դիմավոր բայի հոգնակի (հազվադեպ՝ եզակի) 2-րդ դեմքով, մինչդեռ ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների գերադաս անդամը հավասարապես կարող է արտահայտվել թե՛ եզակի և թե՛ հոգնակի 2-րդ դեմքերով<sup>6</sup>:

բ) Անորոշ դիմավոր միակազմ նախադասությունները հանդես են գալիս միայն հեղինակի խոսքի զուգորդությամբ, մինչդեռ ընդհանրա-

---

<sup>6</sup> Հոգն. թ. 2-րդ դեմքով արտահայտված և ուղղակիորեն մեջբերվող անորոշ դիմավոր միակազմ նախադասություններին բնորոշ հատկանիշներով բնութագրվում են նաև այդ նախադասությունների՝ անուղղակիորեն մեջբերվող և դարձյալ անորոշ դիմավոր տարբերակները: Հմմտ. Եւ նա ասէ. թէ բերէ՞ք զմար իմ» և «Եւ նա ասէ, զի բերեն զմար իւր»: Երկու դեպքում էլ խոսողի գործողությունը որոշակի հասցեատեր չունի (պատճառը հանգման խնդրի բացակայությունն է), որը հիմք է տալիս պնդելու, որ «Եւ նա ասէ, զի բերեն զմար իւր» կառուցի ընդգծված նախադասությունը նույնպես ոչ թե թերի է (զեղչված ենթակայով), այլ անորոշ դիմավոր միակազմ. նրանում բացակայում է, և հնարավոր չէ վերականգնել ենթական: Բերված երկու կառուցների տարբերությունն այն է, որ ուղղակիորեն մեջբերված նախադասության մեջ գերադաս անդամն արտահայտված է հոգնակի 2-րդ դեմքով (բերէք), իսկ անուղղակիորեն մեջբերված նախադասության մեջ՝ հոգնակի 3-րդ դիմային ձևերով (բերեն), որը պայմանավորված է նմանատիպ նախադասություններում կատարվող փոխակերպումով, որի ընթացքում կատարվում են նաև ստորոգյալների դիմային փոփոխություններ:

Հմմտ. նաև հետևյալ հատվածը՝ բերված միևնույն առակի այլ տարբերակից, որում պատումի հեղինակը շարադրանքն առաջ է տանում ոչ թե ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեջբերվող միակազմ խոսքով, այլ պատմողական հնչերանգով երկկազմ նախադասությամբ (Եւ նա ետ կոչել զմար իւր), բայց դարձյալ՝ առանց հանգման խնդրի գործածելու: Հենց դա էլ պատճառ է դառնում, որ այդ երկկազմ նախադասությանը հաջորդեն ոչ թե երկկազմ, այլ անորոշ դիմավոր միակազմ նախադասություններ (ընդգծվում են)՝ «Եւ նա ետ կոչել զմար իւր. իբրեւ բերին զմարն, .... խածեաց զքիթն մօրն. յայնժամ սաստեցին նմա, թէ ընդէ՛ր արարեր զայդպիսի անարեւնութիւնդ ընդդէմ ծնաւդի քո .... » (ՎԱԱ):

կան դիմավոր նախադասությունները կարող են հանդես են գալ թե՛ հեղինակի խոսքի զուգորդությամբ, թե՛ որպես շարահյուսական ինքնուրույն միավոր:

գ) Անորոշ դիմավոր միակազմ նախադասությունները հանդես են գալիս միայն որոշակի խոսքային իրավիճակներում, մինչդեռ ընդհանրական դիմավոր նախադասությունները գործածվում են որոշակի խոսքային իրավիճակներից դուրս:

դ) Անորոշ դիմավոր միակազմ նախադասության գործողությունն ուղղվում է անորոշ անձանց, բայց կարող են կատարել ոչ միայն ինչ-որ անձինք, այլև մեկ անձ, մինչդեռ ընդհանրական դիմավոր միակազմ նախադասության գործողությունն ուղղվում է ընդհանրապես բոլորին, և կարող են կատարել բոլորը:

ե) Անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր նախադասությունների ձևավորման հարցում էական դեր ունի ուղղակիորեն մեջբերվող խոսքի բովանդակային կողմը. անորոշ դիմավոր նախադասություններում առկա է կամ ենթադրվում է տվյալ գործողության կատարման որոշակի կամ մոտավոր ժամանակը, մինչդեռ ընդհանրական դիմավոր նախադասությունների արտահայտության պլանում գործողության կատարման ժամկետ չի սահմանվում, իսկ բովանդակության պլանում ենթադրվում է «միշտ», «ընդհանրապես», «առհասարակ» (և այլն) իմաստները, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են նաև բառային արտահայտություն ունենալ [7, էջ 58]:

զ) Թեև ուղղակիորեն մեջբերվող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասություններից հետո չի ենթադրվում պատասխան խոսք, սակայն անորոշ դիմավոր միակազմ նախադասություններին ավելի հաճախ հաջորդում են դարձյալ անորոշ դիմավոր միակազմ նախադասություններ, որոնց գերադաս անդամն արդեն արտահայտվում է 3-րդ դեմքով և տեղեկություն է տալիս իրենց նախորդած 2-րդ դեմքով միակազմ նախադասությունների գործողությունները կատարելու կամ չկատարելու մասին:

է) Ուղղակիորեն մեջբերվող անորոշ դիմավոր միակազմ նախադասությունների ձևավորմանը նպաստում է նաև նրանց բովանդակային պլանը. այդ նախադասություններով արտահայտվում են տվյալ խոսքային հատվածի տրամաբանությունից բխող մասնակի, իրավիճակային,

տվյալ խոսքային իրադրությամբ պայմանավորված և նրանով սահմանափակվող գործողություններ, մինչդեռ ընդհանրական դիմավոր միակզմ նախադասությունների միջոցով արտահայտվում են փորձով ապացուցված, ավանդաբար փոխանցված, ասացվածքային արժեք ունեցող խրատներ, խորհուրդներ, պատգամներ և այլն:

### **Համառոտագրություններ**

ԱԱՕԲ - Ամիրտովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Ե., 1940:

<https://digilib.aua.am/book/57/%D5%95%D5%A3%D5%B8%D6%82%D5%BF%20%D4%B2%D5%AA%D5%B7%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D5%A1%D5%B6>

Հ - Հայրեններ, աշխատասիր. Ա. Շ. Մնացականյանի, Ե., 1995:

ՀԹՊ - Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Ե., 1969: .

[http://eanc.net/EANC/search/?interface\\_language=am](http://eanc.net/EANC/search/?interface_language=am)

ՍՍԴ – Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Ե., 1958:

[http://haygirk.nla.am/upload/1512-1940/1901-1940/datastanagirq\\_1918.pdf](http://haygirk.nla.am/upload/1512-1940/1901-1940/datastanagirq_1918.pdf)

ՎԱԱ – Վարդան Այգեկցի, Ժողովածոյ առակաց Վարդանայ

[https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86\\_%D4%B1%D5%85%D4%B3%D4%B5%D4%BF%D5%91%D4%BB\\_%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B5\\_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81\\_%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5.pdf](https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86_%D4%B1%D5%85%D4%B3%D4%B5%D4%BF%D5%91%D4%BB_%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B5_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81_%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5.pdf)

### **Գրականության ցանկ**

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

2. Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., Հայոց լեզու, II մաս, Շարահյուսություն, Ե., 1975:

3. Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզու. Շարահյուսություն, հ. 3, Ե., 1976:

4. Առաքելյան Վ. Դ. Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Ե., 1964:



5. Գյուլբուդադյան Ս. Վ., Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1967:
6. Խաչատրյան Գ. Կ., Միջին հայերենի միակազմ նախադասությունները, Ե, 2022:
7. Խաչատրյան Գ.Կ., Գրաբարի միակազմ նախադասությունները, Ե., 2002:
8. Զահուկյան Գ. Բ., ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:
9. Վարդապետյան Պ. Կ., Միջին գրական հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն // «Ակնարկներ գրական միջին հայերենի պատմության», հ. Բ., Ե., 1975:
10. Циммерлинг А. В., Имперсональные конструкции и дативно-предикативные структуры в русском языке // “Вопросы языкознания”, 2018, 5:
11. Հովհ. Թումանյան, Պոեմներ  
[http://eanc.net/EANC/search/?interface\\_language=am](http://eanc.net/EANC/search/?interface_language=am)

**ԽՆԴՐԱՆՔԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԸ Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅԻ «ԱՆՆԱ  
ԿԱՐԵՆԻՆԱ» ՎԵՊՈՒՄ  
ՎԵՐԱ ԱԴԱՄՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի ռուս բանասիրության ֆակուլտետ  
Ասիստենտ, ք. գ. թ.  
Vera.adamyana@ysu.am,

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-50

**Համառոտագիր**

Հոդվածը նվիրված է Լ.Ն. Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպում խնդրանքի խոսքային ակտի վերլուծությանը: Մենք, մասնավորապես, դիտարկում ենք խնդրանքի արտահայտման ուղղակի եղանակները: Այս ուսումնասիրության նպատակն է բացահայտել վեպում խնդրանքի արտահայտման ամենատարածված ձևաբանական և շարահյուսական եղանակները: Խնդրանքի ուղղակի ազդեցության մեթոդների շարքում մենք տարբերակում ենք պերֆորմատիվ խնդրանքներ, որոնք ուղղակի, չփոփոխված խնդրանք են, և հրամայական կառույցներ: Վերջիններս, իրենց հերթին, բաժանել ենք առանց քաղաքավարության մարկերների հրամայական կառույցների (հրամայական եղանակով բայ՝ համապատասխան հնչերանգով), «пожалуйста» («խնդրեմ») և «ради Бога» («ի սեր Աստծո») քաղաքավարության մարկերներով հրամայական կառույցների և «так» («այսպես»), «же» («դե»), «только» («միայն») կամք արտահայտող մասնիկներով հրամայական կառույցների: Հետազոտությունը ցույց է տվել, որ քաղաքավարության մարկերների շարքում գերիշխողը «пожалуйста» մասնիկն է: Ֆորմալ իրավիճակում «пожалуйста» մասնիկը օգտագործվում է էթիկետի նորմերը պահպանելու համար, մինչդեռ ոչ ֆորմալ պայմաններում այն կարող է ունենալ իմաստների լայն շրջանակ: Կամք արտահայտող մասնիկների մեջ գերիշխողը «же» մասնիկն է:

**Բանալի բառեր և բառակապակցություններ՝** խոսքային ակտ, խնդրանք, հրամայական կառույցներ, իմպերատիվ, պերֆորմատիվ խնդրանք:

## THE SPEECH ACT OF REQUEST IN THE NOVEL “ANNA KARENINA” BY L.N. TOLSTOY

ADAMYAN VERA

Yerevan State University, Department of Russian Philology  
Vera.adamyan@ysu.am

### Annotation

Խնդրո առարկա բարբառում գործառող *u*, *շ*, *խ* խուլ շփականներ արաբերենում ևս առկա են: Սրանք կայուն հնչյուններ են, ուստի, քիչ բացառություններով հանդերձ, պահպանվել են ոչ միայն բարբառային հայերեն, այլ նաև փոխառյալ բառերում. *սարաբ* «պատճառ», *ջինս* «ցեղ, տեսակ», *շահադ* «վկա», *շաբաթ* «օշարակ», *խարջ* «ծախս, հարկ», *խարաբ* «ավերակ» և այլն:

Ձայնորդ բաղաձայնները լեզուներում առավել կայուն հնչյուններ են: Բարբառում գրական հայերենի *մ*, *ն*, *լ*, *ռ*, *ր*, *յ* ձայնորդները բառի բոլոր դիրքերում անփոփոխ են մնացել. Բացառություններն առաջացել են առնմանության, տարնմանության, դրափոխության հետևանքով: Արաբերեն ծագման փոխառություններում *մ*, *ն*, *լ*, *յ* ձայնորդները ևս պահպանվել են. *մուրազ* «նպատակ, ցանկություն», *նազար* «չար աչք», *մասալա* «առակ, հեքիաթ», *յանի* «այսինքն» և այլն: Ուշագրավ է *ռ*, *ր* ձայնորդների կիրառությունը. բարբառում դրանցով սկսվող բառեր չկան: *Ռ* բաղաձայնը բառամիջում և բառավերջում պահպանվել է (առաջ<առաջ), իսկ *ր*-ն, հարյուրավոր բառերում կայուն պահպանվելով, մի խումբ բառերում հնչյունափոխվել է *ռ*-ի (մարդ<մառթ): Արաբերենում

առկա է միայն *r* բաղաձայն. *n-r* հնչույթային տարբերակում չկա: Քանի որ բարբառում որևէ բառ *n* տառով չի սկսվում, արաբերենից և այլ լեզուներից փոխառյալ բառերում բառասկզբում *n*-ից առաջ գրվում և արտասանվում է *ը/հը՝ըռազի/հըռազի* «համաձայն, գոհ»: Պետք է նշել, որ սա, որքանով հնարավոր էր պարզել, բարբառում արձանագրված, արաբերեն ծագման միակ փոխառյալ բառն է: Արաբերեն բառերը կիրառվում են հիմնականում *ր*-ով՝ *հարամ* «անարդար, ապօրինի», *հէյրան* «հիացած», *կարար* «հանգիստ», հազվադեպ՝ *n*-ով. *ֆըռսանդ* «առիթ», *սըռ* «զաղտնիք» և այլն:

Ուշագրավ են արաբերենի հատկապես այն բաղաձայնների կրած փոփոխությունները, որոնց համարժեքները չկան պարսկերենում և հայերեն բարբառում: Ինչպես վերը նշել ենք, այդ բաղաձայնները պարսկերենում փոխարինվել են հնչարտաբերական հատկանիշներով առավել մոտ, համապատասխան բաղաձայնով: Դիտարկենք դրանց դրսևորումները խնդրո առարկա հայերեն բարբառում՝ արձանագրելու նմանությունները և տարբերությունները: Ինչպես նշել ենք, արաբերենի *s*, *š* և *š* բաղաձայնները, պարսկերենում պարզեցվելով, հնչում են որպես *s*: Հայերեն բարբառում արաբերենի այս բաղաձայնները համապատասխանեցվել են *ս*-ին. *իսան* «մարդ» (արաբ.՝ *insān*), *հիսաբ* «հաշիվ» (*hisāb*), *մասալա* «առակ, հեքիաթ» (*matāla*) և այլն:

Արաբերեն բաղաձայնների հաջորդ՝ *z*, *ž* և *z* եռաշարքը պարսկերենում արտահայտվել է *z*-ով: Հայերեն բարբառում ևս այս երեք բաղաձայնները փոխարինվել են *զ*-ով. *ազիզ* «սիրելի» (*#aziz*), *զուլում* «փորձանք, չարիք» (*žulum*), *նազար* «չար աչք» (*nazar*) և այլն:

Հաջորդ՝ *t* և *č* բաղաձայնները պարսկերենում գրվում և հնչում են *t*: Հայերեն բարբառում բառասկզբում *տ* բաղաձայնով սկսվող փոխառյալ բառեր արձանագրված չեն [2, էջ 377], ուստի բառի բոլոր դիրքերում *t* և *č* բաղաձայնների փոխարեն կիրառվում է շնչեղ խուլ *թ* բաղաձայնը՝ *թաբախ* «պնակ», *թամամ* «ամբողջ, կատարյալ», *թասիբ* «պատիվ», *խաթա* «փորձանք», *խաթըր* «հարգ, պատիվ» և այլն:

Արաբերենի ձայնեղ *d* և էմֆատիկ *ḍ* բաղաձայնները պարսկերենում գործառում են *d*-ով: Հայերեն բարբառում *d*-ն ևս համապատասխանում *դ* հնչյունին, ինչպես՝ *դււվի* «վեճ», *կայդա* «կարգուկանոն, քաղաքավարություն» և այլն: Էմֆատիկ *ḍ*-ն, սակայն, հիմնականում հնչյունափոխ-



վել է *գ-ի.բազի* «որոշ, մի քանի» (*ba'd*), *զարար* «վնաս» (*darar*), *զարբ* «հարված» (*darb*), *հազրր* «պատրաստ» (*hadir*), *հավուզ* «ավազան» (*hauz*) և այլն: Սա, հավանաբար, թուրքերենի ազդեցության հետևանք է:

Ինչ վերաբերում է *հ* և *ի* բաղաձայններին, ապա նրանք պարսկերենում, ինչպես նշել ենք, կիրառվում են *հ*-ով: Արարատյան բարբառում *հ* բաղաձայնը խոսվածքների գերակշիռ մասում հիմնականում անփոփոխ պահպանվել է: Մի խումբ խոսվածքներում տեղի են ունեցել *հ<Ֆ* (օրինակ՝ *հող<Ֆող*), այլ խմբում՝ *հ<հ'* (օրինակ՝ *առու<հ'առու*), իսկ խոսվածքների երրորդ խմբում՝ *հ<խ* (օրինակ՝ *հաց<խաց*) հնչյունափոխություններ: Նշվում է, որ թուրքերենից ու թուրքերենի միջոցով անցած (օրինակ՝ արաբերեն) օտար փոխառյալ բառերում *հ*-ն անփոփոխ պահպանվել է՝ *հարամ*, *հալալ*, *հազրր* և այլն<sup>[2, էջ 74-75]</sup>: Արաբերեն ծագման բառերում ևս այս հնչյունը պահպանվել է՝ *թամահ* «ագահություն», *ջավահիր* «գոհար, ակնեղեն», *շահահ* «վկա», *ջրհէզ* «օժիտ» և այլն: *հ*-ի հնչյունափոխությամբ զուգահեռ կիրառվող բառային միավորները սակավ են՝ *ջահէլ/ջայէլ* «1.երիտասարդ, 2.անփորձ», *ֆահմ/ֆայմ* «շնորհք, զգացություն», *հինա/սինա* «հինա» և այլն:

Արաբերենի *զ* (կաֆ) և *ց* (դայն) բաղաձայնները, օտար լինելով պարսկերենի հնչյունական համակարգի համար, թեև գրական պարսկերենում չեն տարբերակվում, սակայն տարբերակվում են նրա բարբառների մեծ մասում: Ինչ վերաբերում է Արարատյան բարբառի խոսվածքներին, ապա բառասկզբում տեղի են ունեցել *զ<կ'կասար* «մսագործ» (*qaṣṣāb*), *կուրբան* «զոհ, մատաղ» (*qurbān*) և այլն, իսկ բառամիջում և բառավերջում՝ *զ<խ* հնչյունափոխություններ՝ *թաբախ* «պնակ» (*tabaq*), *նախշ* «զարդանկար» (*naqš*), *լոխում* «փափուկ քաղցրավենիք» (*luqum*) և այլն: Մի շարք բառերի դեպքում կիրառվում են նաև *զ<ղ* հնչյունափոխությամբ ձևեր՝ *կալա/ղալա* «բերդ» (*qala'a*), *կումար/ղումար* «դրամով խաղ» (*qumār*), *կուվաթ/ղըվաթ* «ուժ» (*qūwa*) և այլն:

Պարսկերենին բնորոշ չէ հատկապես միավանկ բառերի բառավերջում բաղաձայնների կուտակումը, ուստի այդ լեզվի մի շարք բարբառներում բաղաձայնների միջև ավելանում է *էպենթետիկ ձայնավոր*<sup>3</sup>: Կարծում ենք, որ հայերենի բազմաթիվ, այդ թվում նաև՝ Արարատյան բարբառի՝ արաբերեն ծագման փոխառյալ մի շարք բառերում նմանօրինակ ձայնավորի առկայությունը կարող է լինել նաև պարսկերենի հնարավոր ազդեցության հետևանք. *ասրլ* «ծագումը, հիմքը», *ախրր* «վերջը,

հետագան», *խաթըր* «պատիվ, ակնածություն», *հազըր* «պատրաստ», *զալըմ* «ուժեղ, դաժան, անգույթ» և այլն:

Ինչ վերաբերում է ձայնավորական համակարգին, ապա արաբերենի երկար ձայնավորները Արարատյան բարբառում ևս հիմնականում նույնացել են համապատասխան կարճ ձայնավորների հետ: Ձայնավորների հնչյունափոխության դեպքերը բազմաթիվ են: Առավել հաճախադեպ են հետևյալները՝ *a* < է՝ *հէյրան* «զմայլված» (*ḥayrān*), *հէքիմ* (*ḥakīm*) «բժիշկ», *հէսաբ* «հաշիվ» (*ḥisāb*), *ջահէլ* «երիտասարդ, անփորձ» (*jāhil*), ինչպես նաև՝ *a*-ի քմայնացում՝ *զիւհլիւ* «համբերություն», *դիւվի* «վեճ», *ս<օ՝ լօխում* «փափուկ քաղցրավենիք» (*luqum*), *մօլլա* «մահմեդական կրոնավոր» (*maula*) և այլն:

### **Եզրակացություններ**

Հայերենի արևելյան խմբակցության Արարատյան կամ Երևանի բարբառում և պարսկերենում, պայմանավորված պատմական հանգամանքներով, գործառում են արաբերենից փոխառված բազմաթիվ բառեր: Պարսկերենում արաբերեն բառերը գրական լեզվի անքակտելի, օրգանական մաս են կազմում (բառապաշարի առնվազն կեսը) և հիմնականում չեն գիտակցվում որպես փոխառված: Արդի գրական հայերենում արաբերենից փոխառված բառերն էականորեն քիչ են (մի քանի տասնյակ): Դրանք հիմնականում պահպանվել են հայերենի ժողովրդախոսակցական և բարբառային բառաշերտերում և, ի տարբերություն հայ մատենագրությամբ ավանդված և այսօր հիմնականում կենսունակությունից զուրկ բառաշերտի, հայերենի պատմական զարգացման հետագա շրջափուլերում փոխառվել են պարսկերենի, թուրքերենի, ռուսերենի միջնորդությամբ:

Հայերենի բարբառների արևելյան խմբակցության Երևանի կամ Արարատյան բարբառում զգալի թիվ են կազմում պարսկերենի միջնորդությամբ կատարված փոխառությունները: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ բառապաշարը մասամբ փոխառվել է պարսկերենում կրած հնչյունական փոփոխություններով, մասամբ էլ՝ կրել հայերեն բարբառի հնչյունափոխական օրինաչափությունները: Արաբերեն ծագման միջնորդավորված փոխառությունները, ի տարբերություն բարբառի՝ ավելի վաղ շրջանում կատարած փոխառությունների, շնչեղ ձայնեղ բա-

ղաձայնների հնչյունափոխություններ չեն կրել. այդ առումով նման են պարսկերենում գործառող բառաձևերին: Բարբառի հնչյունական ազդեցություն է շնչեղ խուլ հպական ք-ի քմայնացումը բառասկզբի դիրքում: Ձայնեղ և խուլ շփականները, ինչպես նաև ձայնորդները պարսկերենում և հայերեն բարբառում նույն համապատասխանություններն ունեն: Այս շարքից տարբերվում է միայն հայերեն բարբառում ր և ռ բաղաձայնների՝ ոչ հնչութային արժեքով կիրառությունը:

Ինչ վերաբերում է արաբերենի այն բաղաձայններին, որոնց համարժեքները պարսկերենում և հայերեն բարբառում չկան, դրանք պարզեցվել են՝ գործառելով առանց էմֆատիկության՝ որպես արտասանության երկրորդական հատկանշի: էմֆատիկ հնչյուններից միայն Ժ-ն, ի տարբերություն պարսկերենի, հայերեն բարբառում հնչյունափոխվել է Ժ-ի: Բարբառում պարսկերենից տարբեր է նաև արաբերենի Գ և ց բաղաձայնների դրսևորումը. եթե պարսկերենում դրանք գրեթե նույնացել են, ապա հայերեն բարբառում ց բաղաձայն ունեցող բառեր, կարելի է ասել, չեն հանդիպում, իսկ Գ-ն, ըստ բառի կազմում զբաղեցրած դիրքի, տարբեր հնչյունափոխություններ է կրել: Ինչ վերաբերում է ձայնավորական համակարգին, ապա և՛ պարսկերենում, և՛ հայերեն բարբառում արաբերենի երկար ձայնավորները կիրառվում են դրանց համարժեք կարճ տարբերակներով, իսկ կարճ ձայնավորները, պահպանվելով հանդերձ, բարբառում առանձին դեպքերում քմայնացել են կամ ենթարկվել տարբեր հնչյունափոխությունների:

Ե՛վ հայերեն բարբառում, և՛ պարսկերենում արաբերենի հնչյունական համակարգը, առանձին տարբերություններով հանդերձ, հիմնականում ներկայացվել է նույն կերպ. Հնչյունների մեծ մասը համապատասխանել է տվյալ լեզվի (բարբառի) համարժեքներին, իսկ այն հնչյունները, որոնք չունեն համարժեքներ, կրել են տվյալ լեզվի (բարբառի) հնչյունական համակարգի ազդեցությունները:

### **Գրականության ցանկ**

1. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս II, Ե., 2013 (վերատպություն):
2. Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառ, Ե., 1989:
3. Միքայելյան Ս., Հայերենի արաբական փոխառությունների ժա-

մանակի հարցը // «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2019, 3 (30):

4. Նալբանդյան Գ., Պարսից լեզվի քերականություն, Ե., 1980:

5. Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

6. Баранов Х., Арабско-русский словарь, т. 1, 2, М, 2019 (переиздание).

7. Барышников А. Ф., Лексикология и фразеология персидского языка, М., 1962.

8. Pisowicz A, *Origins of the New and Middle Persian Phonological Systems*, Cracow, 1985.

9. <https://iranicaonline.org/articles/arabic-v>

**ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒԺԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՍՔԻ ՏԱՐԲԵՐ ՈՃԵՐՈՒՄ  
ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

Բ. Գ. Թ.

gayane.grig.grigoryan@gmail.com

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-77

**Համառոտագիր**

Խոսքը հաղորդակցման հիմնական միջոցն է, որը տեղեկատվության փոխանցման, մարդկանց հետ շփվելու, հույզեր արտահայտելու հզոր միջոց է: Խոսքի արդյունավետության և ազդեցության երկու կարևոր տարրերն են ուժգնությունն ու տևողությունը, որոնք էականորեն ազդում են խոսքի ձևավորման վրա: Այս չափանիշները տարբեր են խոսքի տարբեր ոճերում, այնպես որ որևէ հաղորդագրություն արդյունավետ կերպով փոխանցելու համար պետք է հաշվի առնել ուժգնության և տևողության կարևորությունը: Սույն հոդվածում ուսումնասիրվում են հնչամիավորների ուժգնությունն ու տևողությունը խոսքի տարբեր ոճերում:

**Բանալի բառեր և բառակապակցություններ՝** ոճ, պաշտոնական և ոչ պաշտոնական ոճեր, ուժգնություն, տևողություն:

**INTENSITY AND DURATION CHANGES IN DIFFERENT STYLES  
OF SPEECH**

**GAYANE GRIGORYAN**

RANAS, Institute of Linguistics after H. Acharyan, PHD

gayane.grig.grigoryan@gmail.com

**Abstract**

Speech is the main means of communication, which serves as a powerful tool of transmitting information, communicating with people, and expressing emotions. Two important elements of speech effectiveness and impact are intensity and duration, which significantly affect speech design. These criteria are different in different styles of speech, so one can evaluate all the nuances of communication and use them for more effective transmission of the intended message. In this article, the intensity and duration of speech units are considered, examining them in different styles.

**Keywords and phrases:** style, formal and informal style, intensity, duration.

## ИЗМЕНЕНИЯ ИНТЕНСИВНОСТИ И ДЛИТЕЛЬНОСТИ В РЗНЫХ СТИЛХ РЧИ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Г А Я Н Е Г Р И Г О Р Я Н

Институт языка им. Р. Ачаряна, НАНРА, к.ф.н.,  
gayane.grig.grigoryan@gmail.com

### Аннотация

Речь является основным средством общения, которое служит мощным средством передачи информации, общения с людьми, выражения эмоций. Двумя важными элементами речевой эффективности и воздействия являются интенсивность и длительность, которые существенно влияют на формирование речи. Эти критерии различны в разных стилях речи, поэтому можно оценить все нюансы общения и использовать их для более эффективной передачи сообщения. В данной статье рассматриваются интенсивность и длительность речевых единиц в разных стилях речи.

**Ключевые слова и словосочетания:** стиль, формальный и неформальный стили, интенсивность, длительность.

### *Ներածություն*

Խոսքը հաղորդակցման հիմնական միջոցն է, որը ծառայում է որպես հզոր գործիք՝ տեղեկատվություն փոխանցելու, մարդկանց հետ շփվելու, հույզեր արտահայտելու համար: Խոսքի արդյունավետության և ազդեցության երկու կարևոր տարրերն են ուժգնությունն ու տևողությունը, որոնք էականորեն ազդում են խոսքի ձևավորման վրա: Խոսքի տարբեր ոճերում այս չափանիշները տարբեր են, ուստի կարելի է գնահատել հաղորդակցության բոլոր նրբությունները և օգտագործել դրանք՝ ավելի արդյունավետ կերպով փոխանցելու նախատեսված հաղորդագրությունը: Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում խոսքի հնչամիավորների ուժգնությանն ու տևողությանը՝ ուսումնասիրելով դրանք տարբեր ոճերում:

Քննարկվող թեման արդիական է, քանի որ հետազոտվում են ժամանակակից արևելահայերենի բանավոր խոսքում տարբեր ոճերի խոսույթների տևողության և ուժգնության փոփոխությունները, որոնք ստեղծում են խոսքի հնչողության զանազանություններ: Առաջին անգամ ներկայացվում է տարբեր ոճերում տևողության և ուժգնության տվյալների հարաբերակցությունը՝ պարզաբանելով և ճշտելով հնչամիավորների ֆիզիկական բնութագրերը ոճային տարբեր միջավայրերում: Ուսումնասիր-

րության նպատակն է ցույց տալ, թե բանավոր խոսքի ձևավորման հարցում որքա՛ն կարևոր են ուժգնության և տևողության փոփոխությունները, որոնք ապահովում են հաղորդակցության նպատակայնությունը: Մասնավորապես խոսվում է պաշտոնական և ոչ պաշտոնական ոճերի մասին, փորձ է արվում հասկանալու, թե տարբեր ոճերում ո՛ր չափանիշներն են առավել գործուն՝ տևողությունը, թե՞ ուժգնությունը, կամ գուցե երկուսի համակցությունը: Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են հնչաբառերի լաբորատոր փորձարկման, չափման, վիճակագրության, դիտարկման և համեմատության մեթոդները:

Ձայնագրությունները վերցված են ՋԼՄ-ների տարբեր աղբյուրներից՝ հասարակական ելույթներ, յուրօրյան հարցազրույցներ, համացանցային սոցկայքերում առկա երկխոսություններ, հեռուստատեսության և ռադիոյի հաղորդումներ և այլն:

Հայերեն ոճ բառը համապատասխանում է լատիներեն ստիլուս կամ հունարեն ստիլոս բառին, որը շատ լեզուների մեջ մտել է ստիլ ձևով (անգլերեն՝ style, ռուսերեն՝ стиль, գերմաներեն՝ Stil, իտալերեն՝ stile, հունարեն՝ στυλ և այլն):

Ոճ բառը նախապես նշանակել է «ծղոտ, ցողուն»: Հ. Աճառյանի «Արմատական բառարանում» տրված է ոճ բառի հետևյալ պարզաբանումը. «Ծղոտ, ցողուն, կարգաւորեալ դասաւորութիւն, կարգ-կանոն, գրութեան ձև, շարադասութիւն, խօսքի կարգը» և այլն [1, էջ 559]:

Հնում մոմապատ տախտակների վրա գրում էին ծղոտե սրածայր ձողիկներով, որոնք ծառայում էին իբրև գրիչ: Հետագայում դրանք սկսեցին պատրաստվել նաև մետաղից: Մարդիկ այդ ծղոտներով գրում էին տարբեր կերպ, տարբեր ոճերով, տարբեր ձեռագրերով, ուստի «ոճ» ասելով հասկանում էին նախ գրության, ապա նաև ընդհանրապես խոսքի մի որոշակի ձև, տեսակ: Ոճ բառի սկզբնական իմաստին ավելացան նաև տարբերություն, առանձնահատկություն իմաստները: «Հետագայում, բառիմաստի ընդլայնման շնորհիվ, ոճ բառը ձեռք է բերել շարադրելու ձեւ, եղանակ իմաստը: Ճարտասանության մեջ նշանակել է գրելու տեխնիկա, հոնտորական խոսքի արվեստ», - գրում է Ա. Մարությանը իր «Հայոց լեզվի ոճաբանություն» աշխատության մեջ [3, էջ 33]:

Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ոճ բառի բացատրության մեջ նշված են 8 իմաստներ, որոնցից մեզ հետա-

քրքրում է 3-րդը. «Ընդհանուր առմամբ՝ խոսքի կառուցման, շարահյուսական, քերականական ու բառագործածության ընդհանրական նորմաների ամբողջությունը: Ոճը հարթել՝ ուղղել՝ գեղեցկացնել», և 7-րդը. «(լեզվբ.) Լեզվի տարբերակված այլատեսակություններից յուրաքանչյուրը, որոնցից ամեն մեկը բնորոշվում է իրեն հատուկ բառերով, դարձվածաբանությամբ, յուրահատուկ արտահայտություններով ու տերմինաբանությամբ և գործածվում է որոշակի հաղորդակցական ոլորտում (գեղարվեստական գրականություն, գիտական-տեխնիկական գրականություն, տարածական տարբերակումներ ու բարբառներ ևն)» [2, էջ 1134]:

Խոսքի զանազանության դրսևորումներն իրականացվում են տևողության և ուժգնության տատանումների շնորհիվ:

Ընդունված դասակարգման համաձայն՝ խմբավորում են հետևյալ ոճերը.

1. Գործառական՝ վարչագործարարական, գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական, առօրյա-խոսակցական,

2. Իրադրական,

3. Անհատական [5, էջ 1923]:

Գործառական ոճեր

Վարչագործարարական ենթաոճը հանդես է գալիս պաշտոնական, գրասենյակային, օրենսդրական, դիվանագիտական ոլորտներում: Այս ոճով են գրվում օրենքները, որոշումները, հայտարարությունները, արձանագրությունները: Ոճին հատուկ են քարացած և գրաբարյան կապակցություններ (ի կատար ածել, բերման ենթարկել, ի գիտություն, ներքոհիշյալ, վերոհիշյալ, համաձայն որի և այլն):

Գիտական ենթաոճը հանդես է գալիս գիտական աշխատություններում, զեկուցումներում, դասախոսություններում: Սրան հատուկ են խոսքի հակիրճությունը, ճշգրիտ ձևակերպումները, դատողական բնույթի բառերի գործածությունները:

Հրապարակախոսական ենթաոճը մամուլի լեզուն է: Լինում է գրավոր (թերթ, ամսագիր) և բանավոր (ռադիո, հեռուստատեսություն): Չունի իրեն հատուկ բառապաշար:

Գեղարվեստական ենթաոճը հանդես է գալիս գրականության մեջ՝ չափածո և արձակ: Այս ոճի գրվածքներում շատ են հուզական բառերը, մակդիրները, համեմատությունները, փոխաբերությունները: Կարող է ընդգրկել մյուս բոլոր ոճերի տարրերը:



Առօրյա խոսակցական ենթաոճը գործածվում է առօրյա կյանքում, կենցաղում: Այստեղ շատ են հուզական և խոսակցական բառերը, կրկնությունները, ձայնարկությունները, վերաբերականները:

Իրադրական ոճը պայմանավորված է տվյալ իրադրությամբ, կախված է այն պայմաններից, թե խոսողը որտեղ է խոսում, ում հետ է խոսում, ինչի մասին է խոսում, ինչ վերաբերմունք ունի խոսակցի նկատմամբ: Լինում են պաշտոնական, հանդիսավոր, մտերմական-փառաքշական, ծաղրական, հեգնական:

Անհատական ոճը հանդես է գալիս լեզվական միջոցների անհատական օգտագործման մեջ, կախված է անհատների բնավորությունից, հակումներից, խառնվածքից, ճաշակից, կրթությունից, դաստիարակությունից:

Ամենայն հարգանքով վերաբերվելով հայ լեզվաբանների կողմից տրված դասակարգմանը՝ փորձառական հետազոտություններ կատարելու նպատակից ելնելով՝ առաջարկում ենք դասակարգման փոքր-ինչ այլ տարբերակ, որն առավել հարմար կլինի տևողության և ուժգնության ուսումնասիրության պարագայում, որը նաև ընդունված է միջազգային հնչյունաբանության բնագավառում և ի վերջո գրեթե հանգում է նույն դասակարգմանը (ենթատեսակների դասակարգման տեղափոխության առումով): Հայերենում խոսքի ոճի ընդունված դասակարգման տեսակները կարելի է ամփոփել 2 մեծ տեսակների մեջ՝ պաշտոնական խոսքի ոճ և ոչ պաշտոնական խոսքի ոճ, որը տևողության և ուժգնության ուսումնասիրման համար բավարար պայման է և արտացոլում է այս չափորոշիչների հիմնական տարբերությունները: Ստորև ներկայացված աղյուսակում ընդունված դասակարգման տեսակները կարելի է բաշխել պաշտոնական և ոչ պաշտոնական երկու մեծ խմբավորումների մեջ.

Պաշտոնական	Ոչ պաշտոնական
գործառական	իրադրական
գիտական	անհատական
հրապարակախոսական	գեղարվեստական
	առօրյա-խոսակցական

Հոդվածում հիմնականում անդրադարձել ենք ոճերի արտահայտ-

ման ձայնաբանական հատկանիշներին՝ մի կողմ թողնելով շատ լեզվաբանների կողմից ներկայացվող ոճերի նկարագրությունը, որոնք կան ոճերի ուսումնասիրությամբ զբաղվող գրեթե բոլոր մասնագետների աշխատանքներում:

Աշխատանքի քայլերն ու հերթականությունը: Փորձառական ուսումնասիրությունը կատարելիս օգտագործել ենք հետևյալ ծրագրերը՝ ա) Voice Memos – ձայնագրում: բ) Ձայնագրությունների դասակարգում (պաշտոնական և որ պաշտոնական ոճեր): գ) Ձայնային փոխակերպում – MP4 ֆորմատի ձայնագրությունների առցանց փոխակերպում wav կամ MP3 տեսակների: դ) Praat – ձայնագրությունների մուտքագրում Պռաստ ծրագրի մեջ, հնչապատկերների վերլուծություն՝ (հնչյունների և հնչաբանների սահմանագատում, ուժգնության և տևողության, տվյալների հաշվարկներ): ե) Excel – տվյալների մուտքագրում, միջինացում, աղյուսակների կազմում, հաշվարկ: զ) Համեմատություն և օրինաչափությունների հայտնաբերում:


Ձայնագրությունների վերլուծությունները կատարվել են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի՝ Ամալյա Խաչատրյանի անվան փորձառական հնչյունաբանության լաբորատորիայում:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են բառերի լաբորատոր փորձարկման, չափման, վիճակագրության, դիտարկման և համեմատության մեթոդները:

### ***Պաշտոնական խոսքի ոճ***


Պաշտոնական խոսքը բնութագրվում է որպես զտված և հստակ կառուցվածքային տեղեկություն, որը հաճախ կապված է պաշտոնական միջավայրի հետ (գիտաժողովներ, շնորհանդեսներ, հանդիսավոր միջոցառումներ և այլն): Այս ոճում բանախոսները սովորաբար օգտագործում են վերահսկվող ուժգնություն՝ հետևողականորեն պահպանելով այն ելույթի ընթացքում: Չափված ուժգնությունը ելույթին հաղորդում է հեղինակության և պրոֆեսիոնալիզմի մթնոլորտ՝ գրավելով հանդիսատեսի ուշադրությունը և ապահովելով հաղորդակցության հստակությունը: Պաշտոնական ելույթներում հաճախ առանձին հնչյունների և բառերի ավելի երկար տևողությունը հնարավորություն է տալիս ճշգրիտ արտահայտվել և մանրակրկիտ ու հետաքրքիր ձևով մատուցել նյութը: Պաշտոնական խոսքում տևողության տվյալները էականորեն գերազանցում են

ոչ պաշտոնական խոսքի հնչամիավորների տևողությանը: Օրինակ, *ա* ձայնավորի միջին տևողությունը մոտ մեկ ու կես անգամ գերազանցում է ոչ պաշտոնական խոսքում *ա*-ի տևողությանը:



Պաշտոնական խոսքում դիմաց բառում շեշտակիր *ա*-ի տևողությունը 0,2 մ/վրկ է, ուժգնությունը՝ 67 դեցիբել:

Նույնը վերաբերում է նաև ուժգնությանը. պաշտոնական խոսքում նկատվում են ուժգնության կանոնակարգված դրսևորումներ, այսինքն՝ խոսքի տրամաբանական արտահայտմանը զուգընթաց կատարվում է ուժգնության համակարգված տեղաբաշխում:



Ոչ պաշտոնական խոսքում եղբայր բառում շեշտակիր *ա*-ի տևողությունը 0,14 մ/վրկ է, ուժգնությունը՝ 65 դեցիբել:

Հնչապատկերներում արտացոլված երկվանկ բառերի շեշտակիր և ձայնավորի տևողության և ուժգնության տվյալների համեմատությունը պաշտոնական և ոչ պաշտոնական ոճերում ակնհայտորեն ցույց է տալիս այդ հատկանիշների թվային տվյալների գերազանցումը պաշտոնական ոճում:

Պաշտոնական ոճի տեսակներից հրապարակային խոսքը, որը առանձին տեղ է գրավում պաշտոնական ոճի դասի մեջ: Հրապարակային խոսքի ոճը, ըստ տևողության և ուժգնության ցայտուն արտահայտման, առանձնահատուկ տեղ ունի, որը նպատակ ունի համոզել հանդիսատեսին, ձևավորել կարծիք և ոգեշնչել՝ գործողություններ կատարելու համար: Այս ոճում ուժգնությունը կարևոր դեր է խաղում, քանի որ այն օգնում է ստեղծել հուզական կապ և գրավել ունկնդիրների ուշադրությունը: Համոզիչ բանախոսները հաճախ կատարում են ուժգնության մեծ տատանումներ՝ առանցքային կետերն ընդգծելու համար: Նրանք օգտագործում են ավելի ուժգին ձայն՝ ազդեցիկ հայտարարությունների համար և ավելի մեղմ տոներ՝ խորհելու և տեղեկությունն ընկալելու համար: Ինչ վերաբերում է տևողությանը, ապա հարկ է նշել, որ հրապարակային խոսքը առատ է ճիշտ կազմակերպված դադարներով, ձայնավորների և բաղաձայնների հստակ, տևական արտաբերմամբ, որոնք ունկնդիրներին թույլ են տալիս մշակելու տեղեկատվությունը և ժամանակ են տալիս մտածելու:

### ***Ոչ պաշտոնական խոսքի ոճ***

Ոչ պաշտոնական խոսքը բնութագրվում է որպես անկաշկանդ և պատահական տոնայնությամբ տեղեկություն, որը սովորաբար օգտագործվում է հասարակական հավաքույթների, ոչ պաշտոնական զրույցների կամ ամենօրյա փոխհարաբերությունների հաղորդակցման ժամանակ: Այս ոճում ուժգնությունն ավելի բազմազան է և արտացոլում է բանախոսի բնական արտահայտություններն ու զգացմունքները: Օրինակ, հուզիչ դեպք պատմելիս ոգևորություն հաղորդելու համար բանախոսի ձայնի ուժգնությունը կարող է բարձրանալ: Մինչդեռ մտորումների պահերին այն կարող է նվազել՝ նշելով խոսողի խորհրդածությունը: Ոչ պաշտոնական խոսքում հնչյունների տևողությունը սովորաբար ավելի ճկուն է, քանի որ խոսքի ավելի կարճ պոռթկումներն օգտագործվում են արագ մտքեր փոխանցելու համար, իսկ շեշտադրման կամ դրամատիկ էֆեկտի համար տևողությունը կարող է ավելի երկար լինել:

Ոչ պաշտոնական խոսքում առանձնահատուկ տեղ ունի պատմողական ոճը, որը կիրառվում է հեքիաթների, պատմվածքների, վեպերի բանավոր ընթերցման ժամանակ, որի դեպքում ուժգնության և տևողության դերն առավել կարևորվում է՝ խոսքը դարձնելով գրավիչ և ունկնդիրներին տեղափոխելով պատմողական աշխարհ: Պատմություններ պատմելիս բանախոսները փոփոխում են ուժգնությունը և տևողությունը՝ տարբեր հույզեր առաջացնելու և հանդիսատեսի երևակայությունը շարժելու համար: Պատմության հուզիչ մասերը կարող են ունենալ ուժգնության բարձրացումներ, մինչդեռ ավելի մեղմ երանգները կարող են օգտագործվել ավելի հանդարտ մթնոլորտ ստեղծելու համար: Պատմողական խոսքում հնչյունների և բառերի տևողությունը կարող է շատ տարբեր լինել, քանի որ այն թույլ է տալիս արդյունավետ կերպով «շարժել» պատմվածքը և ներարկել ճիշտ քանակությամբ դրամա և լարվածություն: Այս խոսքում կարևորվում են ճիշտ դադարները:

#### ***Եզրակացություններ***

Ըստ մեր ուսումնասիրությունների, դիտարկումների և վերլուծության՝ ուժգնությունը և տևողությունը արդյունավետ խոսքի հիմնական բաղադրիչներից են, որոնք ձևավորում են հաղորդակցման ոճերը՝ ապահովելով ընկալվող հաղորդագրությունների արդյունավետությունը: Պաշտոնական խոսքն ունի վերահսկվող ուժգնություն և ավելի երկար տևողություն: Ոչ պաշտոնական խոսքը ներառում է ուժգնության և տևողության բնական տատանումներ: Հրապարակային խոսքն օգտագործվում է հանդիսատեսին գրավելու և համոզելու համար՝ ուժգնության տատանումների և ճիշտ դադարների ապահովմամբ: Վառ պատմվածքներով հագեցած խոսքը ստեղծում է գրավիչ միջավայր, որում պատմողական խոսքի ուժգնությունը և տևողությունը մեծ նշանակություն ունեն:

Խոսքի տարբեր ոճերում ուժգնության և տևողության կարևորության և նշանակության գիտակցելը հնարավորություն է տալիս դառնալու առավել հմուտ հաղորդակցողներ: Գիտակցաբար հետևելով տևողության և ուժգնության դրսևորումներին տարբեր համատեքստերում և նպատակներին համապատասխան՝ կարելի է ավելի սերտ կապ հաստատել լսարանի հետ, ավելի արդյունավետ կերպով մատուցել հաղորդագրությունները և խոսքի ուժի միջոցով մեծացնել ազդեցությունը: Համաձայն փորձառական ուսումնասիրության՝ ֆիզիկական չափերերի

թվային տվյալների ակնառու փոփոխությունները ապացուցում են այդ երևույթի ճշմարտացիությունը և անաչառությունը:

**Գրականության ցանկ**

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., Ե., 1977, հտ. Գ, 636 էջ:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Ե., 1976, 615 էջ:
3. Մարության Ա., Հայոց լեզվի ոճաբանություն, Ե., 2000, 244 էջ:
4. Զահուկյան Գ., Խլղայան Ֆ., Հայոց լեզվի ոճաբանություն, «Ձանգակ-97» հրատ., Ե., 2007, 139 էջ:

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ. С О О Б Щ Е Н И Я. R E P O R T S.**

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**

**ՄԵՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ  
Ավագ գիտաշխատող, ք.գ.թ., դոցենտ  
meri.sargsyan@isec.am

**ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ  
Բաժնի վարիչ, ք.գ.դ., պրոֆեսոր  
vazgengurgeni@mail.ru

**ՍՈՆԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ  
Ավագ գիտաշխատող, ք.գ.թ.  
sonmiq20@gmail.com

**ՍԵՂԱ ԲԱԴՐԱՄՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ  
Ավագ լաբորանտ, հայցորդ  
seda-baghramyan@mail.ru

DOI: 10.57236/1829-0183-2023.1(28)-87

**Համառոտագիր**

Բազմալեզու միջավայրում գործառուղ լեզուն սովորաբար բավականին տարբերակված է ըստ խոսողների մասնագիտական և զբաղմունքային բնութագրերի. պետական լեզվից բացի տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ նույնպես գործառուում են, մայրենի լեզուն միայն մեկը չէ, կա նաև տարբեր քաղաքներին ու տեղանքին բնորոշ ընդգծված մասնագիտացում: Բազմալեզու միջավայրում լեզվավիճակը ոչ միայն ձեռք է բերում իրեն բնորոշ գծեր, այլև որոշակի ազդեցություն է ունենում տվյալ տեղանքից դուրս ապրող լեզվակիրների վրա: Սույն հոդվածում քննում ենք լեհական համայնքում հայերենի ուսուցման առանձնահատկությունները և խնդիրները: Անդրադառնում ենք ուսուցման գործընթացին և՛ դպրոցական, և՛ բուհական համակարգում: Ինչպես հայկական մյուս համայնքներում, այնպես էլ լեհականում, հայապահպանությունը եղել և շարունակում է մնալ սփյուռքի ամենազվխավոր խնդիրը: Չնայած կատարվող աշխատանքներին՝ պետք է նաև արձանագրել, որ հետպատերազմյան շրջանից սկսած՝ սկսվել է հայերի ուժացման գործընթացը: Այժմ այդ համայնքի մեծ մասը

հայերեն չգիտի, և նրանց կարելի է համարել լեհական հասարակության մեջ ամբողջովին ձուլված:

*Քանակի բաներ և բառակապակցություններ՝* բազմալեզու միջավայր, մայրենի լեզու, լեզվավիճակ, լեհական համայնք, հայերենի ուսուցում, սիյուռքի լեզու:

**FEATURES OF THE ARMENIAN LANGUAGE TEACHING IN THE  
ARMENIAN  
COMMUNITY OF POLAND**

**MERI SARGSYAN**

RA NAS Language Institute  
Senior Researcher, Ph.D., Associate Professor  
meri.sargsyan@isec.am

**VAZGEN HAMBARDZUMYAN**

RA NAS Language Institute  
Head of Department, D.Ph., professor  
vazgengurgeni@mail.ru

**SONA MIKAYELYAN**

RA NAS Language Institute  
Senior researcher, Ph.D.  
sonmiq20@gmail.com

**SEDA BAGHRAMIAN**

RA NAS Language Institute  
Senior Laboratory Assistant, Researcher  
seda-baghramyan@mail.ru

**Abstract**

In a multilingual milieu, linguistic expression typically exhibits discernible distinctions based on the vocational and professional attributes of its speakers. Furthermore, apart from the dominant official language, various other significant languages find usage within the community, and the mother tongue, while important, does not stand as the sole linguistic vehicle. In this context, the linguistic landscape of a multilingual setting not only assumes distinct characteristics but also exerts a discernible influence upon language users residing beyond its geographical boundaries. The present study scrutinizes the idiosyncrasies and challenges associated with the pedagogical aspects of Armenian language instruction within the Polish diasporic community. This study explores the learning process within both the school and university systems. Similar to Armenian communities elsewhere and within the Polish diaspora, the preservation and safeguarding of Armenian identity have historically constituted a paramount concern for the diaspora. However, it is essential to acknowledge that despite persistent efforts in this regard, the process of assimilation among Armenians commenced during the post-war era. Presently, a



significant proportion of this community no longer possesses proficiency in the Armenian language, and they can be regarded as fully integrated into Polish society.

**Keywords and Phrases:** multilingual environment, mother tongue, language situation, Polish community, teaching the Armenian language, diaspora language

## **ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ПОЛЬШИ**

### **МЕРИ САРГСЯН**

Институт языка НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н., доцент

meri.sargsyan@isec.am

### **ВАЗГЕН АМБАРЦУМЯН**

Институт языка НАН РА

Заведующий отделом, д.ф.н., профессор

vazgengurgeni@mail.ru

### **СОНА МИКАЕЛЯН**

Институт языка НАН РА

Старший научный сотрудник, к.ф.н.

sonmiq20@gmail.com

### **СЕДА БАГРАМЯН**

Институт языка НАН РА

Старший лаборант, соискатель

seda-baghramyan@mail.ru

### **Аннотация**

В многоязычной среде языковое выражение, как правило, имеет заметные различия, обусловленные профессионально-квалификационными характеристиками его носителей. Кроме того, помимо доминирующего официального языка, в обществе используются и другие значимые языки, а родной язык, при всей его важности, не является единственным языковым средством общения. В этом контексте языковой ландшафт многоязычной среды не только приобретает особые черты, но и оказывает заметное влияние на пользователей языка, проживающих за ее пределами. Настоящее исследование посвящено изучению особенностей и проблем, связанных с педагогическими аспектами преподавания армянского языка в польской диаспоре. В данном исследовании рассматривается процесс обучения как в школьной, так и в университетской системах. Как и в других армянских общинах, так и в польской диаспоре, сохранение и защита армянской идентичности исторически являлись первостепенной задачей диаспоры. Однако необходимо признать, что, несмотря на упорные усилия в этом направлении, в послевоенное время начался процесс ассимиляции армян. В настоящее время значительная часть этой общины уже не

владеет армянским языком и может считаться полностью интегрированной в польское общество.

**Ключевые слова и словосочетания:** многоязычная среда, родной язык, языковая ситуация, польская община, преподавание армянского языка, язык диаспоры

Բազմալեզու միջավայրում գործառող լեզուն սովորաբար բավականաչափ տարբերակված է ըստ խոսողների մասնագիտական և զբաղմունքային բնութագրերի. պետական լեզվից բացի տեսակարար կշիռ ունեցող այլ լեզուներ նույնպես գործառու են, մայրենի լեզուն միայն մեկը չէ, կա նաև տարբեր քաղաքներին ու տեղանքին բնորոշ ընդգծված մասնագիտացում: Բազմալեզու միջավայրում լեզվավիճակը ոչ միայն ձեռք է բերում իրեն բնորոշ դեմք, այլև որոշակի ազդեցություն է թողնում տվյալ տեղանքից դուրս ապրող լեզվակիրների վրա:

16-17-րդ դդ. հայերի նկատմամբ սկիզբ են առնում տնտեսական, կրոնական հալածանքներ: Նրանց պարտադրվում է կաթոլիկություն ընդունել, որն էլ դառնում է հայերի ուժացման գլխավոր պատճառը և սկիզբը: 18-րդ դ. Լեհաստանի անկախության կորուստն ու վերաբաժանումները Ավստրիայի, Պրուսիայի և Ռուսաստանի միջև արագացնում են թուլացած լեհահայ գաղութի քայքայումը: 19-րդ դ. հայերն ամբողջությամբ արդեն լեհացել էին: Այս շրջանում պայքար է սկսվում նաև լեհահայ կաթոլիկ եկեղեցին վերացնելու և լատինական կաթոլիկ եկեղեցուն միացնելու համար [1]: Ամենահին վերաբնակները հաղորդակցվում էին հայերենի և ղփչաղերենի՝ թյուրքական լեզվաընտանիքի ղփչաղական ճյուղին պատկանող (այժմ՝ մեռած) լեզվից ձևավորված խառը լեզվով [4]: Գրավոր խոսքում գործածում էին հայկական այբուբենը: Հին հայերենը՝ գրաբարը, պահպանվում էր միայն ժամերգության ընթացքում:

Ինչպես տեղեկացնում է հայագետ, իրանագետ, պրոֆեսոր *Անդեյ Պիսովիչը*<sup>1</sup>, դեռևս 50-ական թվականներին արաբագետ պրոֆեսոր *Տադեուշ Լևինսկու* հրավերով Գլիվիցեից լեհահայ քահանա *Կազիմիր Ռոշկոն* գալիս է Կրակով, և պարսկերեն, արաբերեն, թուրքերեն սովորող մի խումբ ուսանողներ, այս թվում նաև Պիսովիչը, հնարավորություն են ունենում սովորել արևմտահայերեն: Բացի այդ՝ պրոֆեսորը հիշատա-

<sup>1</sup> Տեղեկությունը հաղորդվում է Լեհաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ պրոֆեսոր Անդեյ Պիսովիչի հետ հանդիպումների ընթացքում կատարված ձայնագրությունների և սղագրությունների հիման վրա:

կում է, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետո որոշ ժամանակ Լվովում մի լեհահայ քահանա հայերենի դասեր է անցկացրել:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լեհահայերի մեծ մասը թողել է բնակավայրերն ու հեռացել երկրի արևմտյան շրջաններ՝ Կրակով, Վարշավա, Գլիվիցե: Այստեղ հայերը սակավաթիվ են եղել, այդ պատճառով դպրոցներ ու եկեղեցիներ չեն ունեցել, որն էլ նպաստել է մայրենի լեզուն մոռանալուն: Լեհահայ հին սերնդի ներկայացուցիչներից քչերն են տիրապետում հայերենին [2]: Պրոֆեսոր Պիսովիչի հիշատակությամբ հենց այս շրջանում Գլիվիցե քաղաքում մի եկեղեցի տրամադրվել է լեհահայ քահանա Կազիմիր Ռոշկոյին, որպեսզի նորեկ լեհահայերի համար հայերեն պատարագ անցկացնի: Հայերի մի խումբ միայն, որ խոսում էր արևմտահայերեն, Չերեմոշի Կուտի քաղաքում ապրել է մինչև 20-րդ դ. 30-ական թվականները [4]: Պրոֆեսոր Պիսովիչի բանավոր հաղորդմամբ՝ Կուտիի հայերը խոսում էին արևմտահայ բարբառով, որի նմուշները հավաքել, ֆրանսերեն, այնուհետև նակլեհերեն թարգմանել և տպագրել է վերոհիշյալ Կազիմիր Ռոշկո քահանան: Այժմ պրոֆեսոր Պիսովիչը տպագրության է պատրաստում Կ. Ռոշկոյի դոկտորական աշխատանքի մի մասը<sup>2</sup>, որը նվիրված է Կուտի քաղաքի արդեն մեռած լեհահայ բարբառի քերականությանը: Հետաքրքրական են հատկապես լեհահայ այդ բարբառի 10-12 նմուշները, որոնք լեհահայ քահանա Ռոշկոն անձամբ է հավաքել բարբառակիրներից, մեքենագրել և խմբագրել: Պրոֆեսոր Պիսովիչը բանավոր հաղորդմամբ նշում է. «Մի բան կարող եմ ասել, որ այդ բարբառի և արևելահայ որևէ բարբառի միջև եղած տարբերությունն այնքան մեծ է, որ արևելահայ պատմաբան Ռ. Համբարձումյանը, որը թեկնածուական աշխատանք է գրել Սադոկ Բարոնչի, այսինքն՝ մի լեհահայ պատմաբանի մասին, գնացել է տիկին Աննա Մոյզեսովիչի<sup>3</sup> մոտ, և ինձ ասաց, որ չեն կարողացել հայերեն իրար հասկանալ, ստիպված լեհերեն են խոսել: Ես գնացի տիկին Աննա Մոյզեսովիչի մոտ և խնդրեցի, որպեսզի ինձ համար էլ ասեր այն

<sup>2</sup> Կազիմիր Ռոշկոն լեհախոս հայ է, որը Գլիվիցե քաղաքի եկեղեցում լեհահայերի համար հայալեզու պատարագներ է անցկացրել, դասավանդել արևմտահայերեն, Կուտիի շրջանի լեհահայերի բարբառն է ուսումնասիրել, հավաքել բարբառային նմուշներ, խմբագրել, լեհերեն և ֆրանսերեն հրատարակել Կուտիի բարբառին նվիրված ուսումնասիրություններ, հատկապես «Folya Orientalia» ամսագրում:

<sup>3</sup> Աննա Մոյզեսովիչը լեհահայ կին է, Կուտիի լեհահայ բարբառի կրող, որի՝ Կրակովում գտնվող տանն ապրել է պրոֆ. Ա. Պիսովիչը:

տեքստերը, որոնք ասել էր քահանա Ռոշկոյին: Երեք անգամ նրա մոտ գնալով՝ ձայնագրեցի դրանք. կարելի է ասել, որ նրա արտասանությունը վստահելի էր, որովհետև բաղաձայնների երեք շարքերը շատ լավ տարբերում էր, գիտեր թե՛ շնչեղների, թե՛ խուլերի մասին: Արևմտահայերենում հակառակն է՝ շնչեղները խլանում են, իսկ խուլերը՝ ձայնեղանում: Եվ սա նա լավ տարբերում էր, բանավոր կերպով, իհարկե: Խոսքը գրության մասին չէ. նա գիր չգիտեր, բայց գիտեր քար > կար, կին > գին բառերի տարբերությունը: Մի բան կար, որ լեհերենի և ուկրաիներենի ազդեցությամբ փոխվել էր. Կուտի քաղաքի այդ բարբառով խոսող մարդիկ չէին արտասանում ը, այլ ասում էին՝ Ե, ինչպես լեհերենում է: Օրինակ, դպրոցի փոխարեն արտասանում էին դեբրոց, Մկրտիչ՝ Մեգերդիչ: Ոչ թե ուսերենի նման, որտեղ միջնալեզվային արտասանության է՝ мы, вы, այլ ուկրաիներենի և լեհերենի. մենք ասում ենք me, ve: Այսինքն՝ առաջնալեզվային արտասանությամբ, որը մասամբ տարբերվում է ուսերենից: Երկրորդ տարբերությունն այն էր, որ նրանք չէին տարբերակում ո-ն և ր-ն: Այս երկու հիմնական հնչյունական տարբերությունները կային<sup>4</sup>:

Նոր հայերը, որոնք հիմնականում զբաղվել են առևտրով, չնայած աշխատանքային և օրենսդրական խնդիրներին, մտադիր չէին հայրենիք վերադառնալ: Նրանց երեխաները կա՛մ դպրոց չէին գնում, կա՛մ էլ հաճախում էին լեհական դպրոցներ, քանի որ հայկական տարրական և նույնիսկ կիրակնօրյա դպրոցներ Լեհաստանում չկային: Սակայն հայ երեխաներին ընդունում էին միայն նախադպրոցական հաստատություններ, որի շնորհիվ հայերն աստիճանաբար ինտեգրվում էին լեհ հասարակությանը, իսկ միջնակարգ կրթական հաստատություններ ընդունվելը մերժում էին, որի պատճառով հայերի մի մասը հոգեբանական խնդիրներ էր ունենում: Բազմաթիվ ընտանիքներ ստիպված էին լինում երեխաներին թողնել Հայաստանում, քանի որ նրանց չէին ընդունում լեհական դպրոցներ, և շատերը Լեհաստան էին մեկնում միայնակ [3]: Բացի այդ՝ հայերը անհրաժեշտության դեպքում այցելում էին լեհ կաթոլիկ եկեղեցի, քանի որ Լեհաստանում Հայ առաքելական եկեղեցին չուներ իր թեմը:

---

<sup>4</sup> Տեղեկությունը հաղորդվում է Լեհաստան կատարած աշխատանքային այցի ընթացքում պրոֆ. Ա. Պիսովիչի հետ հանդիպումների ժամանակ կատարված ձայնագրությունների և սղագրությունների հիման վրա:

2005 թ. հունվարի 6-ին հաստատված «Ազգային, էթնիկական փոքրամասնությունների և շրջանային լեզվին վերաբերող օրենսդրության» համաձայն՝ Լեհաստանի Հանրապետության տարածքում հաստատված հայկական համայնքը համարվում է ազգային փոքրամասնություն, ըստ այդմ՝ այն կարողանում է օգտվել ազգային փոքրամասնություններին տրվող արտոնություններից, այդ թվում՝ իրենց անունները փաստաթղթերում գրել հայերենի օրենքների և կանոնների համաձայն, անձնական և հասարակական կյանքում ազատ կիրառել հայոց լեզուն, հայոց լեզվով տեղեկություններ փոխանցել և ստանալ, սովորել հայոց լեզու և հայերենի դասեր ունենալ, դիպլոմներում և ավարտական փաստաթղթերում հայերենի մասին նշում ունենալ, իրականացնել կրթական, գիտական, մշակութային զանազան միջոցառումներ և ստանալ ֆինանսավորում օրենքով սահմանված չափով Լեհաստանի Հանրապետության ազգային, էթնիկական փոքրամասնությունների և կրոնական գործերի նախարարության կողմից [6]:

Մինչև 2017 թ. Լեհաստանի հայ համայնքի երեխաները հայերեն կարող էին սովորել կա՛մ հայկական շաբաթօրյա դպրոցներում, կա՛մ մասնավոր պարապմունքների շնորհիվ: Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում հայկական *կիրակնօրյա առաջին դպրոցը* բացվել է 2003 թ.՝ Մարգարիտա Երեմյանի ջանքերով: Դպրոցում հայ մանուկներին սովորեցրել են հայոց լեզու, հայ գրականություն, հայոց պատմություն: Սկսած 2017 թվականից՝ դոկտոր Հայկ Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ *Կրակով քաղաքի թիվ 50 լեհական դպրոցում* (հասցեն՝ փող. Կատովիցկա 28) հայերենը դասավանդվում է որպես դպրոցական լիարժեք առարկա: Շատ կարևոր ձեռքբերում է, որ «Հայոց լեզու» առարկայից ստացած գնահատականը հաշվվում է աշակերտի ընդհանուր տարեկան գնահատականը ամփոփելիս և գրանցվում է աշակերտի ավարտական վկայականում [6]: Կրակով քաղաքի *N° 50 հիմնական դպրոցը* Լեհաստանի միակ հանրակրթական ուսումնական հաստատությունն է, որտեղ հայոց լեզու առարկան դասավանդվում է շաբաթական 3 անգամ [7]:

Լեհահայերի միությունների և ՀՀ դեսպանության աջակցությամբ Լեհաստանի տարածքում ներկայումս գործում են հայկական մի քանի դպրոցներ և խմբակներ: Շաբաթօրյա և կիրակնօրյա դպրոցներում կա-

րող են սովորել վեց և ավելի տարիք ունեցող բոլոր հայ երեխաները և պատանիները: Այնտեղ նրանք սովորում են տառաճանաչություն, հայերեն գրել և կարդալ, ինչպես նաև ծանոթանում են հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին և հոգևոր արժեքներին: Դպրոցներում գործում են նաև երգի ու պարի խմբակներ: Կազմակերպվում են բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ և էքսկուրսիաներ: Աշակերտներին տրվում է հայեցի դաստիարակություն: Վարչավայի և Կրակովի մի շարք դպրոցներում՝ կանոնավոր և ոչ կանոնավոր հիմունքներով բացվել են հայոց լեզվի և մշակույթի դասընթացներ [7]: Մշակութային տարբեր միություններ կազմակերպում են հայերենի դասընթացներ, որոնք արևելահայերեն են անցկացվում: Այս առումով բավական մեծ և խոսուն է Կրակովի «Հայ մշակութային ընկերության» դերակատարումը:

Բուհական համակարգում հայերենի ուսուցման գործընթացում նշանակալից դեր է ունեցել պրոֆեսոր *Անդժեյ Պիսովիչը*<sup>5</sup>: Դեռևս ուսանողական տարիներից նա հետաքրքրվել է արևելյան լեզուներով: Չնայած արտաքին՝ քաղաքական և պատերազմական տարիների դժվարություններին՝ կարողացել է կրթաթոշակներ հայթայթել և ուղևորվել Պարսկաստան ու Հայաստան՝ սովորելու պարսկերեն և հայերեն: 1960-ական թվականներին արևելահայերեն է սովորել Երևանի պետական համալսարանում, այնուհետև՝ մի քանի տարի անց՝ Ֆրանսիայում սովորել է գրաբար և արևմտահայերեն: 1970-ականներից ղեկավարելով Յագելոնյան համալսարանի իրանագիտության բաժինը՝ պրոֆեսորը դասավանդել է պարսկերենի քերականություն, սակայն գործադրած ջանքերի շնորհիվ կարողացել է հայերենի ուսուցումը ներառել կրթական գործընթացում: Այն կրթական ծրագրերում ընդգրկվել է որպես երկրորդ լեզվի ուսուցում և որպես օժանդակ միջոց իրանագիտական բաժնի ուսումնառության համար: Ավելի ուշ՝ 1991 թվականին, պրոֆեսոր Պիսովիչը՝ որպես հրավիրյալ դասախոս, Հոլանդիայի Լեյդենի համալսար-

---

<sup>5</sup> Հայագետ Պիսովիչի աշխատությունները բազմալեզու են: Նրա ուսումնասիրությունների շրջանակում են ժամանակակից երկճյուղ հայերենը, հայ բարբառագիտությունը, հայաստառ լեհերեն վավերագրությունը: Մեծ հայագետը աննկարագրելի աշխատանք է կատարում ցայսօր՝ հայկական մշակույթը տարածել ու նպատակամղումով: Նրա թարգմանությամբ և աշխատասիրությամբ լույս են տեսել Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Պ. Սևակի ստեղծագործությունները, հրատարակվել են Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին», Մ. Խորենացու «Հայոց պատմությունը», Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» համապատասխան ծանոթագրություններով:

րանում դասավանդել է հայ բարբառագիտություն՝ անգլերենի միջնորդությամբ: Հայ բարբառագիտության նկատմամբ հետաքրքրությունը ևս առաջացել էր ուսանողական տարիներին, երբ Գուրգեն Սևակից հանձնարարություն էր ստացել ուսումնասիրելու Փարսի գյուղի բարբառը<sup>6</sup>: Լինելով ազգությամբ լեհ՝ պրոֆեսոր Պիսովիչը մեծ նվիրումով դասավանդել ու տարածել է հայերենը՝ իր ուսանողների մեջ հետաքրքրություն արթնացնելով հնագույն լեզվի և Հայաստանի նկատմամբ:

Այսպիսով՝ կարելի է հավաստել, որ ինչպես հայկական մյուս համայնքներում, այնպես էլ լեհական սփյուռքում, հայապահպանությունը եղել և շարունակում է մնալ սփյուռքի ամենագլխավոր խնդիրը: Ստեղծվել են հասարակական, քաղաքական, բարեգործական, կրթական, մշակութային, երիտասարդական զանազան կազմակերպություններ, որոնց հովանու ներքո էլ գործում են դպրոցներ, մշակութային կենտրոններ, կազմակերպվում են հայկական մշակույթի և լեզվի պահպանմանն ու տարածմանն ուղղված միջոցառումներ: Գործադրվում է մեծ ջանք ազգային ինքնությունն ու մշակութային ավանդույթները պահպանելու համար: Չնայած կատարվող աշխատանքներին՝ պետք է նաև արձանագրել, որ հետպատերազմյան շրջանից սկսած սկսվել է հայերի ուժացման գործընթացը: Այժմ այդ համայնքի մեծ մասը հայեր են չգիտի, և նրանց կարելի է համարել ամբողջովին ձուլված լեհական հասարակության մեջ:

### **Գրականության ցանկ**

1. Արևելյան Եվրոպայի հայ համայնքների խնդիրները», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Ե., 2001:
2. Ասատրյան Ա., Հայ-լեհական հարաբերությունները 1991-2018 թթ., Ե., 2021:
3. Մաթևոսյան Մ., Լեհաստանի հայ համայնքի դերը Հայաստան-Լեհաստան հարաբերությունների զարգացման գործում, <https://arar.sci.am/dlibra/publication/43981/edition/39443/content>
4. Stopka K., Zieba A., Ormianska Polska, Warszawa, 2018.

---

<sup>6</sup>Տեղեկությունը հաղորդվում է Լեհաստան կատարած աշխատանքային այցի ժամանակ պրոֆ. Անդժեյ Պիսովիչի հետ հանդիպումների ընթացքում կատարված ձայնագրությունների և սղագրությունների հիման վրա:

5. Czasopismo ormiańskie "Awedis"»: [www.awedis.ormianie.pl](http://www.awedis.ormianie.pl):
6. Ustawa o MNiE oraz o języku regionalnym w języku ormiańskim.»,  
<https://arc.lublin.uw.gov.pl/wsoic/ustawa-o-mniejszo%C5%9Bcach-narodowych-i-etnicznych-oraz-o-j%C4%99zyku-regionalnym-t%C5%82umaczenia-ustawy>.
7. <https://poland.mfa.am/hy/community-overview/>



**Հ Ա Մ Շ Ե Ն Ի Բ Ա Ր Բ Ա Ռ Ի Ն Ն Վ Ի Ր Վ Ա Ս Փ Ի Շ Ա Գ Ր Ա Վ  
Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Հայերենագիտության կարևորագույն ճյուղերից մեկը՝ բարբառագիտությունը, մշտապես եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Բարբառագիտական աշխատանքները հայ լեզվաբանության երախտավորներ Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի, Ա. Ղարիբյանի, Է. Աղայանի և այլ ուսումնասիրողների գիտական վաստակի կարևորագույն մասն են կազմում: Հայերենի առանձին բարբառների քննությունը, բարբառային բառարանների կազմումը, բառապաշարի շերտերի, բարբառներում իմաստային խմբերի ուսումնասիրության խնդիրներն այսօր էլ արդիական են:

Եվ այս առումով կարևոր է հաջատուր Թահմազի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» աշխատության հրատարակումը<sup>1</sup>:

Համշենահայ Խ. Թահմազը, որ ծնվել է 1941 թ. Աբխազիայի Գագրայի շրջանի Մախադիր գյուղում, մասնագիտությամբ ինժեներ է<sup>2</sup>: Մայրենի բարբառի հանդեպ սերը, սակայն, նրան ստիպել է մեկ առ մեկ հավաքել, գրի առնել Համշենի բարբառային բառերը և 2014 թ. հրատարակել «Ջենիկի խոսվածքի բառարանը»<sup>3</sup>: Բարբառախոս և բարբառակիր հեղինակը այս բառարանին կից համառոտ ներկայացրել է «Պոնտահայերի բարբառի քերականություն, Ջենիգի ենթաբարբառ» հավելվածը<sup>4</sup>, որն էլ, ըստ երևույթին, հետագայում նոր ուսումնասիրության մտահղացման առիթ է դարձել: Եվ ահա վերջերս լույս է տեսել նույն հեղինակի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» աշխատությունը<sup>5</sup>, որում բավականին հանգամանալից և մանրամասն ներկայացված են այդ բարբառի լեզվական հատկանիշները:

Այս կարևոր աշխատանքը բարբառային նյութերով համալրել, խմբագրել և հրատարակության է պատրաստել բարբառագետ, բ. գ. դ.

---

<sup>1</sup> Խ. Թահմազ, Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը, Ե., 2023, 224 էջ:

<sup>2</sup> В. Менакеци, Душа Амшена, Сочи-Туапсе, 2013:

<sup>3</sup> Խ. Թահմազ, Ջենիգի բարբառի բառարան, Սոչի, 2014, 253 էջ:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 221-253:

<sup>5</sup> Խ. Թահմազ, Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը, Ե., 2023:

Հ. Հ. Մեսրոպյանը: Գրքում նա իրավացիորեն գրում է հետևյալը. «Չնայած Հ. Աճառյանը «Քննություն Համշենի բարբառի» գրքում Մալայի, Տրապիզոնի տարածաշրջանի բարբառային հատկանիշները ներկայացնելիս զուգահեռաբար անդրադառնում է նաև Ճենիկի խոսվածքի առանձնահատկություններին, բայց և նման աշխատանքն անհրաժեշտաբար լրացնում և ամբողջական է դարձնում խոսվածքի բարբառագիտական նկարագիրը»<sup>6</sup>:

Աշխատությունը բաղկացած է «Ներածություն», «Հեղինակի նախաբան», «Հնչյունաբանություն», «Բառագիտություն», «Քերականական զուգաբանություններ», «Շարահյուսական իրողություններ» և «Հավելված» բաժիններից:

Ներածական մասումխմբագիր Հ. Մեսրոպյանը ներկայացնում է Խ. Թահմազի աշխատանքը՝ այն համալրելով ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ձեռագիր նյութերով, որոնք, ըստ նրա, հնարավոր են դարձնում այդ արժեքավոր անտիպ նյութերի հանրայնացումը: Խմբագիրը նաև տվյալներ է հաղորդում Համշենի և համշենահայերի մասին և ներկայացնում Համշենի բարբառի ընդհանուր բնութագիրը:

Խ. Թահմազը առաջաբանում խոսում է Ջենիկ գավառի մասին, որը տարածվում է Օրդու և Սամսուն քաղաքների միջև՝ հասնելով Պախարա լեռնաշղթայի լեռնագագաթները: Հեղինակը, հետևելով Հ.Աճառյանի այն դիտարկմանը, որ Ջենիկի խոսվածքը կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրության, հարկ է համարել իր «լուսնան ներդնել ի նպաստ համշենագիտության»:

«Հնչյունաբանություն» բաժնում հեղինակը անդրադառնում է Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքի ձայնավորների հնչյունափոխություններին, բաղաձայնների և երկբարբառների փոփոխություններին: Հետաքրքրական է հատկապես, որ ներկայացնելով Հ. Աճառյանի տեսակետը, թե Համշենի բարբառում թրթռուն բաղաձայնները մալացոց նման հնչում էին շնչեղ *բ'*, որից էլ լեզվաբանը եզրակացրել է, որ բ>պ ձայնափոխությունը հետո է առաջացել նոր գաղութում<sup>7</sup>: Խ. Թահմազը, որպես կարևոր դիտարկում, նշում է, որ բուն Համշենում բնակվողները թեև նոր

<sup>6</sup> Խ. Թահմազ, Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը, Ե., 2023, էջ 3:

<sup>7</sup> Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947, էջ 76:

գաղթավայրի ազդեցություն չեն կրել, սակայն բառասկզբի ձայնեղները խլացնում են<sup>8</sup>:

Երկրորդ՝ «Բառագիտություն» գլխում հեղինակը ներկայացնում է Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքի նույնանուն (համանուն) բառերը, հոմանիշները: Ըստ Թահմազի՝ խոսվածքում հոմանիշների շարքը համարվում է սեփական բառակազմական միջոցներով կազմված բառերով, վերջիններիս տարբեր կարգի հնչյունափոխություններով, փոխաբերական իմաստներով, բառակապակցություններով, դարձվածքներով, նկարագրական եղանակով կազմված արտահայտություններով, ինչպես նաև փոխառություններով<sup>9</sup>: Քննության են ենթարկվել նաև մենիմաստ և բազմիմաստ բառերը: Այս գլխում անդրադարձ է կատարվում խոսվածքի բառակազմությանը՝ բառապաշարը բաժանելով պարզ և բաղադրյալ բառերի, իսկ վերջիններս էլ՝ վերլուծական և համադրական բաղադրությունների:

Ուշագրավ է հատկապես երրորդ՝ «Քերականական զուգաբանություններ» գլուխը, որում մանրամասն ու հանգամանալից ներկայացվում են Համշենի բարբառում գործառող գոյականի քերականական կարգերը՝ հոգնակիի կազմությունը, հոլովումը, առկայացման կարգը: Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել ածականի և թվականի, դերանվան քերականական հատկանիշները: Անդրադարձ է կատարվում նաև բայի քերականական առանձնահատկություններին: Բայական համակարգում, ինչպես գիտենք, առանձնակի հատկանիշ է դրսևորում անորոշ դերբայը: Գրաբարյան *-ել*, *-ալ*, *-իլ*, *-ուլ* լծորդական ձևերի դիմաց Ջենիկի խոսվածքն ունի մեկ՝ *-ուշ* վերջավորություն:

Խ. Թահմազը այս գրքում բարեխղճորեն ներկայացնում է Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքի բայի դրական և ժխտական խոնարհման հարացույցները: Ըստ հեղինակի՝ դիմավոր ձևեր կազմելիս հարակատար դերբայով արտահայտվում է նաև վաղակատարի իմաստ: Խ. Թահմազը կարևոր դիտարկում է անում՝ փաստելով, որ Ջենիկի խոսվածքում հարակատար դերբայով դիմավոր ժամանակաձևերը կազմվում են երկու եղանակով՝ 1) հարակատար դերբայի և օժանդակ բայի խո-

<sup>8</sup> Խ. Թահմազ, նշվ. աշխ., էջ 58:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 70:

նարիված ձևերի և 2) հարակատար դերբայի և *ունեմ* բայի ներկա և անցյալ դիմավոր ձևերի զուգորդմամբ:

Ըստ աշխատության հեղինակի՝ Ջենիկի խոսվածքի բայական համակարգի առանձնահատկություններից է մի շարք բայերի անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի կազմությունը կրավորաձև վերջավորություններով:

«Քերականական զուգաբանություններ» գլխում անդրադարձ է կատարվել նաև երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերին: Ջենիկի խոսվածքի *ընուշ* («անել»), *օննուշ* («ունենալ»), *ուզուշ* («ուզենալ») բայերի միջոցով կազմվում են երկրորդական բաղադրյալ ժամանակաձևեր, որոնք խոսվածքում բավականին կենսունակ են:

Երրորդ գլխում ներկայացված են նաև խոսվածքում գործառող մակբայները, կապերը, շաղկապները, ձայնարկությունները, եղանակավորող բառերը:

Չորրորդ գլխում համառոտ ներկայացվում են շարահյուսական որոշ իրողություններ: Դրանցից այստեղ կարևորում ենք հատկապես նպատակի պարագայի դրսևորումը՝ Համշենի բարբառի անորոշ դերբայով յուրահատուկ կազմությամբ («*Կընած այդը ճըրուշ*»):

Աշխատանքի վերջում զետեղված է Հովհ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի՝ Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքով տարբերակը: Բ. գ. թ. Ջ. Բառնասյանը նշված հեքիաթի բարբառային տարբերակի կարևորության մասին գրում է. «Թումանյանն իր այս՝ կարճ, սրամիտ առարկություններով խոսքուզրույցի վրա կառուցված հեքիաթում ներկայացրել է ժողովրդի խոսքին հատուկ լեզվաճական հնարքներ, և դրանք շատ դեպքերում անթարգմանելի են՝ հատկաբանության (իդիոմ) արժեքով: Ուստի և այդ հեքիաթը հայերենի որևէ բարբառով ներկայացնելիս (թարգմանելիս) ի հայտ են գալիս այդ տարածքի խոսվածքներում գործառող հետաքրքիր բառանվանումներ, բառիմաստային հետաքրքիր զուգաձևություններ»<sup>10</sup>:

Այսպիսով՝ մեր դիտարկումը ամփոփի հետևյալն է. Խ. Թահմազի «Համշենի բարբառի Ջենիկի խոսվածքը» աշխատանքը կարևոր ներդրում է հայ բարբառագիտության բնագավառում: Գրքի հեղինակը թեև

<sup>10</sup> Ջ. Բառնասյան, Հ. Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի գրառումները հայերենի տարբեր բարբառներով // «Ջահուկյանական ընթերցումներ», Ե., 2019, էջ 15:

չունի մասնագիտական կրթություն և մասամբ թերացել է գիտական և տեսական ընդհանուր եզրահանգումներ կատարելիս, սակայն դա չի նսեմացնում ուսումնասիրության արժեքը: Հայրենի հողի և արյան կանչով ստեղծված այս աշխատանքում Թահմազը կորստից փրկել և մասնագետների դատին է հանձնել Համշենի բարբառի մի խոսվածքի նկարագրությունը:

Ողջունելի է նման աշխատանքի ծնունդը և այն առումով, որ մի նվիրյալ համշենցի բարբառակիր, բարբառախոս հայորդի հավաքել, դասդասել է մայրենի բարբառի նյութը և այդպիսով նաև իր հարգանքի տուրքը մատուցել նախնիներին և ավետյաց երկրին:

*Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Ռ. Խաչատրյան*

**ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. КНИЖНОЕ ОБОЗ  
РЕНИЕ.  
BOOK REVIEWS**

---

**ԳԻՐՔ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ**

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի 2022 թ. գիտական գործունեության արդյունքներն ամփոփող «Տեղեկագիրք»-ը (կազմող՝ լեզվի ինստիտուտի տնօրինություն)<sup>1</sup>:

Տպաքանակի սահմանափակությունը չի խանգարում ընթերցող լայն շրջաններին նման գրքի մասին ունենալու ամբողջական պատկերացում, որովհետև այն ալիգատ լույս է տեսնում ոչ միայն հայերեն, այլև անգլերեն և ռուսերեն լեզուներով, ընդամին անգլերեն և ռուսերեն բաժինները համեմատաբար ավելի սեղմ են, քան հայերենինը, որը, բնականաբար, գրքի հիմնական մասն է: Անգլերեն և ռուսերեն բաժինները, հավանաբար, հայերեն բաժնում տեղ գտած հրապարակումների (մենագրություններ, հոդվածներ և այլն) ամփոփումներն են:

Գրքի հիմնական՝ գիտական հրապարակումների բաժինն ունի երկու մաս:

Առաջինում ներկայացվում են ինստիտուտի 2022 թ. գիտական գործունեության արդյունքները, ընդ որում իբրև հիմնական, բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ կատարված, այլև կիրառական աշխատանքների արդյունքներ, որոնց հաջորդում է հրապարակումների ցանկը, իսկ երկրորդում՝ այդ արդյունքներն են ըստ գիտական գործունեության ոլորտների՝ գործող բաժինների հաշվով:

Կազմողների կողմից հերթականություն է սահմանվել արդյունքները սեղմ ձևով տալ արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման, ընդհանուր և համեմատական, կիրառական լեզվաբանության, հայ բարբառների, հայոց լեզվի պատմական զարգացման ուղղություններով:

---

<sup>1</sup> ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Տեղեկագիրք» (2022 թ.), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023, 256 էջ:

«Տեղեկագիրք»-ն ամենից առաջ կարևոր է այն իմաստով, որ գերհազեցած տեղեկատվության-հաղորդակցական ներկա պայմաններում հանրության ընթերցող կամ մասնագիտորեն հետաքրքրվող մասը հազիվ թե ժամանակ գտնի ուշադրություն հատկացնելու գիտական այս կարևոր հաստատության մի քանի տասնյակից ավելի, ընդ որում տարբեր հանդեսներում լույս տեսած տարաբնույթ մասնագիտական հարցերի: Այնինչ այդ հնարավորությունը, բնականաբար, տալիս է նման գիրքը, որը սեղմ ձևով ներկայացնում է այդ հարցերը՝ իրենց բովանդակային ամբողջության և կարևորության մեջ:

Ինստիտուտի լեզվաբան մասնագետների գիտական ամենօրյա գործունեության արդյունքները մատենագրորեն ամփոփող և սեղմ ձևով ներկայացնող սույն գիրքը հասցեագրվում է հայագիտության լայն շրջաններին, ուստի այն ունի նաև ճանաչողական նշանակություն:

Տեղին է բերել գրքի հետևյալ ամփոփումն առ այն, որ «Տեղեկագիրքը ընդհանուր գծերով ներկայացնում է 2022 թ. ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակությունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար գիտական հետազոտությունների ուղղությունների: Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսված է մասնագետների, հետաքրքրվողների, գիտական լայն հանրության համար»:

Հայտնի է, որ գիտական (և ոչ միայն) միջավայրում տեղեկագրային նման հրապարակումներն ունեն իրենց ավանդույթը, որն այսօր ևս հնարավոր է շարունակել: Լեզվի ինստիտուտը վերջին տարիներին այդ ավանդույթը շարունակողներից է, որն անպայման վեր է ամեն մի գերազնահատությունից:

Ինստիտուտի տնօրինության նման ձեռնարկումն ունի գիտակազմակերպական նշանակություն:

**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՈՒՇԱԳՐԱՎ ԺՈՂՈՎԱԾՈՒ ԼԵՁՎԻ  
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ**

Լույս է տեսել լեզվափիլիսոփա Ա. Ս. Աբրահամյանի գիտական հոդվածների համահավաք ժողովածուն<sup>1</sup>: Այն մի տեսակ վերհիշեցում է այս կյանքում սովորական պահվածքով հայտնի, սակայն գիտության մեջ մտածողության մի յուրօրինակ անհատականություն հանդիսացող մտավորականի մասին:

Հայ լեզվաբանության մեջ, հայտնի բերումով, ինձ հանդիպած գործընկերներից անպայման նա առանձնանում էր, մենք ընկերներ էինք լեզվի վերացարկումային գնահատության շատ հարցերում, որոնք հասնում-բախվում էին մեր օրերի տեսական լեզվաբանության վառ ներկայացուցիչներից Է.Աթայանի հայացքներին: Սկզբնական այդ շրջանից ես անցա հնդեվրոպաբանությանը, հայերենի պատմությանը՝ համեմատական-տիպաբանականի մենաշնորհով, թեև ընդհանուր լեզվաբանությունն էլ մնաց իմ հետաքրքրությունների մեջ՝ ձև առած, օրինակ, բուհական իմ մի դասագրքում:

Այնինչ Ա. Ս. Աբրահամյանը իր դավանած պատմավերլուծական լեզվաբանությունը պատմականից հետևողականորեն փոխադրեց փիլիսոփայական լեզվաբանություն՝ երկու դեպքում էլ անպայման տեսական հիմքերով և նույնպիսի ելքերով:

Այս թեմայով տարբեր տարիների նա գրեց մեկը մյուսից տարբեր, սակայն մեկը մյուսին հարակից ու ներկուռ հոդվածներ, որոնք լույս տեսան հայերեն և այլ լեզուներով, լույս տեսան գիտական օրինակելի հանդեսներում, գիտաժողովների նյութերում: Դրանք անգերագնահատելի աշխատություններ են, որոնք զարգացնում են հայ տեսական-փիլիսոփայական լեզվաբանությունը՝ անկայան ապահովելով առաջընթաց, տալով գիտական-իմացական ինքնատիպության վառ օրինակ:

Այս ժողովածուն ներառում է Ա. Ս. Աբրահամյանի միայն այն հոդվածները, որոնք վերաբերում են, ինչպես որ ճիշտ վերնագիր են դրել հետմահու լույս տեսնող գրքի կազմողները, իրականությանը, լեզվագիտակցությանը և նշանին: Ես, որ ըստ ամենայնի ծանոթ եմ նրա հրապա-

---

<sup>1</sup> Ա. Ս. Աբրահամյան, Իրականություն, լեզվագիտակցություն, նշան, Ե., ԵՊՀ հրատ., 2023, 304 էջ:



րակումներին, հարկ եմ համարում նշել, որ հայտնի են նաև լեզվաբանի ուրիշ աշխատանքներ, որոնք տեղ չեն գտել այս ժողովածուի մեջ:

Ժողովածուն բաժանված է գլուխների, նրանց ներսում՝ բաժինների:

Գլուխներից երկուսում հարցերի քննությունը ձգվում է նշանային նվազագույն միավոր հնչյունից մինչև առավելագույնը՝ ասույթը: Լեզվական այդ իրակությունների նշանային-փիլիսոփայական առանձնացումը, վերլուծությունը և արժևորումը այդ գլուխների բաժիններում է, որ բնագավառի մասնագետներին հայտնի էին հեղինակի՝ տարբեր տարիների գրած հոդվածներից: Այստեղ Ա. Ս. Աբրահամյանը, անպայման, լեզվափիլիսոփա է, որ իմացական իր էրուդիցիան դնում է նաև հայ լեզվաբանության անվանիներ Ա. Այտընյանի, Է. Աղայանի, Է. Աթայանի և Ս. Աբրահամյանի՝ համընկնող և հարակից հայացքների տեղին գնահատությանը, և դա ամբողջացնում է այս ժողովածուն (գիրքը կազմողները դա տեղին են նկատել և ճիշտ են վարվել):

Գիրքն ունի հավելվածներ, որ ներառում է հեղինակի տարբեր լեզուներով գրված մյուս հոդվածներ, որոնք այնքան էլ հեռու չեն (եթե գիրքը կազմողները հեռու են համարել) բուն գլուխների և բաժինների մեջ տեղավորվածներից. հավելվածներից մեկն էլ հեղինակի «աշխատությունների մատենագիտական ցանկն» է:

Այս գրքում կան մի շարք նորություններ՝ տարբեր հարցերի վերաբերյալ: Նշենք միայն մեկի մասին:

Հայտնի է, որ բառը իմացաբանորեն երկպլան միավոր է՝ իբրև հասկացության անվանման (նշանակման) ամբողջություն, այնինչ հնչյունը լեզվաբանության մեջ սովորաբար այդպիսին չի դիտվում, որովհետև, ինչպես կարծում են, հասկացական (դենոտատային) նշանակում չի պարունակում: Այնինչ կարելի է մեկ այլ (թեկուզ հակառակ) կողմից քննել հարցը, և այս ուսումնասիրության առաջին գլխի («Լեզվի ստորակարգային միավորների նշանագիտական իմաստավորումը») առաջին բաժնի երկու մասերում այդ քննությունը իրականացվում է իմացական ուժի հսկայական ներդրումով. դա խիզախ ձեռքբերում է լեզվի նշանային փիլիսոփայության հիմունքով:

Ա. Ս. Աբրահամյանի գիրքը, բնավ չենք վարանում ասելու, հայ լեզվաբանության ձեռքբերում է, որ հասցեագրվում է ամենից առաջ մասնագետներին՝ ներկայիս և գալիք, և դա նշանակալից է:

**ՀԱՅՈՑ ԱՅՐՈՒՐԵՆԸ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հրապարակի վրա է «Հայ մատենագիրները հայոց գրի և թարգմանչաց մասին» գիրքը, որին անդրադառնում ենք տարիներ անց՝ նկատի ունենալով նրանում տեղ գտած քերականական գիտելիքների կարևորությունը<sup>1</sup>:

Լավ է, որ նաև մեր օրերում են լույս տեսնում նման գրքեր, որոնք անհրաժեշտ են հայ բազմադարյան գրավոր մշակույթի վերաբերյալ քաղվածաբար տեղեկացում ունենալու համար, որովհետև դա այն մշակույթն է, որ անսպառ աղբյուր է հայերենի և հայ հանրության վերաբերյալ լիաձավալ պատկերացում ունենալու, թեկուզև իմացածի վրա ավելին դնելու առումով:

Այս ժողովածուի մեջ արժանի տեղ են գտել նաև հայ քերականություններում հայտնի այն հատվածները, որոնք վերաբերում են հայոց այբուբենի գյուտին և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ազգաշահ առաքելությանը<sup>2</sup>: Սա մի արժեքավոր գիրք է. որ ունի մատենագիտական (աղբյուրագիտական) մեծ արժեք՝ կազմված հմուտբանասերների տևական աշխատանքով:

Ընդգրկված են Դիոնիսիոս Թրակացու (մ. թ. ա. 170-89 թթ.) «Արուեստ քերականի» (Τεχνή γραμματικη) դասագրքի թարգմանությունից բացի՝ տասնութ անուն-քերականից քաղված հատվածներ<sup>3</sup>. Այդ երախտավորներն են՝ Դավիթ քերական (VI դ.), Մովսես Քերթոզ (V դ. - VI դ. 1-ին կես), Անանուն Մեկնիչ (?), Ստեփանոս Սյունեցի ( ? – 735 թ. ), Համամ Արևելցի (IX դ.), Գրիգոր Մագիստրոս (985-1058 թթ.), Արիստակէս Գրիչ (XII դ.), Վահրամ Բաբունի (?), Վարդան Արևելցի (1198-1271 թթ. ), Հովհաննես Երզնկացի (1230-1298 թթ.), Գեորգ Սկևռացի (1246/47-1301 թթ.), Եսայի Նշեցի (1260/5-1338 թթ.),

<sup>1</sup> Հայ մատենագիրները հայոց գրի և թարգմանչաց մասին, աշխատասիրությամբ՝ Հ. Քյոսեյանի և Վ. Դերիկյանի, Ե., «Անկյունաքար» հրատ., 2019, 708 էջ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 423-530:

<sup>3</sup> Հարկ ենք համարում հիշել այդ քերականներին՝ իբրև լրացուցիչ իրազեկում տվյալ բնագավառի երևելի երախտավորների մասին, որոնց աշխատանքներին, ի դեպ, մեզանում ոչ բոլոր ուսումնասիրողներն են տեղյակ կամ նկատի են ունեցել դրանք իրենց համապատասխան աշխատություններում:

Հովհաննես Ծործորեցի (1282/83-1340 թթ.), Առաքել Սյունեցի (1350-1422 թթ.), Կիրակոս Երզնկացի (? – 1355 թ.), Տիրատուր Կիլիկեցի (XIV դ.), Գրիգոր Տաթևացի (1346-1409 թթ.), Դավիթ Ջեյթունցի (1530/1540-1619 թթ.), Պետրոս Աստապատեցի (XVII դ.)<sup>4</sup>:

Այս ժողովածուից ավելի մատչելի ձևով տեղեկանում ենք, թե միջնադարյան քերականության բնագավառում ո՛ր մեկնիչը կամ գրագետն է ավելի լայնորեն անդրադարձել գրերի գյուտին և որպիսությանը, առավել ևս այն, թե ո՛ր հեղինակի աշխատանքում է մեսրոպյան գրի տեսությունն ավելի ամբողջական ձևով ներկայացվում: Սրանք հարցեր են, որոնք ներկայումս նույնպես հետաքրքրական են, մանավանդ հայերենի պատմական հնչյունաբանությանը վերաբերող արդի տարբեր հարցադրումների տեսանկյունից:

Մինչև այս էլ գիտեինք, իսկ այս դեպքում ավելի ևս տեղեկանում ենք, որ առավել ծավալուն և ընդգրկուն տեղեկություններ և տեսական ուղղվածություն ունեն հիշյալ հեղինակներից հատկապես Գրիգոր Մագիստրոսի, Վարդան Արևելցու, Հովհաննես Երզնկացու, Եսայի Նչեցու, Հովհաննես Ծործորեցու, Առաքել Սյունեցու Պետրոս Աստապատեցու քերականությունները:

Այնպես որ ինչպես հայ մատենագրության այլ ժանրերում եղած տեղեկությունների գրի գյուտի և որպիսության մասին, այնպես և քերականական և հարակից բնույթի աշխատություններում պարզորոշ, բնագրային տեղեկություններով նկատելի է հայոց գրի ստեղծման ինչույթյունը, գրային համակարգի («այբուբենի») կառուցվածքային տարատեսակությունը:

Համահավաք այս գիրքը, որ մի տեսակ քրեստոմատիկ աշխատություն է, մեծ դրվատանքի արժանի նպաստ է հայագիտությանը: Այն, ի դեպ, բացի քերականական մեկնություններից կատարված բանաքաղություններից, նույնպիսին գտնում ենք այլ բնույթի աղբյուրներում՝ պատմագրական, ներբողական-քարոզխոսական, դավանական և մեկնաբանական, սրբոց թարգմանչաց գանձարանային կանոններ, չափաճո գործեր

---

<sup>4</sup>Այս քերականների հիմնական մասի աշխատություններին 1950-ական թթ. Անդրադարձել է Գ. Զահուկյանը՝ գործ ունենալով բնագրերի հետ, այնինչ հետագա շատ ուսումնասիրողներ հարկավոր դեպքում հիմնվել են միայն մեծանուն լեզվաբանի կողմից կատարվածի վրա, իսկ հիշյալ հեղինակների մյուս մասին ամենևին չեն անդրադարձել: Ըստ այսմ ևս մեծանում է գրայնությունը գրքի նշանակությունը:

և ակրոստիկոսներ, այլև տարաբեր մանր բնագրեր, նոր շրջանի գրականություն և այլն:

Հայ քերականների աշխատանքներում նկատում ենք նաև այնպիսի տերմիններ և տերմինային անվանումներ, հատկապես ուշ միջնադարի լեզվամտածողությամբ կազմված բառեր, որոնք չենք գտնում բառարաններում, ուստի կարոտ են լեզվաբանական հատուկ ուսումնասիրության:

Գիրքն ունի գործնական-կիրառական կողմ. դա այն է, որ հայ հին և միջնադարյան մատենագրական աղբյուրներին ոչ բոլոր մասնագետներն են տրամադիր այդ աղբյուրների հետ գործ ունենալու (որն, ինչ խոսք, ավստոսալի է), ուստի այս գրքով կարելի է գիտական մանրամասն տեղեկություններ քաղել հայերեն գրերի և թարգմանիչների, ինչպես նաև հետագա մեկնիչների քերականագիտական ներդրման վերաբերյալ:

30/01/2023

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնում շուրջ 30 տարի անց վերաբացվեց փորձառական հնչյունաբանության լաբորատորիան:

Նախկինում այն հագեցած է եղել ծայնի ուսումնասիրման համար նախատեսված համապատասխան տեխնիկայով՝ օսցիլոգրաֆ, ինտոնոգրաֆ և այլն: Այժմ այդ հին տեխնիկան փոխարինվել է ժամանակակից սարքավորումներով և մասնագիտական համակարգչային ծրագրերով:

Աշխարհում վերջին տարիներին փորձառական հնչյունաբանության բնագավառը մեծ զարգացում է ապրում: Այժմ կիրառվում են նոր մեթոդներ, օգտագործվում են համապատասխան սարքեր, կազմվում ծրագրեր, որոնք հնարավորություն են տալիս թափանցելու բանավոր խոսքի չուսումնասիրված խորքերը, առաջ են քաշվում նոր խնդիրներ ու հարցադրումներ, ճշգրտվում և պարզաբանում են հնչյունական շատ կնճռոտ հարցեր:

ՀՀԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի հնչյունաբանական լաբո-

րատորիայի հնարավորությունները աժմ թույլ են տալիս համահունչ քայլելու ընդհանուր փորձառական հնչյունաբանության արտասահմանյան նորագույն նվաճումների հետ:

Թվայնացումը մուտք է գործել մարդկանց կյանքի բոլոր բնագավառները՝ գիտություն, կրթություն, բիզնես, տնտեսություն, կենցաղ, բանկային համակարգ և այլն: Թվայնացման նման գործընթացից, բնականաբար, դուրս է նաև լեզվաբանությունը, մասնավորապես փորձառական հընչյունաբանությունը:

Այժմ նորագույն համակարգչային ծրագրերի շնորհիվ հնարավոր է այս նոր տեխնիկայով համեմատաբար կարճ ժամանակահատվածում կատարել ծայնային վերլուծության մեծածավալ աշխատանքներ:

Լաբորատորիայի հիմնական նպատակը ժամանակակից հայերենի բոլոր դրսևորումների հնչյունաբանական հետազոտություններ կատարելն է: Օրինակ, լաբորատորիան հնարավորություն կընձեռի ոչ միայն գրական արևելահայերենի հնչյունական համակարգի վերաբերյալ փորձառա-

կան հետազոտություններ կատարելու, այլ նաև օգտակար կլինի հայերենի բարբառների հնչյունական իրողությունները, ինչպես նաև արևմտահայերենի հնչյունական համակարգի իրողություններն ուսումնասիրելիս:

Լաբորատորիան կարևոր նշանակություն ունի ոչ միայն լեզվի ինստիտուտի, այլ նաև հանրապետության բոլոր գիտակրթական հաստատությունների համար: Այն կծառայի նաև ինստիտուտի այլ բաժիններին՝ արևմտահայերենի, ժամանակակից հայոց լեզվի և այլն, իրականացնելու հնչյունական համակարգերի փորձառական զուգադրական ուսումնասիրություններ, որոնք կբերեն հետաքրքիր եզրահանգումների, ապշեցուցիչ և հիանալի հայտնագործությունների: Լաբորատորիան ունի պատրաստակամություն համագործակցելու գիտական այլ հաստատությունների հետ գիտահետազոտական տարբեր աշխատանքների իրականացման գործում:

09/02/2023

ՀՀ ԳԱԱՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը այսօր հյուրընկալել էր ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի 4-րդ

կուրսի ուսանողներին:

Ուսանողների 1-ին խումբը ծանոթացավ բաժնի ընդհանուր գիտական աշխատանքներին:

Բաժնի վարիչ բ. գ. թ. Գ. Գրիգորյանը ուսանողներին ներկայացրեց փորձառական հնչյունաբանության արդի հիմնախնդիրները, ինստիտուտի փորձառական հնչյունաբանության միակ լաբորատորիայի աշխատանքների համառոտ նկարագիրը: Բաժնի գիտաշխատող բ. գ. թ. Ս. Հովհաննիսյանը ուսանողներին ներկայացրեց կիրառական լեզվաբանության նորագույն ուղղությունները, ինչպես նաև նյարդալեզվաբանության, հոգելեզվաբանության և կլինիկական լեզվաբանության տեսանկյուններից լեզվի ուսումնասիրության նրբությունները, համաշխարհային նվաճումները և խնդիրները:

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների 2-րդ խմբին ներկայացվեց կիրառական լեզվաբանության և բաժնի աշխատանքների համառոտ պատմությունը:

Բաժնի վարիչը ուսանողներին պատմեց հնչյունների գործիքային ուսումնասիրության յուրահատկությունները վերջիններիս դերը ընդհանրապես լեզվի հետազոտության տարբեր ուղղություններ

րի համար: Ս. Հովհաննիսյանը ուսանողներին ներկայացրեց մարդաբանական (անթրոպոլոգիական) լեզվաբանության բուն առարկան և խնդիրները, ընդ որում անվերծանելի կամ դժվար ընթերցվող ձեռագրերը՝ որպես կիրառական լեզվաբանության ուսումնասիրության առարկա, ինչպես նաև կլինիկական լեզվաբանության որոշ հարցեր և երկլեզվության արդիական մի շարք հիմնախնդիրներ:

11/02/2023

Ս. թ. փետրվարի 10-ին, ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի աշխատակիցները հյուրընկալվեցին ՀԲԸՄ-ի Հայկական համալսարանի (ՀՀՀ) անձնակազմի կողմից: Այցելությունը ճանաչողական բնույթ ուներ: Երկուստեք ներկայացվեցին հաստատությունների գործունեությունը, աշխատանքները, քննարկվեցին փոխհամագործակցության եզրերը, եղան մի շարք առաջարկներ:

Հետաքրքրական քննարկման ընթացքին պարզ դարձավ, որ մի շարք ծրագրեր կարելի է համագործակցաբար իրականացնել:

Վերջում, արևմտահայերենի

բաժնի աշխատակիցները շնորհակալություն հայտնեցին ջերմ հյուրընկալության համար և առաջարկեցին հաջորդ հանդիպումը իրականացնել ԳԱԱ ՀԱճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

ՀՀՀ-ի աշխատակիցները մեծ սիրով ընդունեցին փոխադարձ այցելության առաջարկը:

Հաջորդ հանդիպումը նախատեսվում է իրականացնել առաջիկա շաբաթվա ընթացքում:

21/02/2023

Այս տարի ինքնատիպ ձևով նշեցինք Մայրենիի միջազգային օրը:

Մի քանի տասնյակից ավելի հայերեն բարբառներից նմուշներ ներկայացվեցին առցանց միջոցառման ընթացքում, և շուրջ հարյուր մասնակիցները նույնիսկ չէին կամենում հրաժեշտ տալ միմյանց: Նրանք հինգ ժամ շարունակ վայելում էին մեր մայրենի լեզվի քաղցրությունը:

Ինչ խոսք, հիանալի միջոցառում էր՝ լեզվի ինստիտուտի կողմից կազմակերպված:

27/02/2023

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի լեզվաբանության ամբիոնի «Ընդհանուր և հայլեզվաբանություն» կրթական

ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողները իրենց գիտահետազոտական պրակտիկան անցան Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի փորձառական հնչյունաբանության նորաբաց լաբորատորիայում:

Բաժնի վարիչ Գ. Գրիգորյանի ղեկավարությամբ ուսանողները ծանոթացան ժամանակակից սարքավորումներին, խոսքի վերլուծության նորագույն ծրագրերին, հնչյունի ֆիզիկական բնութագրերին, Praat ծրագրով կատարեցին փորձարկումներ:

Նրանք նաև հակիրճ տեղեկություն ստացան կիրառական լեզվաբանության բաժնի աշխատակիցների կողմից կազմած համաբարբառների, դրանց ստեղծման և նշանակության մասին:

Պրակտիկայի ղեկավարի հանձնարարությամբ ուսանողները կատարեցին գիտափորձեր, որոնց արդյունքները մտադիր են ներկայացնել լեզվաբանական որևէ գիտաժողովում կամ գրել հոդված լույս տեսնող ամսագրերում:

Մագիստրանտներն իրենց պրակտիկան ամփոփեցին տեսասահիկների միջոցով ներկայացված ելույթներով, որոնցում արտացոլված էին պրակտիկայից

ստացած գիտելիքները:

30/03/2023

2023թ.մարտի 27-ին ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնում ավելի քան 30 տարի անց վերաբացվեց հանրապետությունում միակ փորձառական հնչյունաբանության լաբորատորիան:

Բացմանը ներկա էին ԳԱԱ, բուհերի, գիտակրթական կենտրոնների ներկայացուցիչներ, ուսանողներ, հյուրեր:

Այն բացվեց ՀՀ ԳԱԱ ֆինանսավորմամբ, լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանի աջակցությամբ և սատարումով և կիրառական լեզվաբանության բաժնի վարիչ Գ. Գրիգորյանի ջանքերով: Լաբորատորիան անվանակոչվեց Բ. Գ. դ., հնչյունաբան Ա.Հ. Խաչատրյանի անունով:

Լաբորատորիան կարևոր նշանակություն կունենա ոչ միայն լեզվի ինստիտուտի, այլ նաև հանրապետության բոլոր գիտակրթական հաստատությունների համար: Այն կծառայի նաև ինստիտուտի այլ բաժիններին՝ արևմտահայերենի, ժամանակակից հայոց լեզվի և այլն, իրականացնելու հնչյունական համակարգերի փորձառական զուգադրական ու-



սումնասիրություններ, որոնք կբերեն հետաքրքիր եզրահանգումների և հայտնագործությունների:

Կիրառական հնչյունաբանության լաբորատորիայի հնավորությունները թույլ կտան համահունչ քայլելու փորձառական հնչյունաբանության արտասահմանյան նորագույն նվաճումների հետ:

Լաբորատորիայի բուն նպատակը լեզվի բոլոր դրսևորումների հնչյունաբանական հետազոտություններ կատարելն է: Օրինակ, լաբորատորիան հնարավորություն կտա ոչ միայն գրական արևելահայերենի հնչյունական համակարգի փորձառական հետազոտություններ կատարել, այլ նաև օգտակար կլինի հայերենի բարբառների հնչյունական իրողությունները, ինչպես նաև արևմտահայերենի հնչյունական համակարգն ուսումնասիրելիս:

Լաբորատորիայի դռները բացեն բոլոր այն անձանց և գիտական հաստատությունների առջև, որոնք հետաքրքրված են այս բնագավառով, և լաբորատորիայի աշխատակիցները պատրաստ են գործակցելու նրանց հետ:

21/04/2023

Ս. թ. ապրիլի 21-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատա-

կան լեզվաբանության բաժնի հերթական նիստը նվիրված էր ականավոր լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադ., բ. գ. դ., պրոֆ. Էդ. Բ. Աղայանի ծննդյան 110-ամյակին: Նախատեսված էր անցկացնել գիտական զեկուցումներ և աշխատանքային քննարկումներ, որոնք վերաբերելու էին ականավոր հայերենագետ-լեզվաբանի հիշատակին:

Չեկուցումներով հանդես եկավ բաժնի աշխատակիցների մի մասը, որոնց խոսքն ուղղված է. Բ. Աղայանի գիտական ժառանգության տարբեր կողմերին:

Բաժնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը անդրադարձավ Էդ. Աղայանի բառարանագրական աշխատանքների վերլուծությանը և գնահատությանը: Բ. գ. թ. Ն. Մ. Սիմոնյանը բավականին մանրամասն և ստույգ դիտարկումներով ներկայացրեց անվանի գիտնականի տեսական սկզբունքները և մոտեցումները հայերենի բառաքննական և ստուգաբանական հետազոտությունների վերաբերյալ: Աղայանը, հիրավի, ունի հսկայական ներդրում հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում, որի ամենացայտուն օրինակը նրա հիշյալ բնույթի աշխատանքներն են: Բ. գ. թ., դոց. Մ.Ա. Սարգսյա-

նի զեկուցման թեման Էդ.Աղայանի՝ որպես հայագիտության նվիրյալներից մեկի գիտական հարուստ ժառանգությունը:

Բաժնի նիստում թե՛ զեկուցումները և թե՛ հարակից ելույթները տեղի ունեցան բուն թեմայի գիտական պատշաճ քննարկման և մտքերի փոխանակման պայմաններում:

Ձեկուցումների ընթացքում արժաթմված հարցերով, կարելի է ասել, ամբողջացավ Էդ. Բ. Աղայանի գիտնականի, լեզվաբանի, դասախոսի և կրթության կազմակերպչի առինքնող կերպարը:

Ամփոփելով զեկուցման արդյունքները՝ Վ. Գ.Համբարձումյանը նշեց հետևյալը. «Այս միջոցառումը յուրօրինակ հարգանքի տուրք է անվանի գիտնականի հիշատակին, ևս մեկ անգամ հիշելու, ներկայացնելու նրա գիտական ժառանգության հիմանական բնագավառները՝ ընդհանուր տեսական լեզվաբանություն, բառարանագրություն և բառաքնություն, ստուգաբանություն: Երկար տարիներ լեզվի ինստիտուտի այս բաժինը ղեկավարած գիտնականը եղել է ուսուցիչ հայերենի ընդհանուր և համեմատական լեզվաբանության զարգացման գործում»:

27/04/2023

2023 թ. ապրիլի 27-28-ին ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կայացավ «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հերթական նստաշրջանը: Թեմատիկ բազմազանությամբ աչքի ընկնող զեկուցումները նվիրված էին հայերենագիտության ամենատարբեր բնագավառների:

Ինչպես միշտ, բարբառագիտական հետազոտություններով զբաղվող գիտաշխատողները հանդես եկան հայերենի բարբառների ուսումնասիրությունների ասպարեզում իրենց ձեռքբերումները ներկայացնող զեկուցումներով: Հնչեցին նաև գրական արևելահայերենի և արևմտահայերենի բառաքնական և ստուգաբանական հետազոտությունների արդյունքներին նվիրված զեկուցումներ, որոնք բոլորն էլ հետաքրքիր էին և շատ դեպքերում՝ առողջ բանավեճ հարուցող:

ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վ. Կատվայանն իր ամփոփիչ խոսքում գոհունակությամբ նշեց, որ մեծ լեզվաբան, ակադ. Գ.Բ. Ջահուկյանի հիշատակին նվիրված գիտաժողովն արդեն մեկուկես տասնամյակից ավելի ծառայում է իր ստանձնած առաքելությանը՝ հայագիտության և

հայերենագիտության զարգացման կարևոր գործին:

29/05/2023

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի երիտասարդ գիտնականների խորհուրդը մայիսի 29-ին, ուշագրավ զուգահեռությամբ, տոնում էր ընդհանուր և համեմատական լեզվաբանության, արևմտահայերենի, բառարանագրության բաժինների հիմնադրման 10-ամյակը:

Կազմակերպված միջոցառումը նպատակ ուներ հանրակրթական դպրոցի աշակերտներին և բուհերի ուսանողներին ընդգրկելու լեզվի գիտական ուսումնասիրության աշխատանքների մեջ և հետաքրքրություն առաջացնելու ընդհանրապես գիտական աշխատանքի հանդեպ:

Միջոցառման թեմատիկային վերաբերող ուշագրավ դիտարկումներով հանդես եկան ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը, բառարանագրության բաժնի վարիչ բ. գ. թ. Ա. Ս. Գալստյանը:

Ուսանողները և աշակերտները հնարավորություն ունեցան ինստիտուտի վաստակաշատ գիտնականների և երիտասարդ գիտնականների շարքում ներկայաց-

նելու նաև իրենց գիտական առաջին քայլերը, մասնակցելու միջոցառումը ամփոփող մասնագիտական քննարկմանը:

Ձեկուցում ներկայացրած հյուրերը ինստիտուտի կողմից ստացան վերոնշյալ բաժինների աշխատանքներին առնչվող գրքեր:

01/06/2023

«ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժինը մայիսի 31-ին սկսեց ինստիտուտի 80-ամյակին նվիրված սեմինարների շարքը, որը վերաբերում է էլեկտրոնային պաշտոնական հաղորդակցման յուրահատկություններին և ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու եղանակներին:

Շարքի առաջին սեմինարը վերաբերում է էլեկտրոնային նամակ գրելուն: Սեմինարն անցկացնում էր բաժնի վարիչ բ. գ. թ. Գ. Գրիգորյանը»:

15/06/2023

Երևանում հունիսի 13-14-ին տեղի ունեցավ «Գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը՝ տնտեսության արդիականացման շարժիչ ուժ» խորագրով հայ-ռուսական գիտակրթական

երկօրյա համաժողովը: Համաժողովի ընթացքում տեղի ունեցան երկու երկրների առաջատար բուհերի և գիտական հաստատությունների ներկայացուցիչների բազմախորհրդակ հանդիպումներ և քննարկումներ:

Համաժողովի շրջանակում Հայաստանի և Ռուսաստանի գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները քննարկեցին երկու երկրների գիտակրթական հաստատությունների միջև առկա գործակցության տարատեսակ հարցեր և նոր կապերի հաստատման հնարավորություններ:

Հայ-ռուսական գիտակրթական համաժողովի շրջանակում տեղի ունեցավ ՀՀ և ՌԴ գիտությունների ազգային ակադեմիաների երիտասարդ գիտնականների խորհուրդների համատեղ նիստ: Նիստին ՀՀ ԳԱԱ Երիտասարդ գիտնականների միավորումը մասնակցում էր ընդարձակ կազմով, որում ընդգրկված էին տարբեր ինստիտուտների ներկայացուցիչ երիտասարդ գիտաշխատողներ:

Նիստի նախագահում էին ՀՀ ԳԱԱ Երիտասարդ գիտնականների միավորման նախագահ Բ. Գ. Թ. Ս. Հովհաննիսյանը և ՌԴ գիտությունների ազգային ակադեմիայի երիտասարդ գիտնա-

կանների խորհրդի նախագահ Ֆ. մ. Գ. Թ. Ա. Կոտելնիկովը:

Համանախագահները ներկայացրին երիտասարդ գիտնականների գործունեությունը, առկա խնդիրները, հետագա համատեղ քայլերի հնարավորությունները հատկապես միջգիտաճյուղային ոլորտների զարգացման ուղղությամբ, դիտարկվեցին նաև գիտական համակարգի երիտասարդացման, փոխադարձ վերապատրաստումների և մի շարք այլ հրատապ գիտակազմակերպական հարցեր:

Համաժողովին ելույթներ ունեցան ՀՀ ԳԱԱ Երիտասարդ գիտնականների միավորման ներկայացուցիչներ Բ. Հովհաննիսյանը (ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի ինստիտուտ), Մ. Մուրադյանը (ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտ), Ա. Սողոյանը (ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտ), Հ. Հակոբյանը (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ), որոնք անդրադարձան երիտասարդ գիտնականների առջև ծառայած խնդիրներին, համագործակցության հեռանկարներին և առկա գործակցային կապերի բարելավմանը:

18/06/2023

ՀՀ Շիրակի մարզում ԳԱԱ լեզ-

վի ինստիտուտի բարբառագետներն իրականացնում ենք գրանտային ծրագիր՝ տարածաշրջանի բարբառային համապատկերը ներկայացնելու նպատակով:

Հայտնի է, որ վերջին հարյուրամյակների ընթացքում Շիրակի մարզի բազմաթիվ գյուղերում տեղաբնիկների կողքին բնակություն են հաստատել Արևմտյան Հայաստանի տարբեր գավառների ջարդերից ու կոտորածներից փրկվածների սերունդները՝ այս կամ այն չափով պահպանելով իրենց պապերի խոսվածքը:

Հայոց ցեղասպանությանը հաջորդած գաղթականների նոր ալիքի հետ Շիրակ աշխարհի բազմաթիվ գյուղերում բնակություն հաստատեցին Արևմտյան Հայաստանից գաղթածների հոծ խմբեր Մուշից, Բասենից, Կարսից, Էրզրումից և այլն:

Հին ու նոր գաղթականների և տեղաբնիկների խոսվածքների փոխազդեցությամբ ձևավորված լեզվական միջավայրը հետաքրքիր ուսումնասիրությունների նյութ է տալիս:

Այս տարածքում գերակշռում է, իհարկե, Կարնո բարբառը, որն առ այսօր կենդանի, գործուն է և որպես հաղորդակցման միջոց է ծառայում Գյումրիում և մի շարք գյուղերում: Մարզի Գետք, Ազա-

տան, Մարմաշեն և այլ գյուղերում, տեղաբնիկներից բացի, կան նաև 19-րդ դարասկզբին Կարսից և Էրզրումից այստեղ գաղթածների սերունդներ: Զգալի թիվ են կազմում նաև Մեծ եղեռնից մազապուրծ գերդաստանների 3-4-րդ սերնդի ներկայացուցիչները:

Մարզում կան նաև հիմնականում գաղթականներով բնակեցված գյուղեր, որոնցում տասնամյակներ առաջ իրականացվել են հավաքչական աշխատանքներ՝ բարբառախոս անձանցից գրառելով իրենց մայրենի խոսվածքները:

Նմանատիպ գյուղերում, բնականաբար, հետագա տասնամյակների ընթացքում առաջացել են միջբարբառային խոսվածքներ: Իսկ վերջին տասնամյակների ընթացքում (հատկապես ավերիչ երկրաշարժից հետո) նկատելի է, որ զգալիորեն պակասել է բնակչությունը:

Հետաքրքիր է, որ Գետք, Ազատան, Մարմաշեն գյուղերում տեղաբնիկների խոսվածքը Արևելյան բարբառախմբին է պատկանում, սակայն հավասարապես գործառում են նաև *կը* ճյուղին հատուկ ձևեր:

Բառային, քերականական, շարահյուսական իրողություններում փոխազդեցական գործոնն առկա

է: Պարբերաբար այցելելով և մեզ հետաքրքրող բարբառային իրողությունների մասին տեղեկություններ քաղելով Շիրակի մարզի բարեհաճ և պատրաստակամ բնակիչներից՝ կարելի է հավաստել, որ աշխատակիցների այցելությունը Գետք, Ղարիբջանյան, Հայկավան, Ախուրիկ, Բայանդուր, Երազգավորս, Առափի, Գուսանագյուղ բնակավայրեր բավականին արդյունավետ էր:

Առջևում դեռ շատ աշխատանք կա իրականացնելու՝ պարզելու համար այս յուրօրինակ մարզի բարբառային համապատկերը: Նմանատիպ ուսումնասիրությունները կարող են օգտակար լինել նաև լեզվի պատմության, ազգագրության և այլ գիտակարգերի համար:

18/08/2023

Հայերենի բարբառների արդի վիճակի ուսումնասիրության պետական ծրագիրը ՀՀ Շիրակի մարզում իրականացնելու ընթացքում Լեզվի ինստիտուտի աշխատակիցներից ծրագրի մեջ ընդգրկվածները արդեն իսկ այցելել են 75 բնակավայրեր՝ կատարելով գրառումներ, ձայնագրություններ և տեսագրություններ՝ հետագայում դրանք դասդասելու և համապատասխան եզրահանգումների գալու համար, այսինքն՝ հավաքչական աշխատանքների եռուն շրջան է աշխատակիցների համար՝ դժվարին, բայց շատ հետաքրքիր և արդյունավետ:

**ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Էդուարդ Աղայան. ծննդյան 110-ամյակ**

---

Սարգսյան Մ. Ա., Էդուարդ Աղայանը արդի հայագիտության նվիրյալ ..... 3  
Սիմոնյան Ն. Մ., Էդուարդ Աղայանը բառագետ, ստուգաբան..... 11

**ՀՈԴՎԱԾՆԵՐ**

Աստվածատրյան Մ.Գ., Պետրոսյան Շ.Բ., Բառաձանցումը որպես ածանցավոր մոդելների ընտրության և դասակարգման հիմք ժամանակակից գերմաներենում ..... 18  
Գալստյան Ա.Վ., Մալխասյան Է.Ռ., Սիլվա Կապուտիկյանի հրապարակախոսության լեզուն..... 26  
Խաչատրյան Գ. Կ., Միջին հայերենի մեջբերվող անորոշ դիմավոր և ընդհանրական դիմավոր միակազմ նախադասությունների քննություն ..... 34

**ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Աղամյան Վ.Ա., Խնդրանքի խոսքային ակտը Լ.Ն. Տոլստոյի «Աննա Կարենինա» վեպում..... 50  
Միքայելյան Ս. Ա., Հայերենում պարսկերենի միջնորդությամբ կատարված արաբական փոխառությունների հնչյունական առանձնահատկություններ..... 64  
Գրիգորյան Գ. Գ., Հայերենի ուժգնության և տևողության փոփոխությունները խոսքի տարբեր ոճերում..... 77

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ**

Սարգսյան Մ. Ա., Համբարձումյան Վ. Գ., Միքայելյան Ս. Ա., Բաղրամյան Ս. Ե., Հայոց լեզվի ուսուցման առանձնահատկությունները Լեհաստանի հայ համայնքում..... 87

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ**

Խաչատրյան Հ.Ռ., Համշենի բարբառին նվիրված ուշագրավ ուսումնասիրություն..... 97  
**ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....** 102  
**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ .....** 109

## СОДЕРЖАНИЕ

*Саргсян М. А.*, Эдуард Агаян: выдающийся созидатель в области арменоведения-3. *Симонян Н. М.* Э. Агаян - лексикологист – этимологист-11. **С т а т ь и:** *Аствацатрян М.Г., Петросян Ш.Б.*, Аффиксация как основа для выделения и классификации производных моделей в современном немецком языке-18. *Галстян А.В., Малхасян Э.Р.*, Язык публицистики Сильвы Капутикян “Не могу молчать”-26. *Хачатрян Г. К.*, Анализ неопределенно-личных и обобщенно-личных односоставных предложений среднеармянского языка, представленных в прямой речи-34. **Д и с к у с с и и о б с у ж д е н и я:** *Адамян В.А.*, Речевой акт просьбы в романе Л.Н. Толстого «Анна Каренина»-50. *Микаелян С. А.*, Фонетические особенности опосредованных с персидского языка заимствований армянского языка -64. *Григорян Г. Г.*, Изменения интенсивности и длительности в разных стилях речи армянского языка -77. **С о о б щ е н и я:** *Саргсян М. А, Амбарцумян В. Г., Микаелян С. А., Баграмян С. Е.*, Особенности преподавания армянского языка в армянской общине Польши-87. **Р е ц е н з и я:-97. К н и ж н о е о б о з р е н и е -102. Н а у ч н а я ж и з н ь -109 .**

## CONTENTS

Sargsyan M. A., Eduard Aghayan: A Distinguished Altruist in the Field Ofarmenian Studies-3. Simonyan N. M. E. Aghayan: Lexicologist-Etymologist-11. **A r t i c l e s:** Astvatsatryan M.G., Petrosyan SH.B., Affixation as a Basis for the Selection and Classification of Derivational Patterns in Modern German Language-18. Galstyan A.V., Malkhasyan E.R., The Language of Silva kaputikyan’s “I cannot remain silent” Collection of Public Speeches-26. Khachatryan G. K., Analysis of Indefinite-personal and Generalized-personal One-membersentences in Direct Speech of Middle Armenian-34. **D i s c u s s i o n :** Adamyan V. A.,The Speech Act of Request in the Novel “Anna Karenina” by L.N. Tolstoy-50. Mikayelyan S. A., Phonetic Features of Indirect arabic Borrowings in armenian from Persian-64. Grigoryan G. G., Intensity and Duration Changes in Different Styles of Speech in Armenian-77. **R e p o r t s.** Sargsyan M. A.,Hambardzumyan V. G.,Mikayelyan S. A., Baghramyanyan S. E., Features of the Armenian Language Teaching in the Armenian Community of Poland-87. **R e v i e w:-97. B o o k r e v i e w s:-102. S c i e n c e N e w s: - 109.**



## Ի Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջի նիստարը լոյս է տեսել 2003 թ.:  
Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ  
ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15  
Հեռ.՝ (+374 10) 565 337  
Կայքէջ՝ [www.language.sci.am](http://www.language.sci.am)  
Էլ.փոստ՝ [lezu.lezvabanutyun@gmail.com](mailto:lezu.lezvabanutyun@gmail.com)

## К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Языкязыкознание”, первый номер которого был издан в 2003г.  
Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна  
РА, Ереван, Лусаворича 15  
Тел.: (+374 10) 565 337  
Веб. сайт: [www.language.sci.am](http://www.language.sci.am)  
Эл.-почта: [lezu.lezvabanutyun@gmail.com](mailto:lezu.lezvabanutyun@gmail.com)

## A C K N O W L E D G E M E N T

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.  
Our address: NAS language institute named after H. Acharyan  
RA, Yeravan, Lusavorich 15  
Phone: (+374 10) 565 337  
Web page: [www.language.sci.am](http://www.language.sci.am)  
E-mail: [lezu.lezvabanutyun@gmail.com](mailto:lezu.lezvabanutyun@gmail.com)

**ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ**  
**LANGUAGE AND LINGUISTICS**

**1(28)**

**2023**

Համարի հրատարակության պատասխանատու Ս. Ե. Բաղրամյան

Ձևավորումը և էջադրումը՝  
Մ. Հ. Խառատյանի

Կազմը՝ Ս. Ս. Արևշատյանի

Հրատ. պատվեր № 1061  
Ստորագրված է տպագրության՝  
Չափսը՝ 60x84<sup>1</sup>/<sub>16</sub> տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 100 օրինակ:  
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: